ՅԱՌԱՐԿ

ԺԲ· ԴԵԿՏԵՄԲԵՐ 1896 Թ·



ՀԲԵՄՔԵՆԵՔ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՐԱՐԱՏ

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ԱՆԿԱՓԱՐԾԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ.

ԱՄՍԱԳԻՐ

ՌՅԽԵ. Լ. ՏԱՐԻ | ՀԱՅԱՔԻ ԵՊԻՊՈՏԱՄԱՆԵՔՈՒԹԻՒՆ | ԴԵԿՏԵՄԲԵՐ 1896 Թ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԱՆՓԱՌՈՒՆԱԿ ՏԱՐԱՎԵՐՋԸ.

„Տէր, առ ո՞վ երթիցուք. բանս կենաց յաւիտենականաց ունիս“:

Յովհ. Զ. 69.

Կանգնած է Նա անյատակ ծովի անապատ ափում... Ճշմարտութեան Վարդապետը, մարդկութեան Փրկիչը՝ միայնակ, տխուր.... Ժողովուրդի բազմութիւնը, որ երէկ բարձրակոչ աղաղակներով փառաբանում էր Նորան, ձեռքերի վերայ բարձրացնել, թագաւոր հռչակել էր կամենում՝ երէկ, երբ Նա՝ աւելի հարուստ քան երկրի իշխաններից մէկն ու մէկը, սեղան էր բացել ու խնճոյք կազմել մերկ դաշտի մէջ, աւելի առատ քան նախամարգարէն Մովսէս՝ օրհնում, երկնքից մանանայ էր իջեցնում, օրհնում էր՝ և անապատի քարերը հաց էին դառնում ու կշտացնում — դուռդադուռդ դէպի քաղաք է դիմում այսօր, դէպի բարութեամբ ու զուարճութիւններով՝ այո՛ նաև մեղքով ու ապականութեամբ լի Կապառնաումը... հեռանում են օտարները, հեռանում են նաև մի շարք մօտիկ, հաւատարիմ աշակերտ համբուրուածներ. մի փոքրիկ խումբ է միայն մնացել, երերուն ու շուարած՝ դիմէ՞ արդեօք ա՛յնտեղ, ուր ամէնքն են դիմում, ուր հացն են

բաշխում՝ թէ մեայ Վարդապետի մօտ՝ այն Վարդապետի՝ որ Իւր գլուխը դնելու տեղ չունէր՝ բայց խօսում էր՝ որպէս «ոչ երբէք խօսեցաւ մարդ»... Եւ Նա կանգնած է տխուր ու հարցնում՝ «Մի՞թէ և դուք կամիք երթալ»... Պատի՛ւ ու բիւր երանի թշուառ մարդկութեան՝ երբ գտնուեցաւ գոնէ մէկը իւր որդիներից՝ որի վէմ հաւատը չսարսեց փորձութեան այդ ահաւոր բոպէում՝ մի Պետրոս՝ որ բացականչել կարող էր՝ «Տէ՛ր՝ առ ո՞վ երթիցուք՝ բանս կենաց յաւիտենականաց ունիս՝ և մեք հաւատացաք և ծանեաք՝ եթէ Դո՛ւ ես Քրիստոսն Որդի Աստուծոյ»՝ եթէ կարես ասել՝ և «քարինքս այսոքիկ հաց լինիցին»՝ «եթէ ոչ հացիւ միայն կէցցէ մարդ՝ այլ ամենայն բանիւ՝ որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ»....

Ահա կանգնած է Նա կրկին անհուն ժամանակի մի անպտուղ եզրի վերայ՝ և մեր առաջ բացուում է նոյնտեսարանը՝ Այդ նոյն ամբոխն է՝ հացիւեաւից ընկած՝ ամէնքն այնտեղ են դիմում՝ ուր կեանք կայ՝ ուր զուարճութիւն կայ՝ ուր դիրք՝ պատիւ՝ փառք վաստակել՝ ուր հարստութիւն դիզել կարելի է՝ ոչ միայն նոքա՝ որոնք աշխարհային հոգսերի մէջ թաղուած էին միշտ՝ գլուխ բարձրացնելու և բարձրագոյն մթնոլորտում անցածները դիտելու միջոց չունէին՝ այլ և այն զաղափարական մարդիկ՝ որոնք երէկ և միւս օրը ազնիւ՝ մարդասիրական զգացումներով էին տոգորուած՝ որոնք ըստ երևութին ամեն բան թողնել և ճշմարիտ Վարդապետի՝ Կեանքի Առաջնորդի ետևից գնալ պատրաստ էին՝ ամէնքը՝ ամէնքը գնում են ուր բազմութիւնն է գնում և աւա՜՝ որքան սակաւաթիւ է ետ մնացածների խմբակը՝ որքա՜ն անհաստատ և անվճռական...«Մի՞թէ և դո՞ւք կամիք երթալ՝» հնչում է մեղմով հալածուած ու միայնակ մնացած Փրկչի ձայնը՝ բայց ո՞ւր է Պետրոս հաւատոյ վէմը՝ որ բազմութեան պատրանքն արհամարհելով՝ արհամարհելով աշխարհի երկիւղն ու հրապոյրները՝ դէպ այն կողմ դիմէր՝ որտեղից այդ ձայնն է կանչում՝ դիմէր ու ձգէր իւր ետևից ճշմարտութեան առաքեալների անձնուրաց գունդը՝ աղաղակելով՝ «Տէ՛ր՝ առ ո՞վ երթիցուք՝ բանս կենաց յաւիտենականաց ունիս»։

Ո՛հ՝ ինչքա՜ն մռայլ է ու անմխիթար այս տարավերջը ամբողջ աշխարհի՝ և յատկապէս մեզ՝ Լուսաւորչի Փարախի ցրուեալ հօտի համար։ —Մի քանի ամիս առաջ գոնէ դեռ կենդանութիւն ու ոգևորութիւն կար՝ հաղարաւոր և հարիւր հաղարաւոր կոկորդներից զայրոյթի ու արդահատանաց բացականչութիւններ էին լսուում։ կորչի՛ թող արիւնածարաւ մարդասպանը՝ օգնեցէ՛ք խեղճ՝ մահուան մատնուած ժողովուրդին՝ բայց ա՜ֆժմ... մարդասպանը շարունակում է դեռ իւր արիւնոտ գործը՝ անտարբեր սառնամանիքի ներքոյ ծածկուում են արեան ու տառապանքի նորանոր զարհուրելի հետքեր՝ և հետզհետէ լռում են ինչպէս յուսահատութեան՝ այնպէս և զարոյթի ու արդահատանաց ձայները՝ բաւական է այլ և՝ ամէնքը յոգնեցան... յոգնեցաւ արդարութեան բողոքը՝ իսկ չարութեան ոգին դիւական քրքիջով իւր յաղթանակն է յայտարարում... տարուայ վերջին։

Մի քանի տարի առաջ դեռ գաղափար կար՝ կային վեմ ձգաումների տէր հոգիներ՝ մարդիկ կային՝ որոնց անունով երդուում էր բազմութիւնը՝ որոնց առաջնորդութեամբ պատրաստ էր կարծես կրակի ու ջրի միջ նետուել՝ ինչպէս ընկել մեռել է այժմ այդ ամէնը՝ ամէն բարձր բան հողի հաւասարուել։ Նիւթական զօրութեան՝ փայլուն ոսկու առաջ խոնարհում են երկրի մեծերից ու իմաստուններից սկսած մինչև յետին ռամիկը՝ բաւական է՝ որ կարողութիւն ունեցողը մաը թափ տայ՝ տհաճութեան նշաններ ցոյց տայ՝ և ահա ամենաբուռն ոգևորութեան փրփուրը նստում է՝ իւր ամանի մէջն է հաւաքուում։ ետ են քաշուում ու կծկուում ամենախիզախ մարտիկները՝ և թոյլ տալիս՝ որ ջուրն իւր ճամբով երթայ՝ իմաստունների խորին խորհրդածութիւնները՝ գիտնականների փայլուն բացատրութիւնները՝ ճարտասանների պերճաբան ճառերը դառնում են տափակ սրամտութիւններ ու ստոր հաճոյախօսութիւններ։

Անզգայութեան այս անապատի՝ այս վատառողջ խեղդուկ մթնոլորտի մէջ ո՞ւր երթայ՝ դէպի ո՞ր կողմ դիմէ բորբոք աւիւնով

ու վառ իղձերով լի մի երիտասարդ, կեանքի և ճշմարտութեան ծարաւ մի հոգի։ Դէպի քաղաքակիրթ լուսաւոր աշխարհը՝ դիտութեան ու արուեստի հրաշաբուխ աղբիւրից խմաստութեան կաթն ըմպելու. սակայն չէ՞ արուեստական է այդ կաթը, քաղցրացնում է քիմքը, բայց ներքին ծարաւը չէ յագեցնում. չէ՞ այդ քաղաքակիրթ աշխարհի մէջ ամենայն օր դէպքեր են տեղի ունենում, որոնք բարոյական սնանկութեան յայտարարներ են՝ ապացոյցներ, որ մարդի կրթութիւնը սրտի կրթութեան հետ զուգընթաց չէ գնում այնտեղ, որ ոսկի չէ այն ամէնը, ինչ որ արուեստը փայլեցնել գիտէ։ — Դէպի բնութեան գիրկը. բայց բնութիւնը սառն է, անտարբեր, ոչ միայն այս մռայլ օրերում, երբ ամպն ու փոթորիկը, ձիւնն ու սառոյցն են իշխում դուրսը, այլ նաև գեղազուարթ գարնան, երբ կանաչում է ու ծաղկում ամենուրեք. բնութիւնը այն ժամանակ է միայն գեղեցիկ, երբ մեր գեղեցիկ զգացումներով հոգի ու շունչ ենք տալիս նորան, ստիպում ենք վերարտադրել մեր սրտի խորքում շարժող գաղտնի յոյզերը. մի կաթիլ այդ յոյզերից աւելի անհուն է և ընդարձակ երբեմն, քան համատարած ծովը մեր առջև. հոգւոյ մի վսեմ թռիչքն աւելի բարձր, աւելի հեռու է սրընում, քան այն ջինջ կապոյտ երկնակամարը, որ մի տիեզերք է պարփակում իւր մէջ։

Ո՞ւր դիմենք ուրեմն. դէպի անցեա՞լը, դէպի այն հրաշալի պատմութիւններով և մեծանուն հերոսներով հարուստ անցեա՞լը, ուր մնոր հոգսերն ու ինչին արարքները հեշտութեամբ մոռացուում են և ամեն ինչ վսեմ, խորհրդաւոր գոյներով է նկարուում ուր բարին՝ ու չարն, ազնիւն ու անարգը արդարութեամբ դատուում են՝ փառք ու պատիժ ստանում։ Սակայն անցեալը մեռած է, մեռած են ամենամեծ հերոսները իսկ ու այլ ևս չեն վերակենդանանայ, անցած են ամենանշանաւոր սխրագործութիւններն ու մեզ նոր կեանք տալ չեն կարողանայ. Դո՛ւ միայն ես կենդանի, Կենդանարար Փրկիչ. Քո կանգնած Եկեղեցին է միայն, որ դժոխքի դռներից չէ յաղթահարուում՝ այն մի, ընդհանրական, սուրբ եկեղեցին, ուր ժողովուում են Քո սուրբ անուան առաջ ծունկ խոնարհողները, չօր հոգւով և ճշմարտութեամբ երկրպագողները. ուր խոստացար լինել և ես միշտ՝ կենդանի և կենդանարար, որ հինը նոր ես դարձնում, ամենակուլ ժամանակը վերանորոգում։ որ միշտ մանուկ ես և միշտ ծեր, միշտ ներկայ և միշտ ապառնի, միշտ մծամիկ քեզ կարօտով դիմողներին և ամէնքի կարօտը լցուցանող. որ Քո կենսառատ խօսքով ամենաապառաժ սրտերն անգամ կակղացնել, թշուառութեան ամենամութ անկիւններում լոյս և մխիթարութիւն սփռել կարող ես. «Ցէ՛ր, առ ո՞վ երթիցուք. բանս կենաց յաւիտենականաց ունիս»։

Կ. Վ.

ԱՍՏՈՒԾՈՅ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ ՏԱՆՈՂ, ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ.

Երբ այն սրբազան լերան ստորտում Յիսուսի շուրջ կուտուել էր ժողովրդի բազմութիւնը լսելու համար Նորանից, թէ ո՞ւր է, ե՞րբ պէտք է գայ Երկնքի արքայութիւնը, որի մերձ լինելը Նա աւետել էր, և թէ ինչ պէտք է անեն իրենք այդ արքայութիւնը ժառանգելու համար՝ Նորա արտասանած առաջին խօսքն էր. «Երանի հոգւով աղքատներին, որովհետև նոցանն է Երկնքի արքայութիւնը»։ Դորանով ի հարկ է Նա չկամեցաւ ասել, թէ իւր ունկնդիրների մէջ արդէն կային մարդիկ, որոնք արքայութեան մանակից էին, կամ իրենք իրենց կարող էին այդ արքայութիւնը ձեռք բերել. աղքատ լինել մի բան չունենալ է նշանակում և՝ ոչ ունենալ. իսկ ով Երկնքի արքայութիւնն ունի, ունի արդէն ամենամեծ բարիքը, աղքատ չէ ուրեմն։ Մատթ. Ի. 11. Յիսուս բոլոր մարդոց անխտիր չար է անուանում և չէր կարող մի ուրիշ անգամ առիթ տալ ենթադրելու, թէ նոցա մէջ բարիներ, արդարներ ևս կան։ Իւր հրապարակային գործունէութիւնը սկսում է Նա, ինչպէս և Յովհաննէս Մկրտիչ, բոլոր մարդոց ապաշխարութիւն քարոզելով՝ ապաշխարութիւ-

նը, այսինքն հոգևոր կերպարանափոխութիւնն ու վերանորոգութիւնը, Երկնքի արքայութիւն մտնելու համար իբրև պայման դնելով՝ չընդունելով ուրեմն, որ նոցա մէջ գտնուում էին արդէն արքայութեան համար պատրաստներ։ Եւ այսպէս, երբ Նա իւր աստուածային բերանը բաց է անում Երկնքի արքայութիւն աւետելու՝ Նորա աչքը կանգ է առնում ոչ թէ այնպիսիների վերայ, որոնք այդ բարիքն ունէին. բոլոր այդտեղ կանգնողները կարօտեալներ էին, և Նա Ինքը միայն բոլոր բարիքների ամփոփումն, Երկնքի արքայութեան մարմնացումն լինելով՝ կարող էր նոցա կարօտը լցուցանել. ահա բանում է Նա ճանապարհ դորա համար, և այդ ճանապարհով գնալ ու երանութեան հասնել պիտի կարողանային իւր ունկնդիրներից նոքա, որոնք հոգւով աղքատ էին, որոնք զգում էին իրենց հոգևոր կեանքի կարիքներն ու լցուցանել ձգտում, ինչպէս սովորական աղքատները իրենց մարմնաւոր կեանքի կարիքներն են զգում։ Ամեն հրէայ գիտէր, որ Աստուծոյ արքայութեան մասնակից լինելու համար Աստուծոյ հաճելի պէտք է լինել, արդար պէտք է լինել. սակայն՝ մինչդեռ նոցա կարծիքով ամենից արդարները դպիրներն ու փարիսեցիներն էին, որովհետև օրէնքի ամեն մի տառը ճշդութեամբ պահում էին և ուրեմն Աստուծոյ շնորհակալութեան արժանի շատ գործեր ունէին կատարած՝ Քրիստոս մի անգամ ընդ միշտ կամենում է հերքած լինել այդ կարծիքը, ցոյց տալով, որ արքայութիւնը միայն նոցա համար է բաց, որոնք իրենց արդար չլինելը գիտեն և Իրենից՝ Երկնքի արքայութեան հիմնադրից, պէտք է ճշմարիտ արդարութիւն սովորեն, և ընդհակառակն ուրեմն փակ նոցա համար միայն, որոնք իրենց արդէն իսկ արդար են համարում։

Արդ, ո՞րն է այն արդարութիւնը, որ մարդիկ չունէին և Քրիստոս պէտք է տար։—Ինչպէս որ Իւր քարոզութեան սկզբում այդ արդարութիւնը ընդունելու համար Նա պահանջում է աղքատ հոգի, հեզ ու մաքուր սիրտ ունենալ, սգալ, կատարեալ զղջման արտասուքներով մեղքերը լուանալ և, ամբողջապէս Աստուծոյ կամքի առաջ խոնարհելով, Նորանից մխիթարութիւն սպասել՝ այնպէս էլ, իբրև վերջնական նպատակ և եզրակացութիւն Իւր ցոյց տուած արդարութեան, որոշում է Մատթ. Ի. գլխի վերջում՝ կատարեալ լինել, ինչպէս որ մեր Երկնաւոր Հայրը կատարեալ է. իսկ պարզելու համար, թէ արդարութիւնը, աղքատ հոգու մէջ մի անգամ արմատ բռնելուց յետոյ, ինչ ճանապարհով է զարգանում և մեզ այդ բարձրը նպատակին հասցնում՝ Քրիստոս կարևոր է համարում բացատրել նախ, թէ ինչ նշանակութիւն պէտք է ունենայ այս դէպքում հին Կտակարանը, ի՞նչ դեր պէտք է կատարէ։ Եթէ արդարութեան նպատակն է, որ մենք Աստուծոյ նման կատարեալ լինինք, այսինքն գործենք ամեն պարագայում ինչպէս Աստուած Ինքը կգործէր, կամ կկամենար որ մենք գործենք՝ ուրեմն մեզ յայտնի պէտք է լինի նախ Աստուծոյ կամքը. իսկ Աստուած Իւր կամքը յայտնել է արդէն հին Ուխտի մէջ բազմաթիւ պատուիրաններով և պատգամներով։ Բնական է ուրեմն, որ ամեն մի հրէայ, մեզանից ամեն մէկը հարցնէր. արդեօք Քրիստոսի քարոզած արդարութեամբ վեացուո՞ւմ է հին Ուխտի օրէնքը, թէ պահում է Իւր նշանակութիւնը. Նա պատասխանում է. «Մի՛ համարիք, եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս. ոչ եկի լուծանել, այլ լնուլ», և եթէ մեզ համար պարզ լինի, թէ Նա ինչպէս է լցուցանում օրէնքը, կպարզուի նաև արդարութեան ճանապարհը։

Ինչպէս այստեղ, Աւետարանի լերան մօտ, մի պայծառ խաղաղ օր ժողովուել էին ապաշխարութեան ու նոր կեանքի կարօտ մարդիկ՝ գալոց երանութեան հոգեպարար աւետեաց խօսքերը լսելու, այնպէս և երբեմն Սինա լերան հանդէպ Աստուծոյ ընտրեալ ժողովուրդն էր ներկայացել՝ սրբուած ու պատրաստ, և լսել ահիւ և դողութեամբ, որտ ու կայծակի միջից, Երկնաւոր Թագաւորի պատգամները. այդ պատգամներից մէկն էր. «Մի՛ սպանանե՛ր», կտրուկ ու խիստ մի օրէնք, որի անվրէպ պահպանութեան վրայ հսկում է և զանցառութեան համար պատժում նոյն օրէնքը։ Քրիստոս ընդունում է հարկաւ, որ այդ օրէնքը Իւր հօր կամքի արտայայտութիւնն է

և պէտք է կատարուի, բայց գիտէ, որ Իւր Հայրը մի երկրաւոր դատաւոր չէ՝ միայն արտաքին գործողութիւնների վերայ հսկելու և նոցա համաձայն դատելու ընդունակ, այլ որ Նա մարդոց ներքինը ևս տեսնում է և պահանջում, որ այնտեղ թագնուած խորհուրդները նոյնպէս Իւր կամքի համապատասխան լինին, և ոչ միայն արտաքին գործերը. ուստի Քրիստոս ցոյց է տալիս, որ այդ օրէնքն այն ժամանակ միայն կարելի է կատարեալ կերպով լցուցած համարել, երբ խեղդում ենք մեր մէջ ընկերին ճնաեալու, հոգեպէս կամ մարմնապէս զրկանք հասցնելու ամեն մի տրամադրութիւն. երբ ատելութեան և վրէժխնդրութեան փոխարէն մենք լեցուած ենք սիրոյ և ներողամտութեան զգացումներով։—Նոյնպիսի եզրակացութիւն է հանում Նա այն օրէնքի մասին, որի նպատակն էր ընտանիքի սրբութիւնը անձեռնմխելի դարձնել, ինչպէս այստեղ անձի կեանքը. օրէնքը շնութիւն արգելելով ցոյց էր տալիս, որ մարդու և կնոջ մէջ եղած կապը բարոյական է, Աստծուց հաստատուած, և ով ուրեմն այդ կապի խանգարման պատճառ է լինում մեղանչում է Աստուծոյ դէմ. իսկ Քրիստոս բացատրում է, որ այդպիսի խանգարումն տեղի է ունենում ոչ միայն գործով, այլ և սրտի արատաւոր ցանկութիւններով, որ ամեն մի հակաբարոյական շարժում մարդու սրտի մէջ մեղանչումն է Աստուծոյ առաջ, բաժանում է ու հեռացնում Նորանից, և յաւիտենական կորստեան արժանի դարձնում։ Բաւական չէ, ասում է Քրիստոս, որ ամուսնական կեանքը այր մարդու քմահաճութիւնների զոհ չլինի, ինչպէս տրամադրում է մովսիսական օրէնքը՝ պահանջելով, որ ամուսնութիւն հաստատելը և քակելը տեղի ունենայ օրինական սահմաններում որոշ պայմանաթղթերով. նախնական, Աստուծոյ կամքին համապատասխան օրէնքն այն է, այն է կատարեալ ամուսնութիւնը, որ անքակտելի բարոյական կապ է հաստատում երկու անձերի մէջ և այդպիսով ընտանիքի սրբութեան, ամեն մի բարոյական կենցաղավարութեան հիմքը դառնում։

Այսպէս, հետևելով նաև Քրիստոսի յաջորդ բացատրութիւններին՝ ամեն տեղ տեսնում ենք նոյն սկզբունքը. երբ Աստուծոյ կամքը մեզ իբրև օրէնք է յայտնուում արտաքուստ՝ ուշադրութեան է առնում բնականաբար մեր արտաքին յարաբերութիւնները միայն, և մենք ըստ երևութին կատարած ենք լինում Նորա պահանջը, երբ արտաքին արարմունքներով համակերպում ենք Նորան. բայց երբ նոյն կամքը արտայայտուում է իւր բոլոր կատարելութեամբ՝ իբրև մի կենդանի քարոզ՝ ուղղուած դէպի մեր ներքին աշխարհը, իբրև հոգիացած ճշմարտութիւն, որ մեր սրտի և հոգւոյ հետ է խօսում՝ մենք միայն մեր բոլոր ներքին տրամադրութիւնները Նորա համաձայն ուղղելով կատարած կլինինք Նորա պահանջը, որով և օրէնքը իսկապէս լցուցած։ Ահա այս ըմբռնմամբ է, որ Քրիստոս ոչ միայն յիշեալ պատուիրանների նկատմամբ օրէնքը չէ լուծում, այլ նաև այն դէպքում, երբ պատուիրում է «ամենևին մի՛ երդնուլ», կամ «մի՛ կալ հակառակ չարին»։—Օրէնքի իշխանութիւնը մինչև այնտեղ էր հասնում միայն, որ ճշմարտութեան սկզբունքի դէմ եղած հրապարակային զանցառութիւնը պատժել կարող էր. նա պահանջում էր, որ մարդիկ գոնէ որոշ սահմաններում հնազանդին այդ սկզբունքին՝ երբ մի սուրբ վկայութեամբ հաստատել են իրենց խօսքը, դրժելով չանարգեն այդ սրբութիւնը։ Քրիստոս ցանկանում է, որ ճշմարտութիւնը մշտական օրէնք լինի մեր հոգւոյ համար, մեր ներքին կեանքում, որ մենք իմանալով, թէ Աստուած մեր ամեն մի խօսքի համար վկայ է արդէն իսկ, և թէ ամեն իր երկնքի կամ երկրի վերայ Նորանից է ստանում իւր նշանակութիւնն ու սրբութիւնը, այնպէս չվարուինք, որ կարծես Աստուծոյ վկայութիւնն աւելի պակաս գին ունի մեր աչքում, քան մի ուրիշը, և հետևաբար ճշմարտութեան այն օրէնքը, որ մեր հոգւոյ բնական ազատ պահանջը պէտք է լինէր՝ նախապաշարումների գերի դարձնենք։—Օրէնքը, իբրև պաշտպան արդարարութեան, մարդոց անսանձ չարութեան և վրէժխնդրութեան ոգին զսպելու համար որոշում էր, որ ամեն ոք իրեն հասցրած չարեաց փոխարէն հաւասար հատուցումն միայն իրաւունք ունենայ

պահանջելու՝ հանած ատամի փոխարէն ատամ, հանած աչքի փոխարէն աչք, և ոչ աւելի։ Քրիստոս բացատրում է, որ իսկական արդարութիւնն այն ժամանակ միայն կթագաւորէ աշխարհի վերայ, երբ չարութեան դէմ բարութեան զէնքով կռուենք։ Մինչդեռ օրէնքը նորանով է հասկանալի դարձնում թէ արդարութիւնը կայ, որ մարդու կաշուի վերայ զգալ է տալիս արդարութեան պահանջը՝ քրիստոնէական անյիշաչարութիւնը և բարութիւնը մինչև սրտի խորքն են թափանցում հոգւոյ աչքի առաջ կենդանի կերպով պատկերացնում թէ ինչքան աւելի բարձր ու վսեմ է երկնքից բղխող սիրոյ, բարութեան, արդարութեան սկզբունքը՝ մարմնական, ստոր, եսական կրքերի թելադրած վրէժխնդրութիւնից ու չարակամութիւնից։

Այս բոլորից եզրակացնում ենք ուրեմն, որ Քրիստոսի ցոյց տուած արդարութեան առանձնայատուկ կողմն է նորա ներքին, հոգեւոր բնաւորութիւնը։ Աղքատ հոգին, ընդունելով իւր մէջ Երկնքի արքայութեան սերմը՝ պէտք է բեղմնաւորելով աճէր և զարգացնէր Աստուծոյ արդարութեան մի բոյս, որ արժանի լինէր Նորա թագաւորութեան դրախտը փոխադրուելու։ այդ արդարութիւնը պէտք է պտուղներ տար, որոնցից իւրաքանչիւրը հոգու անմիջական արդիւնքն է, ներքին տրամադրութեան անհրաժեշտ արտայայտութիւնը։ Եւ Քրիստոս իրաւամբ կարող էր ասել, թէ Նա աստուածային օրէնքի ոչ մի նշանախեցը անպէտք չէր համարում և անկատար չէր թողնում, որովհետև Նա իւրաքանչիւր մի կէտում թափանցում էր օրէնքի խորքը, որոնում էր աստուածային կամքի այն դիտումը, որի արտայայտութիւն էր եղել այդ օրէնքը, և սովորեցնում էր այդ դիտման համեմատ գործել՝ հոգւով և ճշմարտութեամբ, և ոչ լոկ արտաքին նշաններով։

Այսպէս վարուում է Նա ոչ միայն բարոյական, այլ և ծիսական օրէնքների նկատմամբ։ Յայտնի է, որ Փրկիչը պահում էր Իւր ժողովրդի սովորութիւնները, աստուածպաշտական կարգերը։ մեծ տօներին Նա Երուսաղէմ ուխտ էր գնում, տաճարը Իւր հօր տուն էր անուանում, վճարում էր մինչև անգամ տաճարի տուրքը, Իւր բժշկած բորոտներին պատուիրում էր քահանայի մօտ գնալ և Մովսէսի տուած պատուէրները կատարել, կատարում էր հանդիսաւոր կերպով պասէքը ևն։ սակայն քանի որ ծիսականը աւելի սերտ կապ ունի արտաքին հանգամանքների հետ, ժամանակի և տեղի պայմաններից է կախուած շատ անգամ, և ուրեմն աւելի շուտ փոփոխուել և զեղծումների ենթարկուել կարող է քան բարոյականը՝ Նա ըստ երևութին աւելի մեծ չափով ազատութիւն է գործ դնում այստեղ, և հեռանում մովսիսական օրէնքի դծած սահմաններից։ Նախ սկզբունքով մերժում է Նա այն ամէնը, ինչ որ բուն օրէնքին չէ պատկանում այլ փարիսեցիների ու դպիրների աւելացրածն է, ծերերի աւանդութիւնն է, և ապա պախարակում է այն առաւելութիւնը, որ փարիսեցիները տալիս էին ծիսական պատուէրներին բարոյականի հակառակ (Մկ. Ի. 1-15)։ Նա ապացուցանում է, որ այդպիսի վարմունքը բոլորովին անհամապատասխան է Աստուծոյ կամաց և օրէնքը լրացնելու փոխարէն իսկապէս քակտում է. ուստի վերականգնում է արդէն մարդարէների քարոզած այն սկզբունքը, թէ Աստուծոյ համար ողորմութիւնը աւելի հաճելի է քան զոհը (Ովսէ Զ.6. Մատթ. Թ. 13)։ Եւ մինչ փարիսեցին աւելի մեծ առաքինութիւն էր համարում այն բարիքը, որ մի իսրայէլացի իւր որդիական պարտքը, աստուածային տաճարանեայ պատուիրաններից մէկը, կատարելու համար իւր ծնողաց վերայ պէտք է գործադրէր՝ տանել Աստուծոյ նուիրել, տաճարի գանձանակը ձգել՝ Քրիստոս ընդհակառակն պահանջում է, թողնել Աստուծոյ սեղանի առաջ բերած նուէրը, գնալ նախ ընկերի հետ հաշտուել, և ապա գալ իւր նուէրը մատուցանել (Մկ. Ի. 9-13 և Մատթ. Ե. 23-24)։ Դորանով ի հարկ է Նա չի կամենում ասել, թէ դէպի ծնողը կամ դէպի ընկերն ունեցած պարտականութիւններն աւելի բարձր պէտք է համարուին, քան դէպի Աստուած ունեցածները, այլ որ մենք աւելի ուղիղ կերպով ենք կատարած լինում մեր պարտքը դէպի Աստուած, երբ

Նորա հաստատած բարոյական օրէնքների համաձայն ենք վերաբերուում դէպի մեր մերձաւորները, քան երբ արտաքին արարողութիւններով ու նուէրներով կամենում ենք հաճոյանալ Նորան, և որ ծիսական կարգերը այն ժամանակ են միայն պահում իրենց կրօնական նշանակութիւնը, երբ բնական արտայայտութիւն են անկեղծ զգացումների, բարոյապէս մաքուր Սրտի։

Աւետարանն ընծայում է մեզ գոնէ մի գեղեցիկ օրինակ, թէ ինչպէս երբեմն նոյն իսկ ուղիղ սկզբունքներով գործադրուած ծիսականը պէտք է գերադաս համարուի առերևոյթ բարոյականից։ Երբ որ Սիմոն Բորոսի տանը աշակերտները նեղացան, թէ ինչու բարեպաշտ կինը թափեց Թանկագին իւղը Յիսուսի վերայ, փոխանակ նորա գնով աղքատներին բարերարութիւն անելու՝ Յիսուս յանդիմանեց իւր աշակերտներին, իսկ կնոջ արարքն այնչափ բարձրը գնահատեց, որ Իւր աւետարանի հետ զուգընթաց ամբողջ աշխարհում պատմուելու արժանի տեսաւ։ Ինչո՞ւ։ որովհետև, ասում է Նա, աղքատներին բարի անելու մարդիկ միշտ ժամանակ ունին, և եթէ ցանկութիւն լինի՝ միջոց երբէք չի պակասի։ բայց հանդիսաւոր րոպէներ կեանքի մէջ, երբ մարդ այնպէս մօտիկ զգայ իրեն Տիրոջ, այնպիսի բուռն կրօնական զգացումներով լեցուած լինի, ինչպէս էր անշուշտ իւղաբեր կինը՝ շատ քիչ են պատահում։ րոպէներ են դրքա, երբ մարդ իւր զգացումները խօսքով արտայայտել չէ կարող, երբ մի ինքնաբերական անբարբառ արարողութեան մէջ աւելի շատ հոգի և միտք է բովանդակում քան երկար ու բարակ ճառերի մէջ։ և ահա այդպիսի անկեղծ արտայայտութիւններն է, որ գնահատում է Փրկիչն ու Իւր աւետարանի սկզբունք դարձնում՝ ոչ ողորմութիւնն ըստ ինքեան, իրրև արտաքին արարք, և ոչ զոհը, այլ այն զգացմունքը, այն գաղափարը, որ թագնուում է նոցա յետև։ Այսպէս և Նորա շաբաթը սուրբ պահելու առթիւ փարիսեցիների հետ ունեցած վէճերը ոչ միայն նպատակ չունին ծէսն իրրև անկարևոր ինչ ցոյց տալ, այլ ընդհակառակն որոշում են նոցա իսկական բնաւորութիւնը։ Մարդոյ Որդին տէր լինելով շաբաթու (Մկ. Բ. 28) գիտէ և գործադրել այն ինչպէս պէտքն է՝ ուսուցանել, որ մարդիկ կուռք չդարձնեն իրենց համար նորա սրբութիւնը, չզոհեն նորա տառական նշանակութեան առաջ իրենց ամենանուիրական պարտականութիւնները, այլ ըմբռնելով, որ շաբաթը մարդու համար է՝ նորա ժամանակը կարգաւորելու, նորա բոլոր գործերի նպատակ և հանգիստ կազմող Աստուծոյ հետ յարաբերութեան սուրբ ժամեր հաստատելու համար՝ գործ դնեն այդ ժամերը յիրաւի իբրև հոգևոր հանգստութեան ժամեր, Աստուծոյ պաշտամանը նուիրուած ժամեր՝ սրտի և ոչ շրթանց ու ձեռաց նուիրաբերութեամբ միայն։

Այնուամենայնիւ Քրիստոսի կազմած համայնքի մէջ չէին Ուխտի բազմաթիւ ծիսական որոշումներն անհրաժեշտաբար անգործադիր պէտք է մնային։ շատ բան կար այստեղ, որ իբրև հին տիկ աւետարանի վարդապետութեան նոր, եռացող գինին տանել չէր կարող։ Քրիստոս նոցա տեղ նորերն է դնում յիրաւի, բայց ոչ եղածը լուծելով, այլ լցուցանելով՝ ստուերականի, անցողականի փոխարէն կատարեալը, մշտնջենաւորն ընծայելով։ Թէև ծերակոյտի առաջ Նորան դատապարտելու համար բերած վկայութիւնը, թէ Նա Երուսաղէմի տաճարը քակելու ցանկութիւն է յայտնել՝ չար և սուտ զրպարտութիւն էր, բայց երբ Նա խոստացաւ այնտեղ լինել, ուր հաւատացողներից երկուսը կամ երեքը միասին կգտնուէին, և նոցա աղօթքը լսելի անել իւր Հօր առաջ՝ դորանով արդէն մարմնաւոր, որոշ տեղի հետ կապուած տաճարի կարևորութիւնն ըստ ինքեան վերանում էր։ Թէև Նա իւրայիններին չէ արգելում զոհեր անել, ճաշակում է նոցա հետ պասէքի զոհը, բայց այն օրուանից, երբ Նորա անարատ արիւնը խաչի վերայ թափուեցաւ, նոր ուխտ հաստատելով, փրկանք դառնալով շատերի համար՝ ապականացու զոհերի արիւնը կորցրեց բնականաբար իւր նշանակութիւնը։ Նորա կանգնած անձեռագործ տաճարի մէջ, ուր պիտի ժողովուէին Հօր հոգւով և ճշմարտութեամբ երկրպագողները, կատարեալ ազատութիւն է տիրում՝ ինչպէս բարոյական, այնպէս և կրօնական զգացումները արտայայտելու և-

դանակի նկատմամբ. որովհետև Հոգին է այստեղ որոշողը և ոչ գիրը։

Ահա և այդ հոգևոր, ազատ կողմն է, կրկնում ենք, որ, կեանքի բոլոր պայմանների համար, կազմում է Քրիստոսի արդարութեան, Երկնքի արքայութիւն տանող արդարութեան՝ գլխաւոր. յատկանիշը, Հին Կտակարանի օրէնքի հետ բաղդատելով։ Նորա երկրորդ, ոչ պակաս կարևորութիւն ունեցող, յատկանիշն է այն, որ մինչդեռ թէ Հին Կտակարանը, և թէ առհասարակ ամեն օրէնք, մարդոց առաջ դնում են բազմաթիւ պատուէրներ, որոնցից իւրաքանչիւրն առանձին առանձին կատարել պէտք է, բոլորը ճշդութեամբ կատարած լինելու համար՝ Քրիստոս մի կենդրոն է որոշում, որի շուրջ պտտում են բոլոր օրէնքները, մի ընդհանուր մեծ պատուիրան, որից լոյս են ստանում, որի ուղիղ ըմբռնմամբ և գործադրութեամբ ըմբռնուած և գործադրուած են լինում բոլոր միւսները —այդ է առ Աստուած և առ ընկերն սիրոյ միացեալ պատուիրանը։

Կ. Վ.

ԼԵՒՈՆ ԺԳ. ՊԱՊԸ
ԵՒ
ՊԱՊԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿԸ.

Christliche Welt թերթի մէջ լոյս է տեսնում Լեւոն ԺԳ. պապի մի շատ հետաքրքիր կենսագրութիւնը, որից մի քանի տեղեկութիւններ առնելով՝ յառաջ ենք բերում նորա պապական աթոռ բարձրանալու մասին պատմուածը, իբրև օրինակ, թէ ինչպէս են ընտրուում և իշխանութիւն ստանձնում պապերը։

Լեւոն ԺԳ., որի իսկական անունն եղել է Ջիոակինո Պեչչի, ծնուած է 1810 թ.-ի մարտի 2-ին Լատիոնի մի գիւղում՝ ունևոր հասարակ ծնողներից, թէև 1832 թուին իւր պաշտպան Սալա կարդինալի աշխատութեամբ նա իբրև պատրիկ ընդունուել է այսպէս կոչուած «Աղնուական եկեղեցականների ակումբի» մէջ, որով նորա առաջ ճանապարհ է բացուել դէպի բարձր. եկեղ. աստիճաններ։ Իւր սկզբնական կրթութիւնը ստացել է նա եզուիտների մօտ, որոնք 1814 թ.-ին ազատուելով Նապոլէոնի ազդեցութեամբ առ ժամանակ իրենց դէմ հանած հալածանքից, արագութեամբ վերահաստատուել էին իրենց նախկին դիրքերում և ի միջի այլոց բաց էին արել Վիտերբօ քաղաքում մի աչքի ընկնող դպրոց, ուր և յաջորդ տարին ընդունուեցաւ փոքրիկ Ջիոակինօն իւր Ցովսէփ եղբօր հետ։—Թէ ինչպէս միակողմանի էր ուսուցումն այդպիսի կրթարաններում, բաւական է յիշել մրցանակներով աւարտած մի 16 տարեկան պատանու օրինակը, որ լրջօրէն հարցնում էր, թէ արդեօք ճշմարիտ է, որ լուսինը քիթ բերան, աչք, ունի։—Ապագայ պապը դպրոցում մնաց մինչև 1824 թ.-ը և, թէպէտ ընդունակ ու յառաջադէմ իւր պարապմունքների մէջ, բայց կտրուած լինելով բոլորովին արտաքին աշխարհից, զարգացաւ լոկ իբրև կրօնաւոր, զուրկ ամեն տեսակ կենդանի յոյզերից. այդ է երևի պատճառը, որ նորա, ոտանաւորով, իւր կեանքի մասին պատմածներն այնչափ սառն են, արուեստական։—Մինչ այն՝ պապական աթոռ էր բարձրացել Լեւոն ԺԲ. և եզուիտների ձեռքն յանձնել «Հռովմէական կոլէջը», որի առաջին 1400 ուսանողների թուում եղան նաև երկու Պեչչիները։ Այդտեղ ևս Ջիոակինօն, թէև առողջութեամբ տկար, յաջողութեամբ աւարտեց ու ընտրեցաւ մանաւանդ ճարտասանական արուեստին. ապա 1830 թ.-ին ուսանող գրուեցաւ «Գրիգորեան համալսարանին», ուր կրկին եզուիտներն էին նորա ուսուցչապետները։ 1832 թ.-ին նա ձեռք բերաւ աստուածաբանութեան դոկտորի աստիճանը, 1835-ին մի փառաւոր մրցանակ և 1837 թ.-ին իրաւաբանութեան դոկտորի աստիճանը, երբ և քահանայական ձեռնադրութիւնն ընդունեց։ Յաջորդ տարին նա իբրև կառավարիչ ուղարկուեցաւ Բենեվենտ, որ պապերի ողորմելի քաղաքական իշխանութեան ներքոյ ամենախեղճ և խառնակ վիճակ էր ներկայացնում։ այդտեղ շատ շուտով կարողացաւ ցոյց տալ իւր վարչական ընդունակութիւնները և նման բարեկարգութիւն մտցնելու համար Պերուջիա քաղաքը տեղափոխուեցաւ, ուր չնայած խիստ աննպաստ հանգամանքներին այնչափ յաջողութիւն ձեռք բերեց, որ քաղաքացիները ցանկացան յետոյ նորան եպիսկոպոս ունենալ։ Բայց Գրիգոր ԺԶ. պապը առանձին բարեհաճութիւն ցոյց տուաւ դէպի նա՝ Բրիւսսէլի պապական Նունցիոս նշանակելով 1843 թ.-ին։ Դորա համար եկեղեցական աւելի բարձր աստիճան հարկաւոր էր, ուստի նա եպիսկոպոս ձեռնադրուեցաւ և ընդունեց «Դամիէտտի արքեպիսկոպոս» անուանական տիտղոսը։ Ճանապարհորդութեան միջոցին նա սկսեց ֆրանսերէն սովորել, որ և մինչև այժմ առանձին սիրով է գործածում։ Բրիւսսէլում թագուհու օգնութեամբ նա յաջող կերպով պաշտպանեց կաթոլիկութեան շահերը և սիրելի եղաւ նոյն իսկ ըողքական Լէոպոլդ Ա.

թագաւորին, որ 1846 թ.-ին, երբ նա վերադառնում էր, Գրիգոր ԺԶ.-ին ուղղած ինքնագիր նամակով իւր գոհունակութիւնն է յայտնում։ Այս անգամ նա անցաւ Անգլիայով, ուր և մի ամիս մնաց ու հաւանականաբար այդ ժամանակուանից սկսեց առանձին համակրութիւն տածել դէպի անգլիկան եկեղեցին։ Առհասարակ Բրիւսսէլի այս կարճ ժամանակուայ պաշտօնավարութիւնը միակ շրջանն է նորա կեանքի մէջ, ուր նա կարողացել է շփուել ուանմիջական յարաբերութիւն ունենալ արտաքին աշխարհի հետ, որից և թարմ յիշողութիւններ է պահել մինչև այժմ։—Այդ ժամանակ պապական աթոռ էր բարձրացել արդէն Պիոս Ի.-ն, որ և կարդաց Լէոպոլդ թագաւորի նամակն ու Պեչչին հաստատեց Պերուջիոյ եպիսկոպոս։ Բաւական չէ որ այդպիսով Նորա փառասիրական ձգտումներին հարուած էր հասնում՝ մինչ նա քաղաքական ասպարէզից հեռանում և այն ոչ աբբեպիսկոպոսական թեմ էր ստանում։ այլ աւելի զգալին այն եղաւ, որ Պիոս Ի.-ի ամենակարող խորհրդական Անտոնելլին, նորա ոխերիմ թշնամին, 32 տարի շարունակ կարողացաւ նորան հեռու պահել պապական աթոռից։ Բայց Պեչչին այն ընաւորութիւններից չէր, որ ընկճուէր։

1854 թ.-ին Պեչչին կարդինալի կոչումն ստացաւ. բայց նորա յաջորդ տարիները խաղաղութեամբ չանցան, այլ Իտալիայի միութեան համար վարած պատերազմի տագնապների մէջ։ Պեչչին հակառակ շատերի ակնկալութեան ջերմ պաշտպան հանդիսացաւ պապերի աշխարհական իշխանութեան։ Շատ կարևոր դեր խաղաց նա նոյնպէս վատիկանի ժողովում 1870 թ.-ին, ուր, ինչպէս յայտնի է, յունիս 18-ին, մի սարսափելի փոթորկալից օր, պապերի անսխալականութիւնը հրատարակուեցաւ. իսկ սեպտ. 20-ին իտալական զօրքը ներս մտաւ և գրաւեց «Յաւիտենական քաղաքը»։ 1876 թ.-ից յետոյ, երբ մեռաւ Անտոնելլին, այլ ևս արդեօք չկար Պեչչիի դիմաց Հռոմում լինելու, և Պիոս Ի. զգալով իւր մօտալուտ վախճանը, զգալով այն դժուարութիւնները, որոնք պիտի ծագէին նոր պապի ընտրութեան պատճառով՝ նորան նշանակեց պապական աթոռի կամերլենգո, մի պաշտօն, որի հետ կապուած էր նոր կոնկլավ (նոր պապ ընտրող կարդինալների ժողով) կազմելու բոլոր իրաւունքը։ 1878 թ.-ի փետր. 8-ին վախճանեցաւ պապը, և երբ Պեչչին սովորութեան համաձայն 3 անգամ ոսկէ մուրճով խփեց դիակի ճակատին ու կոչեց նորան ծննդեան անունով, առանց պատասխան ստանալու՝ բոլոր անելիքների ծրագիրն արդէն իւր գլխում պատրաստ էր։

Շրջապատող հանգամանքները մեծ վճռականութիւն և խիստ եռանդուն գործունէութիւն էին պահանջում։ Կարդինալ Պեչչին կարողացաւ ամենինչ այնպէս գլուխ բերել, որ նշանակած ժամանակին, հանգուցեալ պապի թաղման յաջորդ օրը, ժողովն սկսուէր։ Սուգի օրերը նա գործ էր դրել վատիկանի սրահներում յատուկ նորոգութիւններ անելու, որպէս զի բոլոր ժողովականների համար հարկաւոր թուով սենեակներ պատրաստ լինէին։ Կարդինալներից իւրաքանչիւրն ունենում է ըստ սովորութեան հետը երկու քահանաներ, որոնք բոլորն, ինչպէս յայտնի է, պէտք է կոնկլավից դուրս չելնեն մինչև նոր պապն ընտրուի։ Կերակուրներն առաջ դրսից էին տալիս, որ իբրև յարմար միջոց էր ծառայում արտաքին աշխարհի հետ յարաբերութիւն պահպանելու՝ այժմ այդ ևս վերացուած էր, ներսն էին կերակուր պատրաստում։

Ժողովի բացման հանդէսը կատարուեցաւ ամենայն շքեղութեամբ. նախ, ինչպէս սովորութիւն է, բոլոր մուտքերն ամենայն զգուշութեամբ քննութեան ենթարկուեցան, ապա կարդինալ կամերլենգոն փակեց դռները ներսից, իսկ Հռոմ. եկեղեցւոյ ժառանգական մարաջախտ իշխանը դրսից։

Յաջորդ օրն սկսուեցաւ ձայնատուութիւնը, որի նպատակն է սկզբում իմանալ, թէ ովքեր են գլխաւոր ընտրելիները։ Պեչչին սկզբից և եթ ստացաւ 19 ձայն, մինչդեռ մնացած 41 ձայները բաժան բաժան էին. այդ յաջողութիւնը նախապատրաստելու համար շատ էին աշխատել մանաւանդ նորա հաւատարիմ Պերուջիացիք։ Երկրորդ ձայնատուութեան ժամանակ նորա քուէների թիւն աւելացաւ մինչև 30, իսկ երրորդին ձայների պահանջուած $^2/_3$ մեծամասնութիւնն արդէն պատրաստ էր, և սովորական հրաժարումներից յետոյ, որ հաւանականաբար այս անգամ անկեղծ էին, որովհետև նա պէտք է իմանար, թէ ինչ մեծ բեռն է վերցնում իւր վերայ՝ բոլոր կարդինալների ամպհովանիները խոնարհեցան, բացի մէկից, որով ընտրութիւնը ճանաչուած էր։ Արարողապետն այն ժամանակ յառաջ բերաւ երեք ծերագոյն կարդինալներին, և ընտրեալը յայտնեց կարդինալ—դեկանին, թէ ընդունում է ընտրութիւնը. իսկ այն պաշտօնական հարցին, թէ ինչպէս է կամենում կոչուել նոր պապը՝ վերջինս պատասխանեց՝ Լեւոն ԺԳ, ընդունելով այդ անունը ի յարգանս Լեւոն ԺԲ.-ի, որ թէ և ժողովրդից չսիրուած մի անձն՝ իւր խստակեցութեամբ զօրեղ տպաւորութիւն էր թողել մանուկ Պեչչիի վերայ։

Մինչ կոնկլավի մուտքերը բացուում էին և ժողովրդեան իմաց էր տրուում կատարուած ընտրութիւնը, նոր պապը սպիտակ զգեստներով՝ բազմած պապական աթոռի վերայ, ընդունում էր կարդինալների մատուցած առաջին յարգանքները։ Ապա ամենածեր կարդինալը փոխում է նորա մատի շափիւղայ մատանին, որ կարդինալութեան նշան է, և տեղը դնում ս. Պետրոսի ձկան մատանին. յետոյ համ-

բուրում է նորա ձեռն ու ոտքը և ընդունում խաղաղութեան համբոյրը։ Մինչ այդ՝ Պետրոսեան հրապարակի վերայ ժողովուած էր խիտ բազմութիւն, որ ամենածեր կարդինալի յայտարարութիւնից յետոյ բացականչում է. Պապ ունինք։ Անմիջապէս դորանից յետոյ պապը սովորութեան համաձայն տուաւ երեք անգամ իւր առաջին օրհնութիւնը ս. Պետրոս եկեղեցու ներքին սրահից դէպի դուրս։ Թագադրութիւնն այս անգամ ս. Պետրոս մայր եկեղեցում տեղի չունեցաւ, ինչպէս սովորութիւն է եղել. յայտնի չէ արդեօք կառավարութեան հետ եղած մի անհամաձայնութեան պատճառով, թէ Պիոս Թ.-ի ընդունած բանտարգելութեան սկզբունքը հաստատ պահելու համար։ Այնուամենայնիւ երբ թագը մեծ շուքով նորա գլուխը դրին, արտասանուեցաւ սովորական բանաձևը. «Ա՛ռ այդ երրակի թագերով զարդարուած պսակը և մի՛ մոռանար, որ դու իշխանների և թագաւորների հայրն ես։ Փրկիչ Յիսուս Քրիստոսի փոխանորդը, որին փառք յաւիտեանս ամէն»։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ։

ԿԱԹՈՂԻԿ ԵՒԵՂԵՑԻ.

Հոկտեմբեր 19-ին Բարիի Սէն—Նիկոլա եկեղեցում Զերնոգորիոյ Հեղինէ իշխանուհին կաթոլիկական դաւանութիւնն ընդունեց՝ Իտալիոյ գահաժառանգի հետ ամուսնանալու համար։ Հարցնել կարելի է՝ ինչո՞ւ յատկապէս այդ եկեղեցում։ Պատճառները մի քանի են։

Բարիի Սէն-Նիկոլա բազիլիկը նշանաւոր պատմական հնութիւն է։ Այդ եկեղեցոյ անմիջական պատրոն համարուում է թագաւորը, որ և նշանակում է, այդպէս կոչուած, մեծ պրիորին և միւս պաշտօնեաներին ու կառավարում նորա հարուստ կալուածները։ Ապա՝ որովհետև այդ եկեղեցում պահուում են ս. Նիկողայոս Աքանչելագործի մասունքները, որ հաւասար պատիւ է վայելում թէ օրթոդոքս և թէ հռովմէական եկեղեցոյ մէջ։ Նա մի տեսակ չէզոք հող է ներկայացնում երկու դաւանութիւնների համար։—Սուրբ մասունքները յափշտակել բերել են վաճառականները Փոքր Ասիայից 1087 թ.-ին, որ և մեծ ոգևորութեամբ ընդունուելով այստեղ՝ գրաւել են և գրաւուում են մինչև այժմ մեծ քանակութեամբ ուխտաւորներ, չնայելով Վենետիկում և Մոսկուայում ևս նոյնպիսի մասունքներ են գտնուում։ Այս մասունքների անունով կարճ միջոցում կանգնած բազիլիկի մէջ էր, որ Պետրոս Ամիենացին օրհնեց առաջին խաչակիրներին և յանձնեց նոցա ս. Նիկողայոսի պաշտպանութեանը, որ նաւավարների պաշտպան է համարուում, բայց որի տեղն այժմ բռնել ու թանկագին նուէրներ է ստանում Մադոննան։—Երբ իշխանուհին տաճար մտաւ, նորան ներկայացրին երկու շիշ մանանա. այդպէս է կոչուում այն հրաշագործ ջուրը, որ տրուում է բաւական թանգ գնով ուխտաւորներին՝ իբրև քրտնաթորումն Սուրբի ոսկորներից։ Զեռքն աւետարանի վերայ դնելով Իշխանուհին կարդաց իրեն ներկայացրած դաւանութեան գիրը և ստորագրեց, որով ի միջի այլոց «ս. Եկեղեցոյ տեսանելի գլուխ և Յիսուսի Քրիստոսի անսխալական փոխանորդ էր ընդունում» Հռովմի քահանայապետին և բոլոր միւս կրօնները իբրև սուտ մերժում։—Արքայական զոյգի պսակը կատարեց Սէն—Մարիա—դէյլի—Անջելի եկեղեցում Բարիի մեծ պրիորը, որովհետև Ցաւիտենական քաղաքի եօթ նշանաւոր բազիլիկները պապի հրամանով փակ մնացին նոցա առաջ։—Սակայն պապական արխիւի համար որոշուած այս պսակադրութեան վկայագրի մէջ փեսան անուանուած է «Հումբերտ Ա. Սավոյացու, Իտալիոյ թագաւորի» որդի, որով, ինչպէս մի իտալական ազատամիտ թերթ յիշում է, առաջին անգամ եկեղեցոյ կողմից պաշտօնապէս թագաւորին տրուում է իւր իսկական տիտղոսը։

— Նոյեմբերի 10-ին Մոնցայի մայր եկեղեցու մի մատուռի մէջ կանգնած մարմարեայ սեղանի պահարանում գրուեցաւ երկաթի թագը։ Այդ թագը շինել է տուել Թէոդոլինդէ թագուհին, որի դագաղը պահուում է նոյն եկեղեցում։ 500 թ.-ին «Քրիստոսի խաչի մի բեւեռից»։ «Բեւեռը կազմում է թագի ներքին մասը, իսկ արտաքինը պատած է ոսկով և զարդարած բազմաթիւ ադամանդներով»։ Մինչև 870 թ.-ը պահուում էր այն Լոմբարդիոյ Պավիա մայրաքաղաքում, երբ Լուդովիկոս Բ. կայսրը Մայլանդի (Միլան) ս. Ամբրոսիոս եկեղեցին փոխադրեց, և այդտեղ այնուհետև Գերմ. կայսրները իրենց գլուխը դնելով երկաթի թագը Լոմբարդիոյ թագաւոր էին դառնում։ Ֆրիդրիկոս Բարբարոսսա փոխադրեց այն Մոնցայ, ուր դեռ 1805 թ. Նապոլէոն Ա. կատարեց թագադրութեան ծէսը։ Վերջին թագադրուողն էր Ֆերդինանդ Ա. Աւստրիոյ կայսրը 1838 թ.-ին. իսկ 1859-ին աւստրիացիք գերի տարան երկաթի թագը և վերադարձրին 1866-ի դաշնագրի զօրութեամբ։ Վերջին փոխադրութիւնը Մոնցայի գանձարանից դէպի յիշեալ մատուռը տեղի ունեցաւ հանդիսաւոր թափորով։

—Կիւրակէ նոյեմբ. 22-ին Փարիզի Մադըլէյն փառահեղ տաճարում՝ Փարիզի արքեպիսկոս կարդինալ Ռիշարի նախագահութեամբ, կայացաւ բարեգործական մի մեծ համախմբումն ի նպաստ տառապեալ Հայերի. քարոզիչն էր արբէ Գրեմոն, իսկ

եկեղեցւոյ դռների մօտ նուիրատուութիւններ էին ստանում բարեգործութեանը հովանաւորող պատուաւոր տիկիններ, որոնց Նախագահն է դքսուհի Էստեռնակ։

— Նոյեմ. 6-ին յանկարծամահ եղաւ Փարիզի Կաթոլիկական ճեմարանի (Institut Catholique—Բարձր. եկեղ. կրթական հաստատութիւնը կաթոլիկ Ֆրանսիոյ համար) տեսուչ, Ազգային երեցփոխան և առաջնակարգ քարոզիչ Դ'Իւլստ (d'Hulst), Ֆրանսիոյ հոգևորականութեան մէջ ամենից աւելի աչքի ընկնող անձերից մէկը։ 24-ին տեղի է ունեցել մեծ հանդիսով թաղման կարգը, ուր Օրլէանի եպիսկոպոսը փառաւոր դամբանական է խօսել։ Հանգուցեալի փոխարէն Նոտր—Դամի քարոզիչ նշանակուել է Փարիզում մեծ հռչակ ունեցող Դոմինիկեան հայր Օլիվիէն։

— Ժողովրդական ոգին, որի ազդեցութիւնից ազատ չէ Ամերիկայում կեանքի ոչ մի երևոյթ, ցոյց է տալիս հետզհետէ իւր զօրութիւնը նաև ամենազօր Կաթոլիկ եկեղեցւոյ նկատմամբ։ Ներկայում կաթոլիկական երկու մեծ կուսակցութիւններ կան այնտեղ. ազատամիտ կուսակցութեան պարագլուխներն են կարդինալ Գիբբոնս, արքեպիսկոպոս Այրլանդ և եպիսկոպոս Ռին, իսկ պահպանողական ուլտրամոնտան կուսակցութեան պարագլուխները՝ արքեպիսկոպոս Կորրիգան և եպիսկոպոս Վիգգեր։ Երկու կուսակցութիւնները շատ զօրեղ ընդհարումն ունեցան ժողովրդական դպրոցների խնդրում։ Մինչդեռ ազատամիտները ցանկանում են համակերպիլ ընդհանուր ազգային կրթութեան եղանակին՝ ուլտրամոնտաններն ամեն կրթութիւն, որ հոգևորականութեան հսկողութեան ներքոյ չէ, սատանայի գործն համարում։ Վերջիններս հարկաւ ոչ մի ջանք չեն խնայում Վատիկանում մեքենայութիւններ լարելու իրենց հակառակորդների դէմ, և դոցա արդիւնքն է համարուում, որ Ռին եպիսկոպոսին անցեալները հրաժարեցրին Վաշինգտոնի համալսարանի տեսչութիւնից։ Ոմանց հաւանական է թուում, որ Կաթոլիկ եկեղեցին Ամերիկայում մի օր բոլորովին ամերիկացած լինելով՝ Հռովմէական լինելուց կդադարի և անկախ կազմակերպութիւն կստանայ։

ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

ՌՈՒՍԱՑ ԵԿԵՂԵՑԻ.

Բարձրագոյն հաստատութեամբ հոկտ. 6-ին Ս. Սինոդի վճիռը հաստատուեցաւ, որով կամաւոր նուիրատուութիւններ ժողովելու իրաւունք է շնորհուում Մցխեթի ԺԲ. առաքելների տաճարը վերանորոգելու համար։ Այդ տաճարը Մցխեթի անցեալ փառաց յիշատակների համարեա միակ մնացորդն է՝ այն Մցխեթի, ուր նստում էին վրաց թագաւորներն ու կաթուղիկոսները։ Տաճարը կառուցուած է Դ. դարում, իսկ այժմեան ձևովվերանորոգուած ԺԷ. դարում։

— Լոնդոնում Բիւզանդիոնի վերջին կայսրների՝ Պալէօլոգների, վերջին շառաւիղ իշխանուհի Եւգենիա Քրիստոփոր Պալէօլոգ հռովմէական եկեղեցուց դարձաւ Ռուսական եկեղեցու գիրկը։ Այդ դէպքը մեծ իրարանցում ձգեց պրավոսլաւ աշխարհում և գրաւեց ռուս հոգևորականութեան կենդանի համակրանքը։ Իբրև այդ զգացման արտայայտութիւն Պետերբ. Ս. Երրորդութեան (Տրոյիցկիյ) տաճարի կողմից ուղարկուած է ճարտարարուեստ նկարուած մի հրաշագործ պատկերի արտանկար-պատճէնը, զարդարուած իշխանուհու նախահայրերի զինանշանով։ Ինչպէս յայտնի է Պալէօլոգների տան և Ցոյն ազգի աչքում մեծ նշանակութիւն ունեցող ս. պատկերը գտնուում է այժմ Պետերբուրգում, Մեծն Պետրոսի ս. Երրորդութեան տաճարում։ Այդ պատկերը, որ յայտնի է «Ցուանական Աստուածածին» անունով, ըստ աւանդութեան նկարել է Ղուկաս Աւետարանիչը։ 1341 թ. Անդրոնիկ Գ. Ծիրանածին ընծայում է Նաւպլիայի (Մօրէա) վանքին, ուր մնում էր մօտ 500 տարի։ 1821 թ. յունական ապստամբութեան ժամանակ վանքն առնուում և կործանուում է տաճիկների ձեռքով։ Վանահայրը յանձնում է ս. պատկերը իւր ազգական Վլասօպուլօ անունով մէկին, որ Ռուսիայի ընդհ. դեսպան էր Դրան առաջ։ 1838 թ.-ին ս. պատկերը ձօնուում է Նիկողայոս Ա.-ին և դրուում է Ձմերային պալատում, իսկ 1868 թ. յանձնուում է Տրոյիցկիյ տաճարին. ահա այդ պատկերի պատճէնն է, որ ընծայաբերուում է նորադարձ Եւգենիա իշխանուհուն մի ուղերձով։

Ստանալով այդպիսի մի ընծայ իշխանուհին կամեցաւ հաղորդակից անել իւր մերձաւոր բարեկամներին ևս իւր բաղդաւորութեանը։ Նորա ընդունարան—սրահում հաւաքուած յոյն տոհմիկ ազնուականների առաջ—այդտեղ էին և անգղիական բարձր դասակարգի զանազան երկսեռ ներկայացուցիչներ ու մի քանի օտար ազնուականներ—մուտքի դռների հանդիպակաց կողմը, սպիտակ սաւանով ծածկուած սեղանի վրայ, բազմեցրած էր պահարանի մէջ դրած պատկերը. երկու կողմը վառուում էին մոմեր, իսկ տակը և շուրջը փռուած էին թարմ ծաղիկներ՝ մի շռայլութիւն և շուք, որ Անգլիայում դժուար կարելի է տեսնել։ Ուղերձը կարդալուց յետոյ մօտենում են շնորհաւորելու նախ այր մարդիկ և ապա կանայք։ Ի շնորհակալութիւն իշխանուհին յուզուած, բայց հաստատուն, ձայնով ասաց, որ յանհունս լաղդաւոր է այդ նուէրով, որն ընդունում է իբր արտայայտութիւն Աստու-

ծոյ դէպի ինքն ունեցած խնամքի և որից սպասում է մարմնական առողջութիւն, և հոգեկան մխիթարութեան ու արութեան շնորհ։

—Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրը հաճել է պարգևել Կայսերական հասարակաց մատենադարանին մի ամենաթանկագին ձեռագիր, որ Սինէական աստուածաշունչից յետոյ նորա ամենափառաւոր զարդը կկազմէ այսուհետև։ Ծիրանի մագաղաթի վերայ Զ. դարում գրուած յունարէն մի աւետարան է այդ, որ, ինչպէս ժամանակին յայտնի եղաւ, գտել է անցեալ տարի ռուս հնագէտ Սմիրնովը Կապադովկիոյ Կեսարիա քաղաքի մօտ Սարմասխալի գիւղում։ Չորս տարիէ ի վեր անգլիացիներ ու ամերիկացիներ աշխատում էին ձեռք բերել այն և 1200 ֆունտ (12,000 ր.) գին էին առաջարկել. բայց համայնքը չէր յօժարել տալ, երևի գլխաւորապէս այն պատճառով, որ շրջակայքի համար այդ աւետարանն ի վաղուց հետէ սրբութիւն էր և ցանկալի չէր այն ոչ ուղղափառների ձեռքում տեսնել։ Նորին Մեծութիւնը հրամայեց իւր ծախքով գնել այն և ապա նուիրեց Կայսեր. մատենադարանին։—Աւետարանը գրուած է շատ նուրբ մագաղաթի վերայ կրկին սիւնեակ արծաթի տառերով՝ Աստուծոյ և Փրկչի անունները ոսկետառ։ Դժբաղդաբար նա ամբողջ չէ, այլ միայն 182 թերթերից է բաղկացած, մինչդեռ ամբողջը 490 թերթ պէտք է ունենար։ Քննութիւնից երևաց, որ նա մասն է կազմում այն «Ծիրանի կոդեքսի», որից 45 թերթեր ցրուած են մի քանի նշանաւոր մատենադարանում։ Տիշենդորֆի ժամանակուանից յայտնի էին N նշանով և մեծ յարգ ունէին։ Բնական է, որ այդպիսի մի ընտիր ձեռագիր ամենալաւ օրինակից արտագրուած կլինէր. ուստի նորա մանրամասն քննութիւնը աստուածաբանների համար անշուշտ հետաքրքիր նորութիւններ հանդէս պէտք է բերէ։ Պատմուում է, որ նորա թերթերից բաւական թուով կան դեռ ցրուած զանազան տեղեր Փոքր Ասիայում, բայց դեռ չէ յաջողուել գտնել։

ՀԵՂԻՔՆ ԾԿՆՂՇՑԻ.

Ամէնքի մետրոպոլիտ հանգուցեալ Հերմանի տեղ հոկտ. 2 ընտրուած և 18-ին ձեռնադրուած է Հ. Պրոկոպիյ վարդապետ Իկոնոմիդէս (ծն. 1839 թ.-ին Պելոպոնէսի գիւղերից մէկում), որ Ամէնքի համալսարանի աստուածաբանական ֆակուլտէտի ուսուցչապետ և արքայազունների կրօնուսոյցն էր։ Նորա ընտրութիւնը, ինչպէս և միշտ այդպիսի դէպքերում, առանց յոյզերի և խռովութիւնների չէր, բայց և այնպէս ընտրութիւնն ընկաւ արժանաւորի վրայ։

Հ. Պրոկոպիյին մետրոպոլիտ տեսնել ցանկալի էր արքայական տան համար գլխաւորապէս, ուր նորան շատ լաւ էին ճանաչում։ Նա նոյնպէս կառավարութեան թեկնածուն էր։ Ուստի և սինոդի անդամներին անցեալ նստի շրջանում յայտնել էին, որ Հերմանի՝ յաջորդ ցանկալի էր տեսնել Պրոկոպիյ Իկոնոմիդէս վարդապետին և որ բացի նորանից կառավարութիւնը ուրիշ ոչ ոքի չէ կամենում։ Բայց սինոդի անդամները՝ մեծամասնութիւնը, իրենց հայեացքներն ունէին՝ հետևաբար և իրենց թեկնածուները։ Դոքա (երեք արք-եպիսկոպոս) յամառութեամբ դիմադրում էին կառավարութեան թեկնածուի դէմ և անպատճառ կամենում էին ընտրել մետրոպոլիտ եղած արհիներից մէկն ու մէկին, ինչպէս լինում էր սովորաբար։ Պէտք է ասել, ի պատիւ այնքան եռանդով գործող մեծամասնութեան, որ նոցա դիմադրութիւնն իսկապէս յանգում էր այն կէտին, որ կառավարութիւնը և աշխարհիկ իշխանութիւնը բաւական անվայել կերպով էր անում իւր միջամտութիւնը եկեղեցական գործերի մէջ. նոքա իսկապէս այդ բանի դէմ էին։

«Թող, ասում է նոցա համակարծիք թերթերից մէկը, կառավարութիւնն ու թագաւորը առաջարկեն մինչև իսկ իրենց թեկնածուն՝ դորա դէմ ոչ ոք ոչինչ ունենալ չէ կարող. բայց ինչո՞ւ բոնի միջոցներով աշխատել անպատճառ նորան ընտրել տալ»։ Այդտեղ կային և այլ պատճառներ ևս։ Երեք արհիներն ընդդէմ էին Հ. Պրոկոպիյի ընտրութեան, որովհետև ենթադրում էին, որ մետրոպոլիտ ընտրել մի վարդապետի անպատուութիւն էր հելլէն եպիսկոպոսների համար, որոնց մէջ արժանաւորը չկար խոստովանել էր այդ. իսկ միւս կողմից այդպիսի ընտրութիւնը հակառակ էին համարում հելլէն եկեղեցու ոգուն և եկեղեց. կանոններին։ Այն ինչ՝ հէնց այդպիսի եղրակացութիւնն էր հակառակ, որովհետև հելլէն եկեղեցին այն հին եկեղեցիներից մէկն է, որոնք պահպանել են եկեղեցական հին կարգապահութիւնը, որով ամեն մի եպիսկոպոս մնում է մինչև ցմահ եպիսկոպոս այն թեմի, որի համար ձեռնադրուել է, եթէ մի արտակարգ հանգամանք չստիպէ նորան թողնել իւր աթոռը։ Բացառութիւն լինում էր միայն մետրոպոլիտի համար, և այդ էլ ոչ թէ բացառութիւն էր, այլ անհրաժեշտութիւն, որով ընտրուած եպիսկոպոսն անհրաժեշտապէս պիտի թողնէր իւր աթոռը, նորը ժառանգելու համար։ Իսկ եթէ արժանաւոր յաջորդ կար մետրոպոլիտական աթոռի համար, ինչպէս այս անգամ, թէ և վարդապետ, հարկաւ կարիք չկար ընտրել մի եպիսկոպոսի և ստիպել թողնել նորան իւր թեմը, որի համար ձեռնադրուած էր։ Եւ այդպիսի գործողութիւնը ճիշդ հետևողականութիւն կլինէր նախկին եկեղեցական կանոնների ոգուն, արդարացրած կլինէր եկեղեցու պատմութիւնը և բացառութիւններ անելու անհրաժեշտութիւնից խուսափելու միջոց կտար։

Երեք արհիները, որոնց խրախուսում էր և մասնակցում էին տեղի չտալ կառավարութեանը և ընտրել իրենց թեկնածուին, բայց չյաջողուեցաւ։ Փոքրամասնութիւն կազմող (երկու) եպիսկոպոսներից մէկը հիւանդացաւ և պակեց ամբողջ սինոդական նիստի շրջանի միջոցին, և ընտրութիւն չըկայացաւ, որովհետև մետրոպոլտի ընտրութիւնը պէտք է անպատճառ կատարուի սինոդի բոլոր անդամների ներկայութեամբ՝ խնդիրը մնաց անկատար այդ նստի շրջանում։

Հելլէն եկեղեցու կանոններով ամեն նոր նստի շրջանի հրաւիրուում են չորս արհի (հինգերորդը մետրոպոլիտն, է որ չէ փոխուում) ըստ ձեռնադրութեան։ Եթէ մետրոպոլիտ չկայ, կանչուում է հինգերորդը, ժամանակաւորապէս, մինչև ընտրութիւնը։ Կառավարութիւնը ոչ մի հնարաւորութիւն չունի արգելել այդ, բայց իրաւունք ունի պահել նախորդ նստեշրջանից երկուսին հետևեալ տարուայ համար, որոնց ցանկանում է։ Օգտուելով այդ հանգամանքից, կառավարութիւնը պահում է նախորդ շրջանի փոքրամասնութիւն կազմող երկու եպիսկոպոսներին, որոնցից մէկն արդէն առողջացել էր բոլորովին. հերթակալ եպիսկոպոսներն էլ այնպիսիներն էին, որոնք ընդդէմ չէին կառավարութեան հայեացքներին և նոր թեկնածուին։ Այդպիսով միաձայն վճռուեցաւ մետրոպոլտի ընտրութիւնը։ Սինոդի անդամները վճռեցին վաղօրօք, որ թէ մէկ և թէ միւս ձևը—առաջնորդական թեմից կոչելով նոր մետրոպոլտին կամ նորին ձեռնադրելով—ոչինչով ընդդէմ չէ հելլէն եկեղեցւոյ կանոններին և սահմանադրութեան ոգուն։ Ապա չորսն ընդդէմ մէկի ընտրեցին Հ. Պրօկոպիին իբր առաջին թեկնածու (բոլոր թեկնածուները երեք պիտի լինեն)։ Արքայական աւագ—գործակալը (epitropos) սինոդի այդ ընտրութիւնը ներկայացրեց Նախարարին, որ և ընտրելով թեկնածուին, ներկայացրեց ի հաստատութիւն արքային։

Պէտք է խոստովանել, որ ընտրութիւնը շատ յաջող է և կատարեալ արժանաւոր անձն է ընդունում այդ բարձր պաշտօնը։ Բաւական է մատնացոյց անել, որ հակառակ մամուլն իսկ ոչինչ չգտաւ ասելու նոր մետրոպոլտի անձի դէմ։ ուր մնաց որ այժմեան հելլէն եկեղեցականների ներկայացուցիչների զարդը կարող է համարուել նա, իբր լաւագոյնը և ամենից կրթուածը (եղել է Մոսկ. Հոգ. Ճեմարանում, Ֆրանսիայում և Գերմանիայում)։

Նոր մետրոպիլտի ձեռնադրութիւնը կատարուեցաւ մի առանձին շքով։ Տաճարը դրսից զարդարուած էր գոյնզգոյն դրօշակներով, ներսը թանգագին գորգերով։ Պատարագին ներկայ էր ամբողջ արքայական տունը, բոլոր նախարարները, մի քանի դեսպաններ և բազմաթիւ բարձրաստիճան անձինք, որոնց հետ և նոր մետրոպոլտի պառաւ մայրը, որ ընդունում էր թագաւորի և արքայազունների ջերմ շնորհաւորութիւնները։ Ձեռնադրութիւնը կատարում էր սրբազան Սինոդը իւր ամբողջ կազմութեամբ (հինգ եպիսկոպոս)։ Պատարագին մասնակցելու հրաւիրուած էր և հաւատակից կղերը (ռուս վարդապետը և երեք ռումին վարդապետ, որոնք լսում են Աթէնքի համալսարանում)։ Ձեռնադրութիւնն սկսուում է (ինչպէս և ռուսացը) հաւատոյ դաւանութեամբ (բայց աւելի կարճ քան ռուսացը)՝ կարդացւում է հաւատոյ հանգանակը և ապա խոստումն է առնուում պահպանել տիեզերական ժողովների բոլոր որոշումները և կանոնները, ինչպէս և հելլէն եկեղեցու օրէնքները, հաւատարիմ մնալ արքային և ազգին։ Բուն ձեռնադրութիւնը կատարուում է այսպէս կոչուած փոքր մուտքից յետոյ (малый входъ)։ Երկու վարդապետ առաջնորդում են ընծայելի դէպի արքայական դռները, որտեղ դիմաւորում են նորան արհիները։ Նոցանից աւագագոյնը նստում է բեմի մի կողմը դրուած աթոռի վրայ, իսկ մնացած չորսը բռնելով, ընծայելի հետ, իրար ձեռքից, շրջում են բեմի շուրջը և երգում սահմանուած սաղմոսը («Ցնծացէք»)։ Ժողովուրդն ևս անմասն չէ մնում. նախ քան ընծայելին որ և է մետրոպոլիտական յատուկ զգեստ հագցնելը՝ ձեռնադրողը ցոյց է տալիս զգեստները ժողովրդին ասելով «արժանի է», որին հետևում է ժողովրդի «արժանի է»-ն (aksios)։ Մի ուրիշ առանձնայատկութիւն, որ բնորոշ կերպով յիշեցնում է նախնի հնութիւն, այն է, որ ձեռնադրութիւնից յետոյ նոր օծեալին տրուում է գաւազան, և նա բռնած՝ հէնց այն տեղ, դառնում է ժողովրդին քարոզ խօսելով, անմիջապէս ցոյց տալով իւր իրաւունքը» ջամբել զրանն ճըշմարտութեան»։ Այդ լինում է իւրաքանչիւր եպիսկոպոսական ձեռնադրութեան ժամանակ, թէև ձեռնադրութիւնը լինի նոյն իսկ օտար քաղաքում։ բայց այն հանգամանքը, որ եպիսկոպոսը ձեռնադրուում է ցմահ իւր թեմի համար, պատճառ է լինում, որ ապագայ հօտն ևս իւր ջերմ մասնակցութիւնն է ունենում իւր ապագայ հովուի ձեռնադրութեան հանդիսին։ Ձեռնադրութեան օրը ահագին խմբերով հաւաքւում են Աթէնքի ամեն տեղերից, կառքերով, երկաթուղով, նաւակներով, նոյն իսկ ոտքով։ Ամենքին հետաքրքրում է տեսնել, թէ ինչպէս պէտք է ձեռնադրեն իրենց ապագայ «դեսպոտ»-ին (Տէր, Հոգևոր Տէր) և ինչպէս պիտի կարդայ նա հաւատոյ գիրը։

Պատարագի մնացեալ մասը շարունակեց նոր մետրոպոլիտը։ թէև մասնակցում էին բոլոր սինոդական արհիները։ Աւարտելուց յետոյ, ըստ սովորութեան, նա ամբառնում է իւր ոսկեզօծ աթոռը և բաժանում է ժողովրդին մաս (նշխար)։ Այնուհետև մի ամբողջ շալաթ ժողովուրդը խռնուած

է լինում միտրոպոլտի տան շուրջը, որ իւրաքանչիւրը պարտք է համարում մտնել իւր նոր հոգևոր—տիրոջ օրհնութիւնն ստանալու։ Մեկնելու ժամանակ իւրաքանչիւրին տրւում է մի փոքր կապոց քաղցրաւենիք թաշկինակում կապած, մի սովորութիւն, որ շատ վաղնջուց մնացած է անփոփոխ։

ՍԵՐԲԻԱ

— Վերջին ժամանակներս Սերբիայի Աղէքսանդր թագաւորը Հռոմ էր գնացել, ուր այցելել էր նա Պապին, որի հետ բաւական երկար տեսակցութիւն ու խօսակցութիւն ունեցաւ։ Այդ ճանապարհորդութեան նպատակը, ըստ Temps-ի թղթակցի, ոչ միայն այն էր, որ մի նոր կոնկորդատ (դաշն) կապէ Վատիկանի հետ, այլ և որ մի նոր Հռոմէական եպիսկոպոսական աթոռ հաստատել տայ Բէլգրադում։ Այժմ Սերբիայում հաշւումեն մինչև 10 հազար կաթոլիկ—պապականներ, որոնք ենթարկւում են Դիակովարի (Խրուաթիա) Շտրոմայեր եպիսկոպոսին։ Մինչև այժմ Սերբիան միակ երկիրն էր, ուր չկար հռովմէական եպ. աթոռ, և փոխանորդութիւններ։ Բոլղարիայում կան երկուսը, Ռումինիայում նոյնպէս երկուսը, իսկ Ղարադաղում՝ մէկը։ Սերբիայի թագաւորի նախանձը շարժուել է նոցա փառքի վերայ, և ահա Պապը շտապումէ կատարել Սերբիայի „disiderata"-ն։ Ի՞նչ է այդ քայլի նպատակը՝ դժուար է գուշակել։ Եպիսկոպոսական աթոռ հաստատել տալ և կոնկորդատ հաստատել Վատիկանի հետ միայն 10,000 հոգու համար՝ հազիւ թէ խոհեմութիւն լինի Սերբիայի կողմից։ Ռուսիայում կան եկեղեցիներ, որտեղ կարելի է հեշտութեամբ հաշուել 10,000 հոգի ծխականներ։ Սակայն այդ ծխականներն ունին միայն 2—3 քահանայ։ Հարկաւ շատ լաւ է, որ Սերբիան էլ ունենայ կրօնական ազատութիւն. բայց դժուար է ասել, թէ ինչո՞ւ Աղէքսանդր թագաւորը կամեցել է կոնկորդատ կռել և եպ. աթոռ հաստատել տալ 10,000 հոգու համար, որոնք ցրուած են թագաւորութեան բոլոր անկիւններում։ Դորանով Սերբիան ևս պատսպարում է իւր կրծքում պապական հաւատորսութեան մի նոր բոյն, որ հազիւ գոհացուցիչ տարր համարուի թագաւորութեան խաղաղութիւն տեսակէտից։ Դեռ շատ հեռու չէ այն ժամանակը, երբ Ղարադաղի «արծուի բոյնի» մէջներս մտան հռովմի «սև ագռաւները»։ Վատիկանի հետ կապած կոնկորդատի համաձայն, որոնք ներս եկան երկրի «ներքին խաղաղութիւնը»..... չպահպանելու համար։

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

ԳԵՐՄԱՆԻԱ.

Պրուսական հինգ նահանգների ընդհանուր եկեղեցական ժողովներում, որոնք միաժամանակ տեղի ունեցան հոկտեմբեր ամսին, հարց եղաւ նաև Հայոց մասին, և երեքը ընդունեցին եկեղեցիներում ի նպաստ տառապեալների հանգանակութիւն անելու առաջարկը։ Առանձին ուշադրութեան արժանի է այստեղ Աւետարանական միութեան ներկայացուցիչ պաստոր Բաումանի վարմունքը, որ ներկայ լինելով Բրանդեմբուրգի ժողովին Բերլինում, աշխատեց եկեղեցական հանգանակութիւնը իբրև անտեղի ցոյց տալ՝ որովհետև հակառակ էր գտնում այն արտաքին քաղաքականութեան ձգտումներին և վստահ չէր, թէ ժողոված դրամները իրենց նպատակին կհասնեն՝ որովհետև հայերից քչերն են աւետարանական և նոցա վարած կռիւն աւելի ազգային, ցեղական կռիւ է, քան կրօնական, քրիստոնէական։—Յետոյ նա իւր հայեացքներն աւելի ևս պարզել է Reichsbote թերթի մէջ գրած յօդուածներով, որոնց էական միտքն այն է, թէ հայերին չարժէ օգնել, որովհետև նոքա չափից դուրս անպիտան ժողովուրդ են, թէ ինքը պաստորը նոցա մասին շատ վատ բաներ գիտէ, բայց չէ ասում, որպէս զի չխանգարէ մասնաւոր բարեգործների յօժարակամ նուիրատուութեանը։—Christliche welt-ի խմբագիրը, որ մնում է դեռ անվեհեր պաշտպան, ամենուրեք քաղաքականապէս, նիւթապէս թէ բարոյապէս հալածուած հայերի՝ իւր բուռն զայրոյթն արտայայտելով այս առթիւ, չգիտէ՝ արդեօք իբրև մի արտաքոյ կարգի մոլորութիւն, թէ իբրև յայտնի անզգամութիւն ընդունէ Բաումանի ասածները։ Նա հրաւիրում է վերջինիս յամենայն դէպս ազատօրէն յայտնել իւր իմացած վատ բաները, և վատթար ակնարկներով աւելի ևս չվնասել առանց այն անոք ու թշուառ մնացած հայերի օգնութեան գործին։—Զգիտենք նորա հրաւէրին պատասխան եղա՞ւ, բայց... ինչպիսի ծայրահեղ յառաջադիմութիւն է արել չարամտութիւնը լուսաւոր, աւաղ նաև աւետարանական անունը կրող Եւրոպայում։ Գրիգորի մեծ Աստուածը թող կենաք ու կարողութիւն տայ նահատակ ժողովրդին անաչառ պատմութեան առաջ ապացուցանելու, որ նա այնքան վատ չէր, այնքան աւելի վատ, քան բոլոր միւս ժողովուրդները, որ առանց խղճահարուելու մորթել արժան լինէր նորան։

—Նոյն խմբագիրն իւր թերթի № 47-ում խօսելով այն հալածանքի մասին, որին ենթարկուումէ ողորմութեան գործը տաճկահայերի նկատմամբ, անօրինակ է գտնում «մեր դարու մարդասիրական և քրիստոնէական բարերարութեան պատմութեան մէջ այն սիստեմատիքական, մասամբ նաև կոպիտ եղանակը, որով զանազան հրապարակային ոյժեր ճընշում են այդ ողորմածութիւնը Գերմանիայում։ «Պետական բարձր պաշտօնեաների բարեկամական ազդարարութիւններ, կարծեցեալ բարեկամների խոհեմ ճառեր, և ամենից առաջ՝ հասարակաց կար-

ծիքի խեղաթիւրումն, որ ամենօրեայ մամուլի մի մասը յառաջ է բերում իրողութիւնները լռութեան տալով կամ յեղաշրջելով՝ խոչընդոտ են հանդիսանում նոցա դէմ, որոնք մի դժբաղդ ժողովրդի համար կարեկցութիւն զարթեցնել կկամենային»։ «Ոչ մի պետութիւն այնպիսի աչքի զարկող բարեկամական յարաբերութիւններ չէ պահպանում Տաճկաստանի հետ, ինչպէս Գերմանիան։ Ո՛չ մի ժողովուրդ գերմանացիների նման բարեկամ թուրքի ծառայութեանը չէ նուիրում իւր ամենաձեռնհաս որդիներին, նորա զօրքը զինուորական ոգւով, արուեստիւ և կրթութեամբ կենդանացնելու։ Ո՛չ մի միապետ մոներմական բարեկամութեան նշաններ չէ փոխանակում սուլթանի հետ, ինչպէս գերմ. կայսրը։ Ո՛չ մի մամուլ այնպէս միաձայն կերպով չէ աշխատում Տաճկաստանի ներկայ վիճակը պաշտպանելու ինչ որ հայկական խռովարարների կողմից սպառնացող վտանգի դէմ, ինչպէս պաշտօնական բնաւորութիւն ունեցող Գերմ. մամուլը»։ Այդպիսի հանգամանքներում Գերմանիոյ մէջ մի քաղաքական շարժում ի նպաստ հայերի յառաջ բերել անկարելի համարելով՝ նա ցոյց է տալիս, որ ուրեմն անմիտ է քաղաքական շրջանների կողմից բարեգործութեան դէմ ուղղուած հալածանքը և աւելի պէտք է գրգռէ ձեռնարկողներին։ Նորա կարծիքով Գերմանիոյ բռնած քաղաքական ընթացքը արևելեան խնդրի նկատմամբ բոլորովին սխալ է և սխալ հաշիւներով է առաջնորդուում, բայց մի կողմ թողնելով այդ՝ նա խօսքն ուղղում է հասարակութեանը և հարցնում։ «Ինչո՞ւ աւետարանական համայնքն արգելք է լինում հայերին ողորմածութիւն ցոյց տալու գործին»։ Պատասխանները երեք են. Ա. որ հայերը բարոյապէս անկեալ ժողովուրդ են։ Այդ կէտն իրրև «նըպատակաւոր բարբաջանք» ներկայացնելով հանդերձ՝* նա հարցնում է իրաւամբ. «Ի՞նչ ժամանակից ի վեր քրիստոնէական առաքինութիւն է դարձել գթառատ սիրով բարոյապէս անկեալի մօտից անտարբեր անցնելը։ Բ. որ իրենք գերմանացիք առանձին պակասութիւններ առանց այն էլ շատ ունին, որ հայերից միայն շատ քչերն են աւետարանական, որ Փոքր Ասիան շատ հեռու է իրենցից. այդ առարկութիւնների անհեթեթ լինելն ևս նա հեշտութեամբ պարզում է, ինչպէս և Գ. առարկութեան ներքոյ թագնուած նենգութիւնը՝ որով հայերին իրրև յեղափոխական են ներկայացնում։ Վերջապէս նա կանգ է առնում մի չորրորդ կէտի վերայ, որ նորա կարծիքով ամենակարևորն է և ամենից աւելի է կասեցնում շատերին. արդեօք հայերի համար թափած ամեն մի ջանք զուր չէ՞. արդեօք նոքա կորած չեն մի անգամ ընդ միշտ, և յիշեցնում է Ողորմած սամարացու առակը՝ որ ողորմում էր առանց Աստուծոյ պատկանած հաշիւների մէջ մտնելու. աղաղակում է պատկառել Աստուծոյ արդար դատաստանից, տեղիք չտալ կարմրելու սեփական զաւակների առաջ, նոցա սովորեցնելիս՝ սիրել ընկերին և օգնել նորան նեղութեան մէջ։

— Նոյն թերթի 46 հ.-ում մի պաշտպանողական յօդուած կայ պրոֆ. Թումայեանի համար՝ Post թերթի մէջ մի Գերմանացի սպայի նորա դէմ բարդած մեղադրանքների առթիւ։ Այստեղ խիստ վստահելի աղբիւրից առած հիմնական փաստերով ապացուցանուում է, թէ, տաճիկ դահիճների ձեռքից ազատուելուց յետոյ՝ Գերմ. ոստիկաններից ու լրագիրներից հալածուող աքսորականը ոչ մասնակցութիւն է ունեցել երբէք որ և է յեղափոխական շարժման մէջ և ոչ սուլթանից ներում ստանալով իւր ազգի օգտին չքարոզելու գրաւոր կամ բանաւոր խօսք է տուել։

— Հայ այրիներին ու որբերին խնամելու համար, որոնց թիւն, ինչպէս յայտնի է, Տաճկաստանում 400,000-ից աւելի է հաշուում՝ կազմուել է մի «Գերմանական կանանց օգնող ընկերութիւն Հայաստանի համար», որ և դիմումներ է անում գերմանացի կանանց, իրենց կարողութեան չափով օժանդակելու այդ բարի գործին։ Նուիրատուութիւններն ընդունում է կոմսուհի Եղիսաբէթ ֆոն—դեր—Գրէօբեն Ֆրանկֆուրտում։ Եթէ մի կամ մի քանի անձինք միասին 150 մարկ են նուիրում, նոցա անունով պահուում է մի որբ Փոքր Ասիոյ այս կամ այն տեղում կամ Կ. Պոլսում։ Այդ որբերը ժողովելու և խնամելու համար միջոցներ արդէն ձեռք են առնուած. Զմիւռնիոյ և Պրուսայի որբանոցներն աւելի և աւելի են ընդարձակում իրենց գործունէութիւնը. ձգտում կայ ուրիշներն ևս բանալու։

— Նոյեմբ. 9-ին վախճանեցաւ 69 տարեկան հասակում կայսերական պալատական քարոզիչ և զօրաց աւագ քահանայ Դր. Էմիլ Ֆրոմմել՝ բողոքական հոգևորականութեան ամենաաչքի ընկնող ներկայացուցիչներից մէկը, Վիլհելմ Ա.-ի ժամանակուանից սկսած պալատի սիրելի տներէցը և մի շարք արքայազունների դաստիարակը։ Բերլինում և ողջ Գերմանիայում յայտնի և սիրելի էր նա ոչ միայն իրրև հռչակաւոր քարոզիչ, այլ և իրրև մի մեծ բարերար անձն, որին հազարաւորներ օգնու-

* Ի մէջի այլոց նա ըներում է ծանօթութեան մէջ երկու հակառակ կարծիքներ հայերի մասին, որոնցից մէկի համաձայն ,,մինչդեռ թուրքը թմրած, բայց ազնիւ մէկն է, հայը խիստ շարժուն, բայց կատարելապէս անխիղճ մարդ է, որ հաւատարմութիւն ու հաւատ չի ճանաչում եւ ոչ մի երդում չէ կատարում ... որ գրեթէ սոսկալի կերպով տգեղ է եւ որի բնաւորութեան ամենից աւելի աչքի ընկնող կողմը խորամանգ վախկոտութիւնն է ելն.'', միւսի համաձայն ,,այն վատ համբաւին, որ յոյներն իրաւամբ վայելում են, հայերն արժանի չեն''։ Առաջինը այն աստիճանի ծայրահեղութեան է հասցնում իւր զրպարտութիւնը, որ չի ամաչում պնդելու. ,,թուրք կանայք բոլորովին պատուով են, մինչդեռ արեւելքի բոլոր պոռնկանոցները լի են հայ կիներով''։ Նա յորդորում է սիրել եւ խղճալ Սուլթանին, որովհետեւ նորա համար միապետի գաղափար է Վիլհելմ Բ.ը։

թեան ու խորհուրդի էին դիմում և գոհ մնում։ առանձին սիրով օգնում էր նա մանաւանդ արուեստագէտներին (նորա հայրը անուանի նկարիչ է եղել)։ Բացի քարոզներից նա թողել է մի շարք ուրիշ գրուածքներ ևս, որոնք պատուաւոր տեղ են բռնում եկեղեցական — ժողովրդական գրականութեան մէջ և հաճութեամբ կարդացուում։

ԱՄԵՐՈՒԱ։

Ցայտնի է, թէ ինչպիսի դիւրութեամբ և արագութեամբ նորանոր եկեղ։ համայքներ են կազմակերպուում Ամերիկայում։ Փրկութեան բանակի մի ճիւղն ևս, որ տարիներ առաջ գործունէութիւն էր սկսել այստեղ, այժմ կեդրոնից բաժանուել է և առանձին կազմակերպութիւն ստացել։ Դորանով գեներալ Բութի սկսած գործում դեռ նորա կենդանութեան օրով պառակտումն է ընկնում, և այն՝ նորա ամենասիրելի որդու, Բալլինգտոն Բութի, ձեռքով։ Վերջինս ընդհանուր ղեկավար կարգուած լինելով իւր հօրից Ամերիկայում, փեսերրուար ամսին հրաման ստացաւ նորանից տեղափոխուելու ուրիշ պաշտօնով։ բայց հակառակեց և յայտնեց, որ ինքն անկախ ազգային Բանակ պէտք է կազմէ։ Ծերունի Գեներալը իւր աղջկան ուղարկեց համոզելու։ բայց այդ ևս զուր անցաւ։ Եթէ չնայած նորա մեծ հեղինակութեան, որդու ձեռնարկութիւնը համակրութիւն է գտնում, գլխաւոր պատճառն այն է, որ ամերիկացիք չեն սիրում առհասարակ կապեր ունենալ հին աշխարհի, մանաւանդ Անգլիայի հետ։ Մի փոքր մաս միայն հաւատարիմ է մնացել Գեն. Բութին, բայց երևի երկար չի դիմանայ։ — Բաժանման գլխաւոր դրդիչը համարուում է Բալլինգտոն Բութի կինը։

—Ամերիկական բարքերի համար իրրև բնորոշ խրատական օրինակ կարող է ծառայել հետևեալ միջնադէպը։—Մի գերմանացի ներկայ է գտնուում Հիւս. Ամերիկայում այդպէս կոչուած Եղբայրական համայնքի մի քարոզչի տանը ճաշին։ Երբ ընտանիքի բոլոր անդամներն արդէն ժողովուած էին, ներս է մտնում մի երիտասարդ՝ կոշտ բանուորի հագուստով, ողջունում է հիւրին և նստում։ Վերջինս զարմացած խնդրում է տանտիրոջ ներկայացնել իրեն նոր եկող պարոնին, իսկ նա ծիծաղելով պատասխանում է. Երրորդ որդիս է։ Գերմանացին այն ժամանակ խղճալով ասում է նորան կամացուկ. Անշուշտ քեզ շատ հոգս է պատճառում դա։ — Այժմ տանտէրն էր զարմացողը. Ինչո՞ւ։ — Զէ՞ միւս որդիներդ պատուաւոր գիրք ունին՝ մին բժիշկ է, միւսը իրաւաբան, իսկ սա սոսկ գործաւոր է մնացել։ — Ամերիկացին ծիծաղից թուլացաւ. Ա՜յ եւրոպացու խելք։ Տղան հէնց նոր է յաջող կերպով դոքտորի քննութիւն տուել և աշնան այս ինչ Բարձր. դպրոցը կմտնէ պաշտօնով։ բայց նա չէ կամենում մինչև այն ժամանակ իւր հօր քսակից օգտուել, և ուրեմն ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ աշխատանք է յանձն առել մոտիկ ճանապարհի շինութեան վերայ։ — Այդպիսի բան երևակայելի՞ է մեզանում հարցնում ենք և մենք գերմանացու հետ։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

*
* *

Երբ լռում եմ ես՝ այս վիշտն ահագին
Հանգիստ չէ տալիս իմ տանջուած հոգուն։
Սիրտս կտրատում՝ մաշում են կրկին
Այս լացն ու հառաչ, յուսահատութիւն։

Եւ ասում եմ ես։ յանցանք է լռել,
Երբ այսչափ մեծ է եւ անծայր չարիք։
Մի՞թէ պիտ սպասենք որ մեզ անարգել
Հասնէ եւ վերջին ահռելի մրրիկ։

Եւ խօսում եմ ես։ բայց էլ չէ հնչում
Գարնան ցնծալից իմ հին մեղեդին։ . . .
Ես էլ միայն կոծում, միայն հառաչում—
Իմ լացն եմ խառնում ընդհանուր ողբին։

—ᲧᲐᲨᲐᲢᲘᲚ—

Հաւատում եմ—մոռնելու չէ սուրբ զաղափար,
Եւ անմահ է որ մեռնում է նորա համար։
Հաւատում եմ—չկայ ոչինչ յաւէրժական,
Բայց սուրբ գործի ոյժը ղիւմիչ՝ չունի՞ վախճան։

Մի վհատի՛ր, յառաջ զընա՛, անքաղդ եղբայր։
Թող խորտակուի ըաց ովկիանում նաւդ հողմավար,
Թող զայրանայ գլխիդ մրրիկ ահեղաշունչ
Եւ մոլեգին կլանէ յորձանք դիդ անմռունչ։ . . .

Բայց հաւատա՛, դու չեռ յաղթուած, ոչ ոյժն յաղթող—
Եւ նոր քաջեր կելնեն անշուշտ քեզ յաջորդող,
Եւ կը գրաւեն նորա այն ափը ցանկալի,
Եւ նոր այնտե՛ղ փայլը փառքիդ կը բորբոքուի։

Թող աւերուի հայրենի տունն հիմնայատակ,
Բայց քանի հուրն առկայծում է դեռ մոխրի տակ,
Նորա կորուստն, ո՜հ, մի՛ ողբալ դու սգաւոր—
Իրրեւ փիւնիկ նա կը յառնէ անշուշտ մի օր։ . . .

Ե. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ։

ԵՂԻՇԷԻ
ԵՒ
ՄԱԿԱԲԱՅԵՑԻՈՑ ԳՐՔԵՐԻ
ՑԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ.

Հայոց գրականութեան քիչ թէ շատ ծանօթ անձանց մօտ բաւական ընդհանրացած մի կարծիք է, որ Եղիշէի և Մակաբայեցւոց գրքերի մէջ իրար նման շատ կէտեր կան, մինչև իսկ առաջնի հեղինակը և երկրորդի թարգմանիչը միևնոյն անձն են համարուում։ Բայց որքան մեզ յայտնի է, ցարդ այս առթիւ չի եղել մի ուսումնասիրութիւն, որ մեզ ցոյց տար այդ կարծիքի հաւաստիութեան չափը կամ հերքէր, եթէ չհաշուենք Ն. Բիւզանդացու և Գ. Խալաթեանի գրածները, որոնցից առաջինը, ինչպէս տեղեկանում ենք, մի մանրակրկիտ համեմատութեամբ * ճգնում է ցոյց տալ Մակ. գրքերը, Ագաթանգեղոս, Փ. Բիւզանդ և Կորիւն իբրև մէկ զրչի արդիւնք՝ որով անուղղակի հերքում է Եղիշէի և Մակաբայեցւոց գրքերի մասին ցայսօր տարածուած կարծիքը. իսկ երկրորդը՝ պ. Գ. Խալաթեանը, պ. Ց. Պողոսեանի «ուշագրաւ յօդուածներով» (?!) ընդոստուցեալ, ըստ Եղիշէի, իւր մի նամակով ** Եղիշէին յետագայ դարերի հեղինակ է հռչակում և «առանց մանելու Եղիշեան աղբիւրների մէջ ... բանասէրների համար աւելորդ չի համարում ... ծրագիր տալ ... խնդրի մանրամասն մշակման համար»։ Եթէ մի առ մի նշանակում է այն գրքերը, որոնցից Եղիշէն կարող էր օգտուած լինել ընդհանրապէս (Աստուածաշունչ, Եղնիկ, ասորի հին վկայաբանութիւններ և այլն), և ի մասնաւորի կանգ է առնում Փիլոն Եբրայեցու և Մակաբայեցւոց գրքերի վերայ։ Ցարդեալի պրոֆեսորի խօսքով այս վերջինները «այնպիսի աղբիւրներ» են, որոնցից քաղել է Եղիշէն ոճերը, դարձուածները (այս Փիլոնից) և կրօնական պատերազմի ընդհանուր գաղափարը .... պատմական պարագաներ և գործող անձինքների նկարագիրը (Մակաբայեցւոց գրքից՝ Ա. և Բ.)։ Մենք միայն այս երկու աղբիւրների վերայ ուզում ենք կանգ առնել, որովհետև միայն սրանց մասին պ. Խալաթեան քիչ թէ շատ բան է ասում։

Ոճ և ոճաբանութիւն բանահիւսութեան տեսութեան մէջ յայտնի իմաստ ունին և վերաբերում են յատկապէս լեզուին՝ մտքի արտայայտութեան եղանակին և գործածուած բառերին ու նոցա դասաւորութեան։ Արդ եթէ այդ իմաստով ըմբռնելու լինինք վերևի համեմատութիւնը, պիտի կարծենք, որ Եղիշէ և Փիլոն լեզուի կողմից շատ նման են իրար, որ ոչ միայն ճշմարտանման չէ, այլ բոլորովին սխալ է. Եղիշէ և Փիլոն հայկաբանութեան երկու բեւեռներն են. որքան պարզ, դիւրըմբռնելի և սահուն է առաջինը, այնքան խրթին, դժուարահասկանալի և անհարթ է երկրորդը։ Մի փոքրիկ համեմատութիւն բաւական է մեր ասածը հաստատելու համար. առնենք երկուսի նոյն իսկ սկիզբը.

ԵՂԻՇԷ	ՓԻԼՈՆ*
Բանն զոր պատուիրեցեր արարի, ո՛վ քաջ. վասն Հայոց պատերազմին հրամայեցեր, յորում բազումք առաքինացան քան զսակաւս։ Ահա նշանագրեցի յայսմ եօթն յեղանակիս, առաջին՝ զժամանակսն ելն։	Ցորժամ զյաղագս նախանամութեան բանդ կամէի քննութեամբ հարցանել, եւ անցեալ դիպէի զյաղագս իւրաքանչիւր ուրուք այնոցիկ, որ ի բնութեան իւրաքանչիւր ուրուք եղեալ կատարեցան՝ իրացն օրինակ. զի ճան իմաստնոց զլսելիս գիտացի բասրել, եւ հարցանել յաղագս սորա։

Այս երկու գրքերի լեզուն աչքի է ընկնում իւր տարբերութեամբ նոյն իսկ միևնոյն իմաստի արտայայտութեան մէջ.

ԵՂԻՇԷ	ՓԻԼՈՆ**
«Որոյ ոչ է տեսեալ զմեծ թագաւորն՝ պատուաւորացն մատուցանէ զերկրպագութիւն.	Որք մինչդամ զմեծ թագաւորն ոչ տեսին, նախարարքն եւ որ ընդ նովաւն զառաջնոյ թագաւորին զարժանաւորութիւնն.

Մի ուրիշ աւելի աչքի ընկնող օրինակ ևս.

Զուգութիւն է մայր բարեաց եւ անզուգութիւն ծնող չարեաց.	Զուգութիւնն՝ արդարութիւն ծնաւ, անզոյգն աղբիւր է չարեաց։

* Մայր աթոռի Տպարանին յանձնուած։
** Հանդէս Ամսօրեայ 1895 թ-ի Ապրիլ համար։

* Փիլոնի Եբրայեցւոյ բանք երեք... Աշխատասիրութեամբ Հ. Մ. Վ. Աւգերեան ի Վենետիկ. 1822.
** Նոյն գրքի յառաջաբանի IV եւ V երեսներում։

Ուրեմն բոլորովին հակառակը պիտի ասել Փիլոնի և Եղիշէի յարաբերութեան համար. Եղիշէն առել է իմաստներ, բայց բոլորովին այլ ոճ, այլ դարձուածներ է բանեցընում. դեռ այս ևս հարց է, այդ իմաստների աղբիւրը երկի համար մի երրորդ՝ ցարդ մեզ համար անծանօթ հեղինակ չէ՞ր կարող լինել։

Գանք երկրորդ աղբիւրին, Մակաբայեցւոց գրքերին։

Եղիշէն և այդ գրքերը մօտից ճանաչողը անշուշտ մեծ նմանութիւն է գտնում նոցա մէջ, բայց այստեղ ընդհակառակն ծանրութեան կէտը ոչ թէ բովանդակութեան, այլ ոճի, լեզուի նմանութեան կողմն է։ Համեմատութեանց շատ կողմեր կարելի է այստեղ առաջ բերել և ամեն մէկի համար բազմաթիւ օրինակներ։ Որքան որ մեր ոյժերը ներել են, մենք համեմատել ենք Եղիշէն և Մակաբայեցւոց գրքերը, սակայն համեմատութեանց բոլոր մանրամասն օրինակները այստեղ դնել չենք կարող տեղի սղութեան պատճառով. միայն այսքանը կասենք, որ եթէ մէկը ի մօտոյ ծանօթ է Եղիշէին, Մակաբայեցւոց գիրքը կարդալիս նրան այնպէս է թուում, թէ Եղիշէ է կարդում և ընդհակառակը՝ Եղիշէ կարդալիս, Մակաբայեցւոց գրքի տողերը նրա յիշողութեան մէջ վերարտադրուում են։ Այդ նմանութիւններից ոմանք քիչ թէ շատ ընդհանուր են և մեր միւս մատենագիրների համար, թէև այստեղ աւելի աչքի են ընկնում. իսկ միւսները յատուկ են միայն այս երկու հեղինակութեանց լեզուին, որով և դրանց միջի կապը ամեն կասկածներից բարձր են կացուցանում։ Մի կողմը դնելով այն ամեն մի տողում պատահող լեզուի ձևերը, որոնցով լի են երկու հեղինակութիւնները — «ի պարտութիւն մատնեցաւ պ.. յերեսաց Նորա ... Ամդ էր տեսանել զմեծ աղէտ տարակուսին... Փախստական լինէր առաջի Նորա... Ասպատակ սփռէր ընդ աշխարհն ամենայն.. Եկն եհաս ի վերայ քաղաքին Լ. մեծաւ պատրաստութեամբ... Հրձիգ արար զամենայն....ի գերութիւն վարեցին զկանայս և զմանկունս... Յայնմ մարտի բազում վիրաւորք անկանէին... Իսկ ո՞ր ազգ իցէ, որ ոչ... Եկին ի մարտ պատերազմի ևն ևն.....» գանք աւելի աչքի զարնող նմանութեանց։ Առաջին կարգի նմանութեանց միայն անուններն ենք յիշում, թողնելով ընթերցողի հետաքրքրութեան բաց անել համեմատել. իսկ երկրորդի օրինակները դնում ենք.

1 Թէ Եղիշէին և թէ Մակաբայեցւոց գրքերին յատուկ է նոյնանիշ բառերի գործածութիւնը իրար մօտ իբր յատկացուցիչ յատկացեալ.

2 Զոյգ նոյնանիշ բայեր դիմաւորի և անցեալ դերբայի ձևերով.

3 Միևնոյն իմաստը կրկնել նման բառերով և նախադասութիւններով.

4 Աշխարհաբառի ձևեր. ա) Յատկացուցիչը յատկացեալից նախադաս. բ) Որ յարաբերական դերանունը զի շաղկապի տեղ. գ) Աշխարհաբառի դարձուածներ.

5 Յատկացեալին անմիջապէս հետևող յատկացուցիչը յատկացեալի ետ նախդրով.

6 Փոխանակ երրորդ դէմքի առաջին դէմքով ստորոգելի (իբր գործող անձի բերնից)։

Երկրորդ կարգի նմանութիւնները բազմաթիւ նախադասութեանց նմանութիւններն են և այն էլ բառական, որոնցից միայն շատ քչերը պիտի կարենանք այստեղ դնել իբր օրինակ.—

ԵՂԻՇԷ.*	ՄԱԿԱԲԱՅԵՑՒՈՑ ԳԻՐՔ. **
1 ... Որ յիրաւի ասացի ամուր եւ անել, քանզի չիք անդ տեղի փախստի եւ թաքստի Բ. երես 55.	1 .. Ոչ կարէք դուք զդէմ ունել զայդչափ այրուժոյ ի դաշտի, ուր ոչ գուցէ թուի թաքստի, եւ ոչ տեղի փախստեան. Ա. Ժ. 75.
	2 Անաւասիկ զօրք ճակատեալ են յանդիման մեր, ոչ ամուր թաքստի եւ ոչ դաշտ փախստի, եւ գետս Յորդանան. Ա. Թ. 45.
3 Հաճոյ թուեցաւ քանն առաջի թագաւորին եւ ամենայն մեծամեծաց. Բ. յեղանակ, երես 55.	3 Հաճոյ թուեցաւ քանն առաջի թագաւորին եւ իշխանաց նորա. Ա. Զ. 60.

* Տպագրեալ ի Վենետիկ 1893.

** Գիրք Աստուածաշունչք ի Վենետիկ՝ 1860.

4 Յիշեցէք զմեծ քահանայն Փենեհեզ, որ սպանմամբ երարձ զպղծութիւնն ... եւ յազգէ յազգ երդմամբ հաստատեաց զքահանայութիւնն. Ը. 20.

4 Փենէէս հայր մեր նախանձայոյզ՝ նախանձեցաւ արդարութեան եւ առ կտակ յաւիտենից զքահանայութեանն Ա. Բ. 54.

5 Յիշեցէք ամենեքեան ըզհարսն զառաջինն յիւրաքանչիւր ժամանակս ... որ ըստ հաւատոյ քաջութիւնս կատարեցին ի դարս իւրաքանչիւր Ե. 199, 205:

5 Յիշեցէք զգործս հարցն մերոց, որ ինչ արարին ի դարս իւրաքանչիւր. Աբրահամ ապաքէն ի փրկութեան գտաւ հաւատարիմ ... Ա. Բ. 54.

6 Յարձակէին եւ զաջ թեւն բեկեալ եւ զձախոյ կողմամբն արկեալ ... եւ փախստական առնէին մինչեւ յամուր տեղիս մայրեաց ... Գ. 144.

6 Զաջակողմեան թեւն բեկանէր եւ զձախսն արկանէր եւ անդստին առաջի արկեալ փախստեայս տանէր մինչեւ ի կողմանս լերինն Ազովտայ Ա. Թ. 15.

7 Սաստկապէս բախեալք ընդ միմեանս՝ յերկոցունց կողմանց բազում վիրաւորք յերկիր անկեալ դիաթաւալ խաղային Զ. 224.

7 Ցանմ վայրի վիրաւորք յերկուց կողմանց անկեալ ընդ երկիր թաւալէին. Ա. Թ. 17.

8 Գուժկան հասանէր յաշխարհէն Հայոց զճակատ հարեալ, զօձիս պատառեալ, զամկատ հարեալ վան ... 145.

8 Գուժկանք հասանէն ի կողմանցն ... զօձիս պատառեալ, զճակատ հարեալ եւ զգոյժս զայս տային Ա. Ե. 14:

9 .. Եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց ... բայց միայն յարութիւնս քաջութեան վատութիւն մի՛ խառնեսցուք Ը. 189. եւ Թ. 36.

9 Քաւ լիցի ինձ առնել զիրսդ զայդ.— եթէ հասեալ իցէ ժամանակ մեր, մեռցուք քաջութեամբ ի վերայ եղբարց մերոց, եւ ո՛չ խառնեսցուք զանուն վատութեան ընդ արութիւնս քաջութեան Ա. Թ. 10.

10 Վկայ են մեզ երկինք եւ երկիր .... ի զուր անողորմ են հարուածքս ի վերայ մեր Թ. 36.

10 Զի աւադիկ վկայ են մեզ երկինք եւ երկիր, զի ի զուր տարապարտուց կորուսանէք զմեզ Ա. Բ. 58.

11 Ամենայն ազգ եւ լեզուք, որ ընդ իմով իշխանութեամբ՝ դաղարեսցեն յիւրաքանչիւր մոլար օրինաց եւ միայն եկեսցեն յերկրպագութիւն արեգական ... Բ. 35:

11 Ընդ ամենայն աշխարհս հրամարտակք արձակեցան, զի թողցեն ամենայն ընակիչք երկրին զօրէնս իւրաքանչիւր եւ ի մի օրէնս նորա կացցեն. Ա. ա. 43.

12 Եթէ միայն, ասէ, յանձին կալցիք զօրէնս մոգութեան, ի մեծութիւնս եւ յաւագութիւնս հասուցից ... նա առաւել զանցուցից .. Բ. 34.

12 Երդմամբ հաստատէր ի մեծութիւնս եւ յաւագութիւնս հասուցանել, երանելի առնել յաշխարհի Բ. Ի. 24.

13 Ընդ յանձանձէր ածէր զօրավարն զկաց եւ զմնաց զօրականին ... հասուցեալ յաւուրս երեսուն ի սահմանս հայրենի աշխարհին ... Գ. 147:

13 Ընդ յանձանձէր զկաց մընաց ժողովրդեան, մինթարէր զամենեսեանն ... մինչեւ ածէր հասուցանէր յերկիր Հրէաստանի Ա. Ի. 53.

Ահա որտեղ պէտք է փնտռել սկզբում յիշուած ընդհանրացած կարծիքի հիմքը, որով պարզ երևում է, թէ այս երկու գիրքը եթէ միեւնոյն հեղինակի գրչից չեն եղել, որ ըստ մեզ ճիշդ է, գոնէ Եղիշէն այնքան հմուտ է եղել Մակաբայեցւոց գրքերին, որ իւր պատմութիւնը շարադրելիս Ս. Գրքի յիշեալ մասի լեզուն այնքան բնական կերպով հիւսել է իւր սեփականի հետ. հարկաւ այդ երկու անձինք, եթէ միայն երկու են՝ առաջնի թարգմանիչը և երկրորդի հեղինակը, միեւնոյն դպրոցին պէտք է պատկանած լինէին:

Ս. Ց.

„Русская старина“ ամսագրի այս տարուայ Սեպտեմբերի տետրում լոյս տեսաւ Ներսէս Ե.-ի մի նամակը գրուած իշխան Դմիտրիյ Իվանովիչ Դոլգորուկիին,* որ թարգմանաբար յառաջ ենք բերում:

Մարտ 6. 1854 ա. № 106. ի Ք. Տփղիս.

Այն բարերարութիւնը եւ հզօր պաշտպանութիւնը, որ ցոյց տրուեցաւ Ձեր կողմից հայերին՝ քարեխօս հանդիսանալովն Ե. Մեծութիւն Պարսից Շահի առաջ, որ ամենաողորմածաբար շնորհեց հայոց Ս. Փրկիչ մենաստանի մինչեւ այժմ հաւաքուած բոլոր պարտքերը եւ ազատեց նորան ընդ միշտ բոլոր պետական պահանջներից եւ հարկերից՝ կանգնեցին Ձեզ համար Եկեղեցու արժանի գաւակ, ամբողջ հայ ազգի անհուն եւ յարատեւ շնորհապարտութեան արձան եւ նոցա սրտերի տախտակների վրայ փորագրեցին Ձեր անմահ անունն, ի շարս այն մեծ ազգային բարերարների, որոնք արժանի են յաւիտենական շնորհակալութեան:

Թէեւ Ձերդ պայծառափայլութեան բազմաթիւ բարերարութիւնների համար ես արդէն բաղդ ունեցայ արտայայտել իմ խորին շնորհակալութիւնս առ Ձեզ՝ իմ եւ ինձ հա-

* Իշխանն այդ ժամանակ Ռուսիոյ լիազօր դեսպանի պաշտօն էր կատարում Թէհրանում՝ Պարսից Դրանը:

ատացած հօտի կողմից, 1851 թ. հոկտ. 20-ի № 361 նամակովս, բայց միշտ ի յուշ ունենալով այդ ամէնը, ես կրկին իմ սրտեռանդն շնորհակալութիւնս եմ յայտնում Ձեր հայ ազգին մատուցած բոլոր ծառայութիւնների համար, որ Ձեր առ Ս. Եկեղեցին տածած ճշմարիտ քրիստոնէական — կրօնական զգացումների արտայայտութիւնն է միայն:

Աղօթելով, որ Ամենաբարձրեալը իւր շընորհաց օրհնութիւնն առաքէ Ձերդ Պայծառափայլութեան եւ Նորա Ձեզ պարգեւած ընտանեացդ վրայ, ես վերառաքում եմ առ Նա ջերմաջերմ աղօթքներ, որպէս զի երկարէ Նա Ձեր օրհնեալ կեանքն ի փառս քրիստոնէութեան եւ յուրախութիւն Ձեզնով բարեբաստ վիճակ ունեցող հայ ազգի. թող Նորա Աջը հովանի լինի Ձեզ՝ Ձեր բազմաշխատ գործունէութեան ասպարիզում:

Հաճեցէք, Ձերդ Պայծառափայլութիւն, ի փառս Ռուսիոյ մեծազօր կայսեր անուան, որի ներկայացուցիչն էք, շարունակելով Ձեր բարերարութիւնը զեղուլ հայերի վրայ, ցոյց տալ եւ Ձեր հզօր պաշտպանութիւնը եւ աջակցութիւնը մօտ ժամանակներս ազգային գործերով Թէհրան եկած Իսպահանի հայոց թեմական առաջնորդ Թադէոս եպիսկոպոսին՝ նորա իրեն հաւատացած Քրիստոսի հօտի վարչական գործերի մէջ, եւ հաւատի եղէք՝ թէ առ նորին բարձր սրբազնութիւնը Ձեր կողմից արտայայտած շնորհները ես կընդունեմ իբր ղէպի ինձ արտայայտած՝ իբր ճշմարիտ բարերարութիւն ղէպի իմ ազգը:

Ենթադրում եմ, որ Նորին Պայծառափայլութիւն Իշխանուհին եւս արդէն ներկայացրած կլինի յիշեալ արհուն Ձեզ, այն բարեհաճ ուշադրութեամբ, որ ունի առ նա:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԲԵԿՈՐՆԵՐ.

(Ռուլանքեի բարբառով) *

Քամին էկաւ էրան էրան,
Մշու քաջեր սեւաւորան,
Տարան կիտան թօփի բերան.
Մայրըկայ դարտեր սարերով էր.
Անո՛ւշ, անուշ, անուշ Ջան:

Ես Իսակն էնք Իստամպօլցին,
Օտներս ձեռներս քալամ ջեցին,
Դէպի Պօլիս յըղրկեցին.
Մայրըկայ դարտեր եկն . . .:

Ես Արշակն էնք միխանաջի,
Փախայ էլայ սարեր մացի.
Զարէս կտրաւ, նստայ լացի,
Եօթն օր բօպիկ ձան վրայ մացի.
ՄԱՑՐԻԿ, մայրըկայ դարտեր եկն . . .:

Աստուած սպանէ քօր վարժապետ,
Քեսաւոր մատնեց, սանիկն ի հետ.
Ճամբէս էլաւ դէպի Պօլիս,
Թաժայ նոր հարս տեղիս դրեց.
ՄԱՑՐԻԿ, մայրըկայ դարտեր եկն:

Սուրբ ծննդեան մեծի տօնին,
Մզիկ յիշէք մեզ աղօթքին.
Ես գնացի ամ ու վուխով,
Ձը՛զնէ մացի խիստ կարօտով.
Մայրըկայ դարտեր եկն:

*
* *

Զօզօն զօզօն Զիարաթցիք,
Էլմէ զօզօն Զիարաթցիք: [1]
Կրուտնի ուտող էդ կառնէնցիք.
Օսկոր կոծող էդ ջրեցիք.
Մեռել քրուող ցառնչվանցիք.
Պասի ուտող ցառնչեցիք.
Թուլթուն ցանող էդ Մօկունցիք.
Խաղող ուտող Դէրկէմնցիք.
Վանքի շներ էդ ցառխրցիք.
Շատ կտրիճ էն հաւատորկցիք.
Շատ ազգասէր էդ բերթակցիք.
Գմշու պահող էդ Նորշէնցիք.
Պաղ ջուր խմող Ալիզոնանցիք.
Մրոտրպ պահող էդ Սօխգոմցիք.
Սիրող կէնէն էդ ցողունցիք.
Ծառ ու ճղոտ էդ հափնեցիք.
Շատ վախկոտ էն էդ բգլցիք.
Իրկրի անօթին էն խոբերցիք.

---

* Ս. Հայկունու ժողովածուից:

1. Իրաքանչիւր տողի վերջը կրկնել „էլմէ՝ զօզօն Զիարաթցիք“.

Շատ քֆրկան էդ Սուլուխցիք.
Շատ ձիաւոր էն Ցախջնցիք.
Գէժ ու ըլէլ Շէխուսուֆցիք.
Շատ կեղտոտ էն Ցալիճանցիք.
Աղի (աղայի) պահող Շէխբրրմցիք.
Հարօրի գող էդ Խարտօսցիք.
Ցէրկէն չօքեր էն Ցրօնցիք.
Ձմերկի ուտող Ցօրկընօսցիք.
Շատ խորոտիկ էդ Ցունանցիք.
Քուրտու քվա Քրղազոմցիք.
Բէկի պահող էդ Դվնիկցիք.
Խօնխի պահող Ապլբուհարցիք.
Շատ գող ու գէշ էդ Զօրաւկցիք.
Շատ խոտով էն էդ Հացկցիք.
Ժաժկի գող էն Բլաթուխցիք.
Կոշտ ու կոպիտ Իրիզակցիք.
Հայվնի նման Մկրազոմցիք.
Օչխրի պահող Ալիզլբունցիք.
Զոր ու ցամաք էդ Բարտկցիք.
Շէխի պահող էն Թլեցիք.
Մուտուռ պահող Ալզաղբրցիք.
Զիրար մատնող էդ Դրմերտցիք.
Աղի կրող էդ Ցուշտամցիք.
Մեռել քրֆող Ցարգամնեցիք.
Շատ տաճկցող էն Ցարգլցիք.
Գլզլի ուտող քուրդ Ցուշտամցիք.
Կամբետ ծախող էդ Նորգեցիք.
Փալխի քաղող էն Մառնկցիք.
Դոլ զուտնաջի էդ Ցառնիստցիք.
Խռամ ցանող էդ Խարսեցիք.
Ճլի քաղող էդ Ցարտօնցիք.
Խսլի գործող Վարդենրսցիք.
Քալամ ցանող Ցաղբենեսցիք.
Քօռ ու քեռաչալ էդ Մօզակցիք.
Շատ դօլվաթուրը Մուշախշրցիք.
Մատակ պահող էդ Կօտեցիք.
Կարաս շինող էն Ցաւզուտցիք.
Շատ յաշխիեա էդ Խրվեանցիք.
Բարդոց վառող էդ Ֆոկեցիք.
Զիրար սպանող էդ Վարդխաղցիք.
Փէտի ծախող էն Ֆղակցիք.
Ճամբու կտրող Դեղծմերրցիք.
Խեղճ ու հէսիր Ցէրշտերրցիք.
Սոսուռ լաջի էդ Խասգեղցիք.
Օչխրի գող էն Քօլօզկցիք.
Սուտ ըսող էն Շմնակցիք.
Պուտկի շինող Ցառուառինջցիք.
Զօզան յէլնող էդ Մառնրկցիք.
Կլուկի ուտող էդ Մշեցիք:

ՍՕՅԼԱՄԱԶ ԽԱՆԸՄ.

(Զը խօսող տիկին)։

Մէկ թագաւոր մը կեղնի, էդ թագաւոր ուր աչքերուց կը քօռնայ. հէքիմ կը բերին վերէն, հէքիմ կըսէ.

— Ձուկ մը կայ մըջ ծովուն. թէ զէն ձուկ բռնեցին բերին, զընտոր լեղին հանին լցրին թագաւորի աչքեր, կը սաղնայ։

Էլաւ թագաւորի տղէն առաւ զհէքիմներն ու մէկ հզար թօռչի մը, գացին։ Թօռչիք թօռ թալեցին մըջ ծովուն. օր մը չէ, երկու, Ասու հրամանքով զէն ձուկ բռնեցին, դրեցին օսկի լակնի (կոնք) մէջ, տուին թագաւորի տղի ձեռ։

Թօռչիք առէջ վազան, ակնջկլա տարան թագաւորին, տղէն մնաց էտեւանց. ձուկն էլաւ հետ լեղու, ըսեց.

— Թագաւորի տղայ, իմալ օր դու մէկ իս, ես լէ մէկ իմ. արի զիս թորկ երթամ, քու աղէկին աղէկ կէնիմ։

Թագաւորի տղէն լէ վերուց զձուկ թալեց ի ծով.

— Հզար տարի իմ պապ քօռնայ, զէդ ձուկ պտի պրծում, ըսեց։

Հաւար տարան թագաւորին թէ—ինչ կէնես, օր քու տղէն զձուկն էլմը թալեց ի ծով։

Թագաւոր ամր էրեց, օր զտղէն սուրկուն էնին ուր երկրից։ Քշեցին տղին հանին ուրանց սինօռից դուրս։ Տղէն էր ընկաւ ճամբախ ու գնաց։ Շատ ու քիչ գնաց Աստուած գինայ, մէկ լէ իշեց օր ճամբխու վրէն օձ մը մուկ մը բռներ է. էդ խուֆարայ մուկ ըմալ կը վժվժէր։ ըմալ կը ճըվճըվեր։ օր տղի սիրտ էլ թամուլ չը տուեց։ զարկեց զօձ սպանեց. մուկ փախաւ մտաւ ծակ։ Տղէն էլմը ճամբախ տուեց։ առէջ գնաց։ Տղէն մէկ արտաբոյ տեղ գնաց չը գնաց։ դարձաւ իշեց օր մէկ պայէ մի էտեւանց վաղնելին գիգայ. կայնաւ։ պայէն էկաւ հասաւ։ հարցուց.

— Աղբէր։ դոր կերթաս։

— Ըսկի։ ըսեց։ կերթամ խարիպ քաղաք մը դատելու։

— Ես լէ քզի ընկեր։

Էղան ընկեր ու գացին։ Փշում՝ տեղ գացին։ իշեցին օր ուրիշ պայէ մ՝ լէ էտեւանց կը բօռայ ու գիգայ։ Կայնան։ էկաւ հասաւ.

— Դոր կերթաք։ աղբէր։ ըսեց.

— Կերթանք խարիպ քաղաք մը իտարի։

— Ես լէ ձզի աղբէր։

Երեքն էղան աղբէր. մեռնինք հիտրաց։ ապրինք

հետրաց. խօսք տուին իրարու, ու էլան ընկան ճամբախ Դացինմէկ ջոջ քաղքի մը մէջ. ուրանց դուքան մը քրով բռնեցին, էն մէկ աղբէր էղաւ խայվաչի, մէկէլ էրկուս լէ ամէկ բանի մ՝ էղան. դէպրա դէպրա (հետզհետէ) գօլվաթուորցան, էղան դունի մալի տէր.

Էղաւ օր էդ քաղքի մէջ լէ մէկ աղջիկ մը կէր, անուն Սօյլամազ—Խանըմ. Էդ աղջիկ ըսկի մարդու հետ չը զրուցէր. որն օր զընտոր տէր զըրուցք, թագաւոր կը պսակէր վըր ընտոր.

Էլան էն էրկու աղբէր կանան, ըսին թագաւորի տղին.

— Աղբէր, էս օր դու օր կաս, մեր ջոջն իսարի քզի կարգինք, օր գոր գայ մըզի.

Զէ, մէ, ըսեց թագաւորի տղէն. հըմա տեսաւ, օր եախա չը պրծու, ըսեց.

— Դու գինաք, իմալ կէնիք էրիք.

— Աղբէր, ըսեցին, մենք պտի Սօյլամազ-Խանըմ ուզինք քզի.

— Թառ. Սօյլամազ—Խանմ չը զրուցէ, լալ ու կեառ է.

— Քզի դաւի չկայ, մենք կիտանք զրուցք.

Էլան էդ աղբրտան, առան զթագաւորի տղէն առէջ ուրանց, գացին աղջկայ պապու մօտ.

—Մենք էկեր ինք, ըսին, օր քու աղջիկ տաս մեր աղբօր.

— Թըխ էղնի, ըսեց, օր զիմ աղջիկ տուիցիք զրուցք, ես լէ կիտամ ձեր աղբօր.

Էդ էրկու աղբէրն էն, էլան առան զթագաւորի տղէն, զխազին, զմուֆթին ու դէմ գացին աղջըկայ մօտ.

Ճամբէն էն մէկ աղբէր զթագաւորի տղին քաշեց թահնա, ըսեց.

— Աղբէր, ես կեղնիմ մուկ, դու զիս դիր քու ջէպ. օր գացինք Սօյլամազ—Խանըմի մօտ, դու զիս թորկ, ես կերթամ մտնիմ ընտրա չրախպի (աշտանակ) տակ. Ներս օր մտար, բարև տուր. աղջիկ գինամ քու բարև չառնի. դարձի իմ թարաֆ ըսէ.—Չրախպա՛ աղբէր, բարի իրիկուն քզի. ես քու բարև կառնիմ. Դարձի էլմը աղջկան ըսէ. Սօյլամազ—Խանըմ, մժուլի մ՝ էրէ, ականջ էնինք. —Էնիկ քզի ականջ չենէ, նոր էլմը դարձի իմ թարաֆ, ես ըստապուն կը զրուցիմ.

Ըտոնք էն, էլան հիտրաց գացին մըտ Սօյլամազ—Խանըմ. Ներս մտան թը չէ, թագաւորի տըղէն ուշիկ մը զմուկ հանեց թորկեց. մուկ գնաց մտաւ չրախպի տակ. Թագաւորի տղէն բարև տուեց. Սօյլամազ—Խանըմ չառաւ զընտրա բարև. դարձաւ չրախպին.

— Բարի իրիկուն քզի, չրախպա՛ աղբէր. Զըրախպէն զբարևն առաւ.

— Սօյլամազ—Խանըմ, մժուլի մ՝ էրէ ականջ էնինք.

Սօյլամազ—Խանըմից ձէն չէլաւ. տղէն ըստապուն դարձաւ չրախպին.

— Չրախպա՛ աղբէր, մժուլի մ՝ էրէ, ականջ էնինք.

Չրախպէն էլաւ զրուցք, մաճլիս ըմէն ականջ էրին. Ըսեց.

— Իրեք հոգի մէկ արտ մը կիսրար կը ցանին, մէկ կէղնի լծկի տէր, մէկ արտի տէր, էն մէկէլլէ սերման տէր. Ցանքից օր կը խըլըսին, մէկ ժուկ մը կը մնայ, արտ կը հասնի, կը բերին քաղին, ծեծին, կերնին, կը շէղնին, ըստապուն գիկան օր կիսին մըջ իրար, կը կռուին. ջոջ խալապալաս մի կը սարգին. Սերմի տէր կըսէ՝ ընծի կը հասնի, արտի տէր կըսէ՝ ընծի, լծքի տէր կըսէ՝ ընծի. խազի, մուֆթի, ըպա էդի վի՞ր պտի հասնի.

— Խազին ըսեց՝ կը հասնի լծքի տիրուն, մուֆթին ըսեց՝ կը հասնի արտի տիրուն. Սօյլամազ—Խանըմ վէրուց ըսեց՝ Աստուած ձեր պէս շարեաթ գետնուվի տանէ, էդ յի՞մալ շարեաթ կէնիք. կը հասնի ցորնի տիրուն.

— Խազի՛, մուֆթի՛, ըսեց տղէն, դու շհա՞տիք օր Սօյլամազ—Խանըմ զրուցեց.

Ըմէն հըտ իրար ըսեցին—հա՛.

Ըտոնք էլան գացին, թագաւորի աղչիկ գնաց չրախպի բոլոր.

— Տօ՝ փիցուկի՛ չրախպա, ըսեց. դու յօրի՞ հըտ յիս չը զրուցես, էդ յօրի՞ խարիպ մարդու հետ կը զրուցես.

Բռնեց ջարդեց, բրդեց զչրախպէն, թափեց դուս.

Էն լուսմթի, էլմը թագաւորի տղէն ու մաճլիս էկան մըտ աղջիկ. Տղէն հըտ մոնեալուն մուկ թորկեց, ըտհաղս լէ մուկ գնաց մտաւ աղջկայ բարձի տակ.

Թագաւորի տղէն էլմը բարև տուեց, աղջիկ բարև չառաւ.

— Բարի իրկուն քզի, բա՛րձ աղբէր.

— Բարով ու խէրով էկար, թագաւորի՛ տղայ.

— Բա՛րձ աղբէր, մժուլի մ՝ էրէ ականջ էնինք.

Բարձ աղբէր վէրուց ըսեց.

— Մէկ տէրտէր մը, թարզի մը ու նաճար մը կեղնին, ըտոնք կընկնին ճամբախ կերթան, մէջի մէջ մութ կիտայ վրէ ուրանց, կըսին.—դօրով զիրար պայինք, չեղնի՞ ջանավար մանավար մըջ քնուն ուտին մզի.

Առջի հեղ դօր ընկաւ նաճրին, էն էրկուս քնան.

Նաճար էլաւ ուրին խաղնելիք, փետէ իսան

մը չինեց, դրեց յօն։ Սհաթն օր թմաւ։ Նաճար իմցուց զթարզին, ինք քնաւ։ Ըստապուն թարզին մուղատ կեցաւ։ Թարզին իշեց, օր հանտե նաճար փետե իսան մը չինէ, դրէ յօն, ըսեց.

— Էգի զուր մարիֆաթն է ցուցեր, կանի ես լէ զիմ մարիֆաթ ցուցում։

Թարզին լէ էլաւ ձեռք մը կնկայ հալաւ կարեց, հագուց զփետե ինսան։

Սհաթն օր թմաւ, դօր էկաւ տէրտրոջ, ըստապուն տէրտէր էլաւ։

Տէրտէրն էր, առջի հեղ էլաւ լուացուաւ, խաչ հանեց էրես, բերեց կրակ վառեց, իշեց կուշտ ու բոլոր, տեսաւ օր մէկ նոր հարս մը կանուկ է։ Տէրտէր խաղճուկ միամիտ, բանից խապար չունէր. դարձաւ ըսաւ.—օրշնած, արի նստի։ Է՛ փէտից ձէ՞ն կէլնի, ժաժ գիդայ։ Տէրտէր էլաւ կայնաւ, ձեռ թալէց օր բերէր նստրցուցէր, հարս շրբփաց ի գետին, էղաւ քառսուն ու չորս կտոր։

Տէրտէրն էր կանաւ լաց.—վա՜յ, վայ ըսեց, էղայ պարտատէր, մնայ մեղքի տակ, իմա՛լ զէդ քուլֆաթ սպանեցի։

Տէրտէր էդտեղ կանաւ ժամ ու պատարագի, լաց ու աղաղակեց. Աստուածուտին օղորմացաւ զէդ փէտե ինանին հոգի տուեց էլաւ կանաւ։

Լուսումթի իրեք լէ էլան, զէդ փետե կնկայ վրէն զիրար տարան բերին (կռուեցան). Նաճար ըսեց՝ ընծի կը հասնի, թարզին ըսեց՝ ընծի, տէրտէր լէ ըսեց՝ ընծի. մըկայ խազի, մուֆթի, շարեաթ ձեր ձեռն է. էդ վի՞ր կը հասնի։

Խազին ըսեց՝ կը հասնի նաճրին. մուֆթին ըսեց՝ կը հասնի թարզուն. Սօյլամազ—Խանըմ վերուց ըսեց.

— Աստուած զձեր շարեաթ գետնուվի տանէ. տէրտէր կանաւ արնէ արտըսունք թափեց։ Աստուածուտին ընտրա խելճն իշեց, զփէտն հոգևորցուց, հոգի էկաւ ինք. էտի տէրտրոջ կը հասնի։

— Խազի, մուֆթի, շըհատ մացէք, Սօյլամազ—Խանըմ իտա լէ էրկու հաղ կը զրուցէ։—Մաճլիս էլան գացին։ Սօյլամազ Խանըմ էկաւ բարձի բոլոր, վերուց զբարձ, ձևըռտեց, էրեց հղիկ հղիկ, թալեց մէկ գիու։

Լուսումթի քօման էլմը էկան. թագաւորի տղէն զմուկ թորկեց. ըստապուն մուկ գնաց մնաւ աղջկայ մինտարի տակ։

— Մինտա՛ր աղբէր, ըսեց թագաւորի տղէն, կիշիմ՝, օր բարձ աղբէր յուտա չէ, դու մժուլի մ՝ էրէ, ականջ էնինք։

— Վ՛ըր իմ գլխուն, ըսեց մինտար. ականջ էրէք։

— Կեղնի մէկ ըխտիար մարդ մը սիվտակ մուրսաւոր, մէկ լէ՝ ալէխառն նոր էր ընկէ չանէն. էն մէկել լէ նորահաս տղէ մը, թաժա նոր էր մրէ պէխեր։ Դէլնան կընկնան ճամբաս. կերթան մէկ սարի մը գլօխ, կիշին օր հանդէ թաժա նորհարս մը էն դիուց զընգլուկ, զարդրուկ գիդայ։ Էն ծեր մուրքաւոր ըսեց՝ ընծի, էն ալէխառն ըսեց.—չէ, ոբլա՛ իմն է, էն ջէհէլ տղէն լէ ըսեց.—չէ, էգի նոր հարս է, ես ջեհէլ տղայ, յիս կը հասնի։ Խազի, մուֆթի, շարեաթ էրէք, էդ վի՞ր կը հասնի։

Խազին ըսեց.—Ընտոց ջոջ էն մուրքաւորն է, կը հասնի ընտրան. մուֆթին ըսեց—չէ, կը հասնի էն ալէխառն մարդուն. Սօյլամազ—Խանըմ վերուց ըսեց.

— Աստուած ձեր պէս շարեաթ գետնուվի տանէ, կը հասնի էն նորահաս տղին, օր թաժա պէխեր մրեր է։

—Խազի, մուֆթի, դու շհա՞տ իք օր Սօյլամազ—Խանըմ իտա լէ իրեք հաղ, օր զրուցեց։

— Հա՛, ըսեցին, մենք Ասու առէջ շհատ ինք. աղջիկ հալ ու խոշ էղնի քզի։

Էլան ըստապուն Սօյլամազ—Խանըմ ուզին թագաւորի տղին. դհոլ ու դուսանք զարկին, խաղ ու խնդում էրեցին, բերին զէտոնց պսակեցին։ Էն մէկ աղբէր առաւ զթուր կանաւ մութ տեղ. տղէն էրեց չերեց աղջիկ չը գնաց մօտ։ Պարկաւ քնաւ. Սօյլամազ—խանըմ լէ միամտաւ քնաւ։ Ձէն տեսար, օր պատ բլաւ ու յուշապ մը բերան բաց ու ֆշալին զինք թալեց ներս. օրոտում ընկաւ էդ յոդէն։ Ցուշապ դէմ էրեց վըր տղի տեղաց, օր զաղէն կլուցէր, թուր քաշող աղբէր մութ տեղէն վազաւ ընկաւ վըր յուշապին, բրդեց էրեց թուրթուն, թափեց փանճարի տակ։ Դու մ՝ըսի էդ յուշապ լէ սեր թալէր էր վըր էդ աղջկան, էկեր էր օր զաղէն կլուցէր ։առնէր զաղջիկ ուրին։

Սօյլամազ—Խանըմ նակաստան թռաւ իմցաւ, իշեց դէս ու դէն բան չկայ, լըլկեց զտղէն՝ տեսաւ տղէն սաղ էր. նոր էն մութ կանող աղբէր բօռաց.

— Սօյլամազ—Խանըմ, էլ մը վախեցի, զքու խանիմ (թշնամի) խուրպան էրեցի քզի։

Նոր Սօյլամազ—Խանըմի զիպար բացուաւ, խնտացաւ, էկաւ ընկաւ վըր տղի օտաց։

Աֆանտըմ շատ չէրկնցունք. ժամանակ մը մէջ ընցաւ, էն մէկ աղբէրն ըսեց թագաւորի տղին.

— Աղբէր, էլի առ զքու քուլֆաթ, էլմը էրթանք դըպա մըր էրկիր։

Գացին թագաւորից իզին առան, էկան բարձան զտուն ու դը քշէ, գացին հասան էն տեղն, օր թագաւորի տղէն զմուկ օձի բերնէն պրծուցեր էր.

— Դէ՛ թագաւորի տղայ, ըսեց էն մէկ աղբէր, ես էն մուկն իմ՝ օր զընծի զալըմ օձու ձեռնէն պրծուցիր. իմ իզին տուր ես մտնիմ իմ ծակ։

Թագաւորի տղէն նոր սարվախթ էղաւ. գ՝արի

տես ինչ փաթուան իրար վզով պագրուտեցին, խնդացան։ Մուկ ջոկնուաւ մտաւ ի ծակ, ընդոնք քշեցին էկան։ Էկան ծովու պռունկ էլան դուս, ըստապուն էն մէկէլ աղբէր կանաւ ըսեց.

— Թագաւորի տղայ, ես լէ էն ձուկ աղբէրն իմ, օր զընծի պրծուցիր, դը կանի ես քու պապու աչքերուն լէ դեղ բերիմ, նոր զիմ իզին տուր։

Ձուկ զինք թալեց ի ծով, առաւ զդեղն էլաւ դուս, տուեց տղին.

— Դը գնա՛ ըսեց, Աստուած քու բան յաջողէ։

Տղէն քշեց էկաւ, ձէն հասաւ ուր պապուն թէ—քու տղէն կարգուիր է, հըտ ուրին քու աչքերու դեղ լէ բերեր է։

Էկան ձիով ձիաւորով, դհօլով, զուռնով վերցին զտղէն առաք փառաք տարան Թագաւորի սարի դուռ իջուցին։ Դեղ հասուցին, Թագաւորի աչքեր հըտ գահուն բացուաւ, նոր էլաւ թաժա զուր տղի հարսնիսն էրեց, քառասուն օր վըրեար քէֆ ու խաղ ու խնդում էրեցին. ըստապուն Թագաւոր բերեց զուր թախտն ու թաճ թասլիմ էրեց տղին. տղէն խնտացաւ, էլաւ նստաւ վըր թախտին։

Մնաց ժամանակ մը, տղի վրէն սափար (կռիւ) բացուաւ. տղէն էր ժողուեց զուր օրտուն, գնաց զուր դուշման ալթ էրեց, դարձաւ էկաւ, նոր նըստաւ ու վեղեց զուր Թագաւորուտեն։

Ցիսուս միան Տէրն իմ խանչէ, օր հանի ՅԸՄէն նեղածներուն, յետի սօղին լէ զիտա ըսողին։

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.

ԱԶԱՏ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ

ԵՒ

ԱՐՀԵՍՏՆԵՐ

(Մոնպէլիէի համալսարանի տարեկան բացման ճառ)

ՊՐՈՖ. ՇԱՐԼ ԺԻԴԻ.

Տարին մի անգամ այս դահլիճի մէջ հրաւիրում ենք Մոնպէլիէի մեծ հասարակութիւնը, որ միասին ուրախանանք մեր համալսարանի յառաջադիմութիւններով, ուսանողների թուի աճմամբ, և հաստատուն հաւատ ունենանք այն օգտի մասին, որ մենք յոյս ունինք տալ գիտութեան և երկրին։

Ոչ մի ժամանակ այսպիսի ձգտում չի նշմարուել դէպի ազատ պարապմունքներն, ինչպէս այսօր։ Իրողութիւնն անհերքելի է։ Բայց աւելի ևս ակնյայտնի կացուցանելու համար, թոյլ տուեցէք, որ պարզ թուանշաններ ներկայացնեմ։ Մինչդեռ քառասուն տարուայ ընթացքում Ֆրանսիայի երկրագործ և արդիւնաբերող դասակարգը կորցրեց իւր թուի տասերորդ մասը, ազատ պարապմունքներին նուիրուող բազմութիւնը աճեց աւելի քան մի երրորդով։

	1856	1886	1891	
Երկրագործութեան պարապմունք . . .	52,9°/₀	47,8°/₀	47,3°/₀	նուազած 10,73°/₀
Արդիւնաբերութեան .	29,1°/₀	25,2°/₀	25,9°/₀	
Ազատ պարապմունքներ եւ յեկամտից ապրողներ	9,1°/₀	11,1°/₀	12,71°/₀	աւելացած 39,55°/₀

Իսկ որովհետև այդ ասպարէզների մէջ մտնելու համար մեծ դուռը համալսարանն է, ապա ուրեմն այդ երևոյթը նախ և առաջ մեր վաստակն է։

Բարի։ Իբրև անդամ այս համալսարանի և իբրև Մոնպէլիէի քաղաքացի, ես առաջինը եմ ուրախանում և պարծենում այդ հանգամանքով։ Բայց որովհետև ձեր առաջ խօսողը պատիւ ունի քաղաքական տնտեսութեան ուսուցչապետ լինելու, թոյլ տուեցէք նորան, որ այս շնորհաւորական բերկրութեանց փոքր ինչ անհամապատասխան ձայներ ևս խառնէ, գրեթէ վտանգի ազազակ հանէ։ Ներեցէք, եթէ համարձակուում եմ այն խիստ չարաղուշակի դերը յանձն առնել, որին Հռովմում հարկադրում էին յաղթականների կառքի մէջ բարձրանալ, որպէս զի իրանց տօնախմբութիւնը չփոթէ դուժաբեր ճշմարտութիւններով։

Ա.

Ի՞նչ է նշանակում ազատ պարապմունք մեծահնչիւն անունը։ Իւր ստուգաբանական և պատմական ծագմամբ դա անշուշտ պիտի նշանակէր այն մարդկերանց դրութիւնը, որոնք ապրում էին ազատականի պայմաններում

և ոչ թէ իւրեանց ձեռքի աշխատութեամբ՝ ստրուկների կամ ճորտերի պէս։

Մարդիկ սկսել են հնարներ փնտռել ձեռքի աշխատութիւնից ազատուելու համար ոչ այսօր և ոչ երէկ։ Այդ վախճանով նոքա գործ են դրել ամենայն միջոց. ի սկզբան՝ ուժի իրաւունքը ամենակոպիտ ձևով, երբ որ վայրենին ստիպում էր թոյլ սեռին, իւր կնոջը, հերկել երկիրը և կրել ծանրութիւնները, իսկ ինքը որս էր անում, քնում էր, կամ՝ եթէ կարմրամորթու պէս քաղաքակրթուած էր՝ ծխամորչ էր ծխում.—հեթանոսութեան ժամանակներում՝ զէնքի իրաւունքը, իշխող ազգի իրաւունքը, յաղթուածներին գերի դարձնելով և կեանք շնորհելով՝ աշխարհակալի օգտին աշխատելու պայմանով.—աւատական կարգերի ժամանակ՝ ծագման իրաւունքը, որ անգործութիւնը աւագորեարի արտօնութիւն է համարում և արգելում է նորան գործածել իւր ձեռքերը՝ այդ պարտականութիւնը թողնելով այն մարդկանց, որոնք «ծագում չունին», ինչպէս ասում էին այն ժամանակի գոռոզ խօսքով։

Այսօր այդ բոլոր արտօնութիւնները ոչնչացել են, բայց դոցա փոխարէն հնարուել է մի ուրիշ եղանակ հող մշակելուց կամ երկաթ ծեծելուց ազատուելու համար՝ այն է ստանալ, ինչպէս որ բնորոշ կերպով ասուում է, «տեղ», իսկ եթէ հնարաւոր է «լաւագոյն տեղ»։

Ես չեմ պնդում, թէ առաւելապէս արհեստից փախչելու ցանկութեամբ՝ մարդիկ այս օր ճգնում են իրանց համար կամ որդւոց համար ազատ պարապմունք ունենալ. բայց տարակոյս չը կայ, որ դա է գլխաւոր պատճառներից մէկը։

Տեսէք, թէ մեր օրերում ինչպիսի ջանքերով կամ առաւել լաւ է ասել, գլխապատառ հետամուտ են և մէկ մէկու առաջ կտրելով վազում են տեղեր ստանալու համար, և կեզրակացնէք, թէ ձեռքի աշխատութիւնից փախչելու ցանկութիւնը դեռ ևս կենդանի է մեր արեան մէջ, ինչպէս և էր նախնական մարդկանց մէջ։ Շինականը աշխատում է իւր որդուն դարձնել տիրացու, գրագիր, խանութի աշակերտ. այս առաջին քայլն է ձեռքի աշխատութիւնից ազատուելու համար։ Հետևեալ սերունդներում թոռները հարցաքննութեան կրգան և մեզանից կը խնդրեն այս մրցանակագրերը, որոնք այնպէս յարգի են, աւա՜ղ, ոչ թէ ի սէր գիտութեան, այլ ի սէր նիւթական առաւելութեանց, որոնց ճանապարհը սոքա բանում են։

Եթէ հնար լինէր տեղեր ստանալ առանց մրցանակագրի, անտարակոյս նոցա համար աւելի ևս ցանկացողներ կը յայտնուէին։ Սորանով է բացատրուում մանրում ծախողների, գործակատարների, ամեն կարգի միջնորդների, և սոցապէսների դասի արտակարգ աճումը, որ ազատ պարապմունքների դասից շատ աւելի ստուար է. նոցա թիւը, որ երեսուն տարի առաջ 1,500,000 էր, այժմ հասել է 4 միլիոնի։ Բայց մեզ այժմ այդ դասը չի զբաղեցնում։

Ես չեմ կամենում երկարել վիճակագրութեանց մասին։ Բայց և այնպէս նոցանից մէկը հետաքրքրական է. Փարիզի Սենատի պրեֆեկտիւրը տպագրում է պաշտօնների և թեկնածուների թուի տախտակը։ Բացուելիք պաշտօնների թիւն է 299, իսկ թեկնածուների թիւը՝ 21,088, ուրեմն իւրաքանչիւր պաշտօնին 70 ցանկացող։ Տախտակից երևում է և այն, որ ոչ ամենայն պաշտօն միակերպ հետամտութեան առարկայ է դառնում։ Թեկնածուների գլխաւոր իղձն է տեսուչ դառնալ, որ ասել է՝ եթէ մենք չենք սիրում ինքներս աշխատել, դորա փոխարէն շատ սիրում ենք նայել և ստիպել ուրիշներին աշխատելու։

Որպէս զի այսպիսի խռնման դէմ արգելք դրուի, դժուարացրել են դէպի պաշտօններ տանող ճանապարհները, որոնց առաջ շարել են հարցաքննութիւններ՝ հասարակ և մրցութեան, վկայագիրներ, մեծածաւալ ծրագիրներ։ Ինչպէս որ եգիպտական բագինները պահպանուում էին անշարժ և փառահեղ սֆինքսների երկար շարքերով, այսպէս էլ այսօր գիտութեան տաճարները պահպանուում են նորագոյն սֆինքսներով։ Մենք ենք այդ սֆինքսները, որ սրբութեան առաջ շարուած լինելով՝ անարժաններին մուտք չենք տալիս։

Մենք էլ դժուարալոյծ հանելուկներ ենք առաջարկում և մնում ենք պատասխանին։ Բայց մենք աւելի հեզ ենք, քան մեր հնագոյն պաշտօնակիցները. եթէ ճիշդ սպասած պատասխանը չը ստանանք, մենք ոչ օրին չենք պատժում ուտելով։ Մենք ուսանողներին տալիս ենք «երկարաձգութեան ժամանակ», այսինքն հրաւիրում ենք կրկնել։ Եւ այսպիսի երկարաձգութիւնը գրեթէ երբէք անհետևանք չի լինում. ապացոյց—այն առասպելական ուսանողը, որ միայն մի հարց գիտէր և այնքան անգամ ներկայացաւ, մինչև որ հէնց նոյն հարցը առաջարկեցին իրան։

Ուրեմն այս արգելքները թոյլ են. դոքա սակաւներին են յուսահատեցնում մնացածները դոցա վրայից անցնում են աւելի եռանդով։ Նորերս լրագիրները զարմացմամբ և հիացմամբ մի արժանաւոր ընտանիք յիշատակեցին, որ բաղկացած լինելով հօրից, մօրից, ուստրներից և դուստրներից՝ մենակ ձեռք է բերել ոչ պակաս քան 23 մրցանակագիր։ Այս զարմանալի չէ, որովհետև ուսումը աւելի և աւելի ծաւալուում է։ Միւս կողմից պետութեան ձեռնարկութեանց խիստ ընդարձակուիլը, հասարակական խոշոր հաստատութեանց և մեծամեծ ընկերութեանց զարգացումը, մի խօսքով՝ փոխադիր և ուղղորդ ճախարակների այս ահագին մեքենայական սարուածքը, որ կարծես թէ նորագոյն քաղաքակրթութեան նկարագիրն է կազմում աւելի և աւելի լայն ասպարէզներ է բանում ազատ պարապմունքների համար։ Բայց դոքա ամէնքը բոլոր պահանջներին գոհացում չեն տալիս, այլ շատերի համար լոկ մի հնարաւորութիւն են դառնում կամ մարդկանց մեծ մասի մէջ յոյս են սնուցանում թէ կարող են ազատ մնալ իրանց ձեռքի աշխատութիւնից։

Այս հանգամանքի դիմաց մենք իրաւունք ունինք անհանգիստ լինելու։ Մի թէ անպատիժ կը մնան մարդկանց այսքան ջանքերը, որով նոքա ձգտում են փախուստ տալ այն մեծ օրէնքից, որ ոչ միայն գրուած է ծննդոց գրքի առաջին գլուխներում, այլ և բնական ու տնտեսական օրէնքները նոյնն են քարոզում մինչ այսօր՝ այնպէս բացորոշ կերպով, ինչպէս և առաջին օրը. «Քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո»։ Ձեռքի աշխատութիւնը պէտք է գոյութիւն ունենայ. առանց նորան անհնարին կը լինի շքեղութեան որ և է առարկայ արտադրել։ Եւ եթէ մենք հնարներ ենք գտնում նորանից ազատուելու, ապա ուրեմն ուրիշները պէտք է աշխատեն մեր տեղը։ Այս երկայրի դրութիւնից դուրս ելնելու հնար չը կայ։

Բարեբախտաբար այսպէս չի կարող շարունակուիլ և կարծես թէ ժամանակի մի քանի նշաններով կարելի է գուշակել մօտալուտ փոփոխութիւնը։

Ես ուզում եմ հէնց այդ երևոյթները մատնացոյց անել։

Բ.

Ո՞ր պատճառներն էին ստիպում մարդկանց յընթացս բոլոր ժամանակների ազատ պարապմունքները դերագասել արհեստներից։

Առաջին պատճառն այն է, որ ձեռքի աշխատութիւնը աւելի դժուար և կոպիտ էր, քան մտաւոր աշխատութիւնը։ Ծղել է և կայ մի անարգական բառ, որով անուանել են ձեռքով աշխատողին՝ այդ է «մշակ» բառը։ Սակայն մեքենական գիւտերի շնորհիւ այդ կոպիտ անունը հետզհետէ կորցնում է իւր որոշ նշանակութիւնը։ Գիտեմ ինձ կը պատասխանեն, թէ երբ ամենայն բան սկսի մեքենաների միջնորդութեամբ կատարուիլ, այնուհետև ձեռքով աշխատողները կը գործածուին լոկ որպէս հնոց վառողներ կամ հընոցապաններ, և թէ այդ փոփոխութիւնը մեծ վաստակ չի լինի և աշխատանքն աւելի հաճելի չի դարձնի. բիրտ կոշտացած ձեռքերն անշուշտ աւելի հաճելի են, քան սևացած ձեռքերը։ Բայց արդէն ուշ է այսպէս խօսել։ Զիկագոյի աշխարհանդիսին յիսուն և երկու հնոցներով բանեցնում էին հազար շոգեշարժներ։ Բայց եթէ ուզենայիք հնոցների այս հսկայական մարտկոցը կառավարողներին փնտռել, դուք կը տեսնէիք մի միայն սպիտակ հագնուած երեք ջենտլմէններ, որոնք զբօսնում էին հնոցների բերանների առաջ։ Հնոցները ջեռուցա-

նուում էին նաւթով, ուստի և յիշեալ ջենտըլ-մէնները հարկ չունէին ձեռքով շօշափել քարածուխի ոչ մի կտոր, այլ միայն շրջեցնում էին մի քանի պտուտակներ, նայելով սահմանուած քանակների տախտակին, և այն նշանների համեմատ վարուելով, որ նոցա սովորեցրել էին մեքենագէտները։ Ապա ուրեմն, մի այսպիսի պարզ հանգամանք՝ որ այսուհետև կարելի է հնոցապանի արհեստը կատարել սպիտակ զգեստ հագած, հաւատացնում եմ ձեզ, մի փոքր յեղափոխութիւն է ձեռքի աշխատութեան պայմանների մէջ։

Սակայն մինչդեռ ձեռքի աշխատութիւնն աւելի դիւրանում է, մտաւոր աշխատութիւնն ընդհակառակն աւելի նուազ հրապուրիչ է երևում։ Ինչո՞ւ։ Գուցէ այն պատճառով, որ ազատ պարապմանց շրջանակը քանի աւելի է ընդարձակուում, այնքան մտաւոր գործունէութիւնը սկսում է կորցնել իւր նշանակութիւնը, որ նորան առաջ բարձրացնում էր։ Մինչև անգամ ամենաազնուական համարուած ազատ պարապմունքների մէջ՝ որքան ստրկութիւն, որքան անօգուտ աշխատութիւն կայ, որ աւելի բռնի աշխատութեան դրոշմ ունի, քան որ և է արհեստ։ Ժամանակի այն կորուստը, որ բարձրագոյն պաշտօնեան պարտաւոր է գործ դնել թղթեր ստորագրելու վերայ, պատգամաւորը՝ իւր ընտրողներին նամակներ գրելու վերայ, մատենագիրը՝ սրբագրութիւնների վերայ, ուսուցչապետը՝ անօգուտ հարցաքննութիւնների վերայ—հարկաւ աւելի զարհուրելի և ծանր է, քան այն, որ գործ է դրուում կիր շաղախելու կամ աթոռի ոտները խարտելու համար։

Բայց գուցէ մտաւոր աշխատութիւնը այն պատճառով ևս յոգնեցուցիչ է դառնում, որ աւելի և աւելի հեռանում է ձեռքի աշխատութիւնից։ սորա ապացոյց կարող է լինել մրցախաղի այն բուռն սէրը, որ մեր ժամանակներում մինչև այսահարութեան է հասել, և որով մեր հաշմած բնութիւնը կարծես թէ ուզում է նորոգել իւր կորուստը։ Ապացուցած է, որ գլխի աշխատութիւնն այնքան մշկնային խոնջութիւն և յոյժերի սպառում է պատճառում, որ շատ քիչ պակաս է ձեռքի աշխատութեան սպառումից։ Մի իտալացի, պրոֆեսսոր Մոսսօ, գործիք հնարեց, որ կոչեց էրգօգրաֆ, և որը չափում է և գրով նշանակում մկնակային կծկմանց յոյժը։ Ապշեցուցիչ հետևանքներից մէկն է հարցաքննութեանց հետևանքը, բայց ոչ թէ ուսանողների համար, ինչպէս որ անշուշտ դուք կը կարծէք, այլ մեզ՝ հարցաքննողներիս համար։ «Հարցաքննողը,—բերում եմ բառացի նորա վկայութիւնը,—որ մինչ հարցաքննութիւն սկսուելը նշանակում էր էրգօգրաֆի վերայ 53 կծկումն, յետոյ կարողանում էր առաջացնել ընդ ամէնը միայն 19 կծկումն։ Մինչդեռ նա լոկ 11 ուսանողների էր հարցրել։ Ուստի խնդրում եմ որ այսուհետև դէպի մեզ փոքր ինչ զիջող լինիք։

Ուրեմն ձեռքի աշխատութեան նկատմամբ ազատ պարապմունքների ունեցած մի առաւելութիւնը բաւական խախտուել է և մօտ է ոչընչանալու։ Բայց նոքա պահպանել են մինչև այսօր մի ուրիշ առաւելութիւն, որով միշտ գրաւիչ են եղել։ նոքա աւելի լաւ են վարձատրուել։ Քանի որ սոսկ կարդալ ու գրելը մի տեսակ մենաշնորհութիւն էր համարուում արդարև տալիս էր այն ամէն առաւելութիւնները, ինչ որ տալիս է ամենայն մենաշնորհութիւն՝ իսկ ամենից առաջ լաւ վարձ։ Այդպիսի երջանիկ ժամանակներում «ուսում ունենալը» նշանակում էր մայրագումար ունենալ։ Այժմ երբ որ ուսումը բաշխուում է ամենին, և ոչ միայն ձրի, այլ և պարտաւորիչ կերպով, և երբ որ թոշակների, ձրի դասերի, հրապարակական դասախօսութիւնների միջնորդութեամբ, թէ միջին և թէ բարձրագոյն ուսումը առատաձեռնութեամբ առաջարկուում է ամէն ցանկացողին՝ նա տնտեսական կողմից այլ ևս մեծ դին չունի։ Բայանի է, թէ այժմ որքան մարդիկ ձեռք բերած ունին հասարակ վկայական, բարձր մրցանակագիր, բակկալաւրի, լիցէնցիատի, թերևս և դոկտորի մրցանակագիր, բայց և այնպէս դոքա ամէնքը դժուարանում են ամսական 100 ֆրանկ բերող տեղեր ստանալ։ Կարելի է յուսարէն գիտենալ աւելի լաւ քան Վագիուսը, բայց մեր նիւթապաշտ դարում չարժանանալ ոչ մի գործնական վաստակի, և ոչ մինչև անգամ

Ֆիլամէնտի անարատ սիրոյն։ Մի գերմանուհի հաստատում է, թէ Բերլինում պատահել են դոկտորներ, լեզուագէտներ և փաստաբաներ, որոնք խնդրել են դռնապանի պաշտօն։ Այս դուցէ չափազանցութիւն երևայ։ Բայց ինձ յայտնի է Բրիւսսելի Hôtel—de—Ville-ի բարապանի տեղը, որի համար նոյն դէպքն է պատահել. քաղաքը պէտք է ընտրէր արժանաւորին, և այդ նշանաւոր տեղի համար թեկնածու հանդիսացան 33 իրաւաբան, 17 բժշկապետ, 21 ինժիներ, 3 քիմիկոս և 1 աստղաբաշխ։ Բայց այս էլ աւելացնենք, որ այդ տեղը տարեկան 25000 ֆրանկ ձեռաձիր (նաչայ) է բերում։

Վերջապէս մի բառ ամենայն ինչ կը բացատրէ. անկելանոցների վիճակագրութեան մէջ ազատ պարապմունքը մեծ տոկոս է ներկայացնում։

Իսկ երբ ազատ աշխատութիւնը այսպէս նուաստացել է տնտեսական օրէնքների բնական ընթացքի ուժով՝ զարմանալով տեսնում ենք, որ նոյն առաջարկի և պահանջի օրէնքի համաձայն՝ ընդհակառակն ձեռքի աշխատութեան կամ արհեստի գինը աւելի բարձրացել է։ Եթէ բացառութիւնները անուշադիր թողնենք, վարձի աճումն անհերքելի իրողութիւն է, որ չեն ծածկում նաև ընկերավարականները, նոյն իսկ բանուորները։ Մեր ժամանակ լաւ. բանուորը վաստակում է անշուշտ աւելի քան աստիճանաւորը, ուսուցիչը, գիւղական քահանան, դուցէ և ենթասպան։ Այս տարբերութիւնը նշմարուում է մանաւանդ նոր աշխարհներում, որոնք ապագայի ներկայացուցիչներ են, զոր օր. Միացեալ Նահանգներում կամ Աւստրալիայում։

Ուրեմն այս երկրորդ պատճառն էլ մեծ է վերանալու, որ ստիպում էր ազատ պարապմունքները գերադասել ձեռքի աշխատութիւնից։ Բայց մնում է վերջին և ամենից յամառ պատճառը, թէպէտ այդ աշխատում են ծածկել,—այսինքն այն, թէ ձեռքի աշխատութիւնը ամենայն ժամանակներում աւելի պակաս է յարգուել, քան ազատ գեղարուեստները։ Ո՜հ, ես ձանձրանում եմ, երբ որ ամեն պաշտօնական հանդէսներում և քաղաքական ճառերում կրկին և կրկին անգամ խօսքեր եմ լսում, իբր թէ մեր ժողովրդապետական ընկերութիւնների մէջ ձեռքի աշխատութիւնը յարգի է, փառաւորուած է, թէ նա վերստին գտել է իւր բարձր գնահատութիւնը։ Այո՛, մենք, քրիստոնեաներս, յօժարութեամբ յիշատակում ենք, թէ սուրբ Պետրոսը ձկնորս է եղել, իսկ սուրբ Պաւղոսը վրաններ էր շինում։ Մենք «ազատ որմնադիր» ենք, մեր բարքի նշանակ ենք վերցնում Ռ և եռանկիւնի. մենք դարաւերջի խորհրդաւորականներս (սիմվոլիստ) շնչասպառ ենք լինում հիացումից դէպի Ցոլստոյն, որ կօշիկ է կարում և խոտ է հընձում։ սակայն ինչպէս Համլէտն ասում է—սոքա բառեր են, բառեր։ Այս մինչև անգամ կեղծաւորութիւն է։ Մեզանից պակաս քաղաքակրթուած ազգերը աւելի անկեղծ են։ Բարձր դասի աննամիտները, որպէս զի յայտնապէս ցոյց տան, թէ իրանց ձեռքերը երբէք չեն դիպչել որ և է գործիքի, երկար եղունգներ են պահում։ Նոքա թողնում են, որ իրանց եղունգներն այնքան աճեն, մինչև որ ոլորուին, ինչպէս որ ոլորուում են պատատուկի ցողունները. ապա նոքա մատը ծածկում են սատափի կամ փղոսկրեայ երկար մատնոցով.... Մենք նոցա վերայ ծիծաղում ենք, իսկ մտածում ենք ճիշդ այնպէս, ինչպէս և նոքա։ Մեզանում ազատ պարապմունք ունեցողներից ոչ ոք չի գտնուի, որ համաձայնէր իւր որդուն բանուոր դարձնել կամ իւր դուստրը ամուսնացնել որմնադրի հետ։ Այս բաւական չէ, նոյն զգացմունքն է տիրում նաև այնպիսիների մէջ, որոնք ապրում են իրանց ձեռքի աշխատանքով՝ որովհետև մենք տեսանք նոցա ձգտումը, որ աշխատում են բարձրացնել, եթէ ոչ իրանց, գէթ որդւոց վիճակը, գտնելով նոցա համար տեղեր։

Բայց ո՞րտեղից է այս նախապաշարումը ձեռքի աշխատութեան դէմ։ Ես երկու պատճառ եմ տեսնում։ տնտեսական և բարոյական։

Խօսենք նախ տնտեսական պատճառի մասին։

Մեքենաները, ձեռքի աշխատութեան մեծապէս օժանդակելով, այսինքն ծանրութիւնից ազատելով և թեթևացնելով՝

յիրաւի կարծես թէ մեծ վնաս տուին բանուորին, աւելի եւս զրկեցին պատուից, խլելով նորանից նախաձեռնութեան և ինքնագործութեան ձգտումը, դատապարտելով նորան միակերպ մեքենական աշխատութեան։ Եթէ պատահմամբ ձեռքի աշխատութիւնը միացած է գեղարուեստի հետ, նա ի հարկէ չի արհամարհուում։ Ընդ հակառակն, զոր օր. անդրիադործի կամ նկարչի աշխատութիւնը՝ միթէ ձեռագործ չէ՞ սա, որ մարդկային փառաց գագաթնակէտին է հասուցանում։ Եւ եթէ միջին դարերի հասարակ արհեստաւորը ընկերութեան մէջ աւելի բարձր տեղ էր բռնում քան այսօրուայ բանուորը, եթէ նա պարծենում էր իւր ունեցած դիրքով, ինչպէս և բարձր դասակարգը իւր դիրքով, սորա պատճառն է, ինչպէս ասում է պատմագիր Ջանսէնը՝ այն, որ «գեղարուեստը ազատաբար աճում էր արհեստից, ինչպէս որ ծաղիկը աճում է ոստից»։ Պատճառն այն է, որ այն ժամանակ ձեռքի աշխատութիւնը կարողանում էր ամենահամեստ առարկաների վերայ անգամ դրոշմել անձնաւորութեան հանճարի կնիքը, որի համար այսօր եւս դոքա այնպէս անգին են— մինչև անգամ եթէ ժանգոտած կամ որդերից մաշուած լինին,—որի համար և դոքա կարծես թէ իբր կենդանի են ներկայանում այն բոլոր մարդկանց աչքում, որոնք գեղեցիկ իրերի մասին հասկացողութիւն ունին։ Բայց ո՞վ կարող է վստահութեամբ պնդել, թէ արտադրութեան այդպիսի ձևը անդարձ գնացել անյայտացել է։ Եթէ բնութեան այնպիսի ահեղ զօրութիւնը, ինչպէս որ շոգին է, կարողացաւ աշխատութեանը տալ անլուր հսկայական իշխանութիւն։-Թէպէտև մարդու անհատականութեան գնով և կարծես թէ բռնանալով, որ իւր ատամնաւոր անիւների և ճնշոցի տակ ամեն ինչ ծուխ ու մուխ դառնայ՝ ինչո՞ւ ուրեմն բնութեան ուրիշ աւելի նրբատեսակ զօրութիւն, ինչպէս զոր օր. էլեքտրականութիւնն է՝ որ երկաթէ թելերով է վազում և ասես թէ մանակցում է կեանքի խորհրդին—ինչո՞ւ չը կարողանայ նա մարդկային աշխատութեան վերադարձնել իւր նախկին անկախութիւնն ու ինքնուրոյնութիւնը։ Թող բարեփոխութիւնը արդիւնաբերութեան մէջ ձեռքի աշխատութիւնից քաղէ ոչ թէ լոկ միայն մի միջոց օրական պարէն հայթայթելու համար, այլ գեղարուեստական գործ յառաջ բերէ—և նորա պատիւն անշուշտ կրկին կը վերահաստատուի։ Այս է ահա ուրեմն այն տնտեսական փոփոխութիւնը, որ չէ արդելուած գուշակել։

Բայց այս չէ բոլորը. յիշեալ նախապաշարումը ունի նաև բարոյական պատճառ։

Այսօր ձեռքի աշխատութիւնը յարգի չէ այն պատճառով, որ նորանով պարապողների սնափառութեանը նա չի տալիս սնունդ և գոհացումն. մեր հասարակութեան մէջ բանուորը միշտ ներկայանում է իբրև անուն չունեցող. նա—ամբոխ է։ Իսկ ընդհակառակն ազատ պարապմունքներն աւելի զարդարուն բնաւորութիւն ունին. ով որ այդ պարապմունքով է ապրում նա զգում է, որ մի որոշ դեր է կատարում և իւր անձով յայտնի մեծութիւն է ներկայացնում կամ ինչպէս ասում են՝ նա հասարակութեան մէջ «դիրք ունի»։

Հարկաւ, լաւ բան է ցանկալ, որ մի դեր կատարենք. բայց երբ որ կը սովորենք մարդկանց և իրերի վերայ աւելի աննախապաշար աչքով նայել, մենք կիմանանք, որ ամենաբարձր և ամենավսեմ անձնաւորութիւնները շատ անգամ պատահում են ստորին, մոռացուած և թողնուած արահետ շաւիղների վերայ՝ որոնց կողքից աշխարհն անցնում է, իսկ նոցա ոչ ոք չի նշմարում։ Հաւատացէք, որ երկրի երեսին ամենաբեղմնաւոր և ամենափառաւոր վարքը նա ունի, որ անուն չունի՝ կամ չի վաստակում։

Գ.

Այսպէս ուրեմն թէ տնտեսական և թէ բարոյական յառաջադիմութիւնը նպաստում են, որ ձեռքի աշխատութեան վերադարձնեն աւելի բարձր վարկ և յարգ։ Իսկ որովհետև մենք տեսնում ենք, որ ձեռքի աշխատութիւնը օրէցօր աւելի բարձր է վարձատրուում, դառնում է աւելի մաքուր, աւելի մտաւորական, աւելի գեղարուեստական, որ նա բաց է անում պարլամենտների դուռը—la Nouvelle - Galles du Sud տէրութիւնը ունի

տաներկու բանուոր սենատորներ,—իսկ միւս կողմից ազատ պարապմունքը մերձենում է նուաստացման, նախ այն պատճառով որ խիստ ծաւալուում է և առաջարկն աւելի է քան պահանջը՝ ի՞նչ պէտք է եզրակացնենք այս հանգամանքներից, եթէ ոչ այն, թէ ընկերական արտադրութեան երկու գործիչների մէջ հաւասարակշռութիւնն սկսում է խախտուիլ։

Բայց ես այստեղ չեմ ուզում շօշափել ընկերվարական խնդիրը։ Ես կամենում եմ վերջացնել միայն մի փոքր խորհուրդ տալով և յոյս յայտնելով։

Խորհուրդը ձեզ է վերաբերում, ուսանող պարոնայք։ Որովհետև դուք ձեզ նուիրում էք ազատ պարապմունքներին, որոնց մասին խօսեցինք, դուք պէտք է ձեզ ասէք, թէ բախտի բերմամբ դուք ազատուել էք, փախել էք ձեռքի աշխատութիւնից, և ուրեմն պէտք է փրկանք վճարէք...

Գուցէ այսօր, մեր սովորական զբաղմանց սկզբին, դուք փոքր ինչ ափսոսում էք, որ արձակուրդը վերջացել է. գուցէ դուք ո՛չ առանց փոքր ինչ երկիւղի տեսաք, որ ձեր առաջ բացուեցան այս համալսարանի դաժան դռները։ Ահա երեք ամիս անցել է, ինչ որ դուք նոցա չէք տեսել, և ինչո՞ւ չը խոստովանէք. «Ո՜հ ինչ ուրախութիւն էր, երբ որ նոքա փակուեցան մեր յետևից և երբ որ մեր պահարաններում ձգեցինք մեր անգործածելի գրքերը...» Բայց արդեօք մտածեցի՞ք որ ձեր ընկերները—ձեռքով աշխատողները—իւրեանց կենաց մէջ ո՛չ մի արձակուրդ չը գիտեն, կամ աւելի լաւ է ասել, թէ շատ լաւ ճանաչում են և շատ վախենում արձակուրդներից՝ որպէս կոչուում է, կարծես թէ դառն հեգնութեամբ, իրանց անգործութիւնը և պարապութիւնը։ Ո՜հ, երբ նոցա վիճակուում է տեսնել, թէ ինչպէս երեք երկար ամիս տենդութեամբ գործարանի կամ հանքի դռները փակուում են, այն ի՞նչ աղէտ է։ Դա տօնախմբութեան օր չէ ընտանիքի համար. վշտով ու բարկութեամբ լի սրտով ստիպուում են նոքա իրանց աշխատութեան գործիքները դարակի մէջ յետ դնել թողտուելու, որ այժմ այլ ևս չեն գործածուի ... Բայց և որպիսի ուրախութեամբ դարակից կը հանեն նորից ամուր ձեռքով, եթէ անգործութիւնը վերջանայ։ Մտածեցէ՛ք, որ այն փոքր աշխատութիւնը, ինչ որ ձեզանից պահանջուում է, լոկ մի փրկանագին է, իսկական գին է ձեր վայելած արտօնութեան փոխարէն, և ուրեմն առանց երկար առուտուր անելու՝ խղճով վճարեցէ՛ք։

Իսկ յոյսը մեզ է մնում։ գուցէ նա մի ցնորք է, բայց փոյթ չէ, հարկ է յառաջադոյն մխիթարուիլ։ Այո՛, պէտք է հաւատալ, թէ կը գայ ժամանակ—երբ և ինչպէս, չը գիտեմ—երբ որ ձեռքն ու ազատ պարապմունքներն իրարից բաժանող անդունդը վերջապէս կը ոչնչանայ, երբ որ այս կամ այն վիճակի ընտրութիւնը կախուած կը լինի մարդու ճաշակից և անձնական յատկութիւններից, և ոչ թէ սխալ դաստիարակութիւնից և պատշաճի կանոններից. երբ որ մարդիկ ոչ նուազ մարդ կը համարեն իրանց, եթէ պարտաւոր կը լինին երիտասարդ հասակի կամ ժամանակի մի մասը նուիրել որ և է ձեռքի աշխատութեան։ Մենք յոյս ունինք տեսնել, թէ ձեր միջի մրցանակագիր ստացողներից շատերը կսկսեն աշխատել ուրագով և երկիր հերկել, այն ևս ոչ թէ կարօտութիւնից ստիպուած, ինչպէս նոքա, որոնք դռնապաններ են դառնում այլ իրենց յօժար կամքը, և կրկնելով Վերգիլիոսի «Վա՜հ երջանիկ մշակաց» խօսքը։* Ինչ թէ դուք այն ժամանակ այդ բանաստեղծութեան մէջ աւել խոր իմաստ դտնէք, քան մենք դտնում էինք դպրոցական նստարանների վերայ, գուցէ աւելի խոր իմաստ՝ քան ինչ որ նորա մէջ ներշնչում էր ինքը լատինական բանաստեղծը։ Դուք զարմացմամբ կը տեսնէք, որ ձեռքի աշխատութիւնը աւելի իրական և խոր հեշտութիւն կարող է մատակարարել, քան մտաւոր աշխատութիւնը։ Այո՛, այն քրտինքը, որով երկրագործը կարող է ձեռքն առնել մաքուր ցորենի խուրձը և համոզուիլ, թէ ինքն է արտադրել այն հացը, որով մարդիկ պիտի անանուին,—պէտք է պարտաճանաչ սրտին աւելի հաստատուն և աւելի լիակատար ուրախութիւն պատճառէ, քան այն, որ մենք կարող ենք զգալ, երբ մեր վտիտ սերմը

* Մշակականք. Թարգմ. Հ. Ար. Բազրատունու, եր. 36։

տատասկի հետ խառն ցանելով, միշտ ահու-դողի մէջ ենք ընկնում՝ ամէն տեսակ հնարա-ւորութիւններից շարունակ հիասթափուե-լով, և միայն անօգուտ ջանքեր անելով, և երբէք ստոյգ հաւատ չունենալով, թէ արդեօք մեր աշխատութեան անշօշափելի պտուղը կարող է աշխարհի մէջ գէթ մի հոգուն յագուրդ տալ։

Մենք այս դարավերջում գրեթէ չենք ճանաչում ուրախութիւնը և գրեթէ երբէք չենք տեսնում բախտաւոր մարդկանց դէմքեր, և այն՝ շատ պատճառներով, որոնց մասին խօսելը երկար կը լինէր։ Մեր բժիշկ պաշտօնակիցները ասում են, թէ ներկայումս մենք ամէնքս նեւրասթէնիկ-ներ ենք, ջղաթոյլ ենք. գուցէ ճշմարիտ է այս։ Բայց երբ որ մտաւոր և ձեռքի աշխատութիւնները փոխ ընդ փոխ կը կատարուին, մեր յաջորդները այլ ևս թոյլ ջղեր չեն ունենայ. գուցէ նոքա բախտաւոր լինին։ Ցամենայն դէպս նոքա առողջ մարդիկ կը լինին։

Այո՛, այն օրուանից, երբ մտաւոր և ձեռքի աշխատութիւնները կը հաշտուին, կը միաւորուին, կը գրկախառնուին, այն ժամանակ մարդկային ազգը մեծ քայլ կանէ ընդ առաջ գնալու ուրախութեան, բարոյական ուրախութեան՝ որ ինքնին կստեղծուի մեր փոքր ընկերների հետ համերաշխութեան ըզգացումից, որոնց հետ միասին կաշխատենք և մի բախտի տէր կը լինենք։

Ս. Մ.

ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ.*

Մենք ամէն ինչ պատրաստի ստանում ենք արևմուտքից՝ և՛ ուսումն, և՛ ուսուցման եղանակ, և՛ գիտութիւն, և՛ մանկավարժութիւն, և գործ ենք դնում մեր դպրոցներում։ Բայց մեզանից շատ քչերը կարող են երևակայել, թէ դոքա ինչ երկար փորձերի, արեան և քրտնքի գնով են ձեռք բերուել Եւրոպայում։ Երկար ու յամառ պատերազմ է մղել նա լուսաւորութեան համար և յաղթութեան ամէն մի քայլն անթիւ զոհեր, ահագին ջանք ու չարչարանք է պահանջել։ Ուստի աւելորդ չի լինիլ, եթէ համառօտակի ընթերցողների առաջ դնենք միջին դարերի դպրոցական կեանքի նկարագիրը։

Երկար ժամանակ այնպէս էին կարծում, որ միջին դարերում անծանօթ էր ժողովրդական կրթութեան գաղափարը. սակայն այդ կարծիքն այժմ դրականապէս հերքուում է։ Նոյն իսկ Թ. դարի ամենամթրկալից ժամանակ Եւրոպայի շատ գիւղերում կային ուսուցիչներ, որոնք մանկանց սովորեցնում էին կարդալ, գրել և հաշիւ։ Միջին դարերի կիսում գիւղական ուսումնարանները նորութիւն չէին. բայց մեծ նշանակութիւն չպիտի տալ այդ իրողութեանը, որովհետև միջնադարեան ստորերկրեայ մութ, խոնաւ, գարշահոտ դպրոցները և նոցանում աւանդուած ուսումը շատ հեռի էր և տարբեր մեր այժմեանից։ Քիչ թէ շատ լատիներէն խօսել և գրել, մի քիչ օրէնսգիտութիւն, տրամաբանութիւն, տօմարագիտութիւն, թուաբանութեան նման մի բան, երևակայական աշխարհագրութիւն և չափազանց շատ երգեցողութիւն՝ ահա թէ ինչ էին ստանում այն ժամանակուայ աշակերտները, և այն՝ երկար տարիների ընթացքում։ Զմոռանանք ասել, որ այդ բոլոր ուսմանց վերջնական նպատակը աստուածաբանութիւնն էր։ «Աշխարհագրութիւնը լաւ գիտութիւն է, ասում է Յակոբ Բիտրակցին, որովհետև նա մեզ սովորեցնում է ճանաչել այն երկիրը, ուր շուտով մեր մարմինները պիտի իջնեն։ Վատ չէ և թուաբանութիւնը, որովհետև նա ցոյց է տալիս, թէ որքան չնչին են մեր կենաց օրերը»։

Գիւղական դպրոցը միջին դարում անպայման լատինական է. մայրենի լեզուի մասին խօսք անգամ չկայ մինչև ԺԷ. դարը։ Կարդալ և հասկանալ՝ որ այնքան բնական պահանջ է մեր ժամանակում, այն ժամանակի մարդկանց համար բոլորովին տարբեր բաներ էին։* Միջին դարերում կարդացածը հասկացողը մատով էր ցոյց տրուում։ և այս ոչ միայն հասարակ ժողովրդի մէջ, այլ նոյն իսկ բարձրաստիճան հոգևորականների դասում։ Հենրիկոս Բ. մի անգամ ծածուկ ընկել է տալիս ննջեցելոց աղօթքի միջից pro famulis et famulabus (վասն ծառայից և աղախնեայց) բառերի առաջին վանկերը, և Պատերբորնցի Մէցնվերկ եպիսկոպոսը պատարագի ժամանակ հանդիսաւոր կերպով երգում է «pro mulis et mulabus» (վասն իշոց և մատակաց)։ Սակայն միայն սրանք չեն այդ ժամանակուայ դպրոցների պակասութիւնները։ Լուսաւորութեան այդ օճախները, ուր առկայծեալ հուրը հաղիւ մի քիչ լուսաւորում էր շրջապատող մառախուղը, ենթակայ էին ամէն տեսակ պատահարների. ահա վրայ

* Նիւթը քաղուած է Недѣля շաբաթաթերթից։

* Դժբաղդաբար մեր մէջ միայն միջին դարերում չէ այդպէս եղել։ Գաւառացի քահանային մի եպիսկոպոս առաջարկում է կարդալ աւետարանից մի կտոր։ Կարդում է։ Առաջարկում է թարգմանել կարդացածը։ Քահանան զարմացած՝ ամենայն սառնասրտութեամբ պատասխանում է. „Եա՛, կարդալ՝ կարդալ է, մրոնիմ քըզի, կարդալ վեՕվ կը խասկընայ՝ որ ես խասկընամ“։

Ղ.

հասաւ մի փոթորիկ՝ կամ պատերազմ, կամ հալածանք, կամ սով, կամ համաճարակ, և ամէն բան անյայտանում էր։ Երկար տարիների ընթացքում ամեն մի բանասէր Նորից պիտի սկսէր միևնոյն գործը, որ գուցէ մի ուրիշն արդէն բաւականին յառաջ էր վարել։ Ինչ խօսք, որ այսպիսի անջատ անջատ աշխատանքի ժամանակ շատ ծանր պիտի յառաջ գնար ուսման գործը։ Բայց այսքան արգելքներ չյուսահատեցրին մարդուն և նա հասաւ ուսումնական կեանքի երկրորդ շրջանին։

Բոլորովին այլ տեսարան է բացուում մարդու առաջ, երբ ծնունդ են առնում համալսարանները և սերունդ սերնդի յետևից մշակում է գիտութիւն և արուեստ։ Միջին դարերի երկրորդ կիսում խարխուլ, հին և գետնափոր դպրոցների վերայ բաձրանում է երկրորդ յարկ, ուր աւելի շատ օդ և լոյս կար. բայց այնտեղ մտնել կարելի էր միայն այն ներքին այրն այցելելուց յետոյ։ Ամեն մի ապագայ փաստաբան, բժիշկ, երկրաչափ թէ ուսուցիչ սկզբում ապագայ քահանայացուի հետ պիտի ենթարկուէր կրօնաւորական բոլոր կարգերին։ Բոլոր գիտնականներն, առանց բացառութեան, ամուրի խստապահ կեանք պիտի վարէին։ Փարիզի համալսարանում բժշկապետը պսակուելու իրաւունք է ստանում միայն ԺԵ. դարում։ իսկ իրաւաբանները, արուեստագէտները միայն ԺԶ. դարում։ ԺԴ. դարում վիեննացիք մի ուսուցչապետի համար ասում էին uxorem duxit versus indementium (խելագարուելով ամուսնացաւ)։

Դժուարին և փշալից էր միջին դարերում կրթութեան ճանապարհը, ողողուած քրտինք ու արիւնով։ «Երկիւղից շունչս էր կտրուում, գրում է Բոնիֆակիոս, երբ մտաբերում եմ quadrinium-ը»։ Ուսուցման մէջ ևս առաջին տեղը բռնում էր երգեցողութիւնը։ «Որքան ծեծ, տանջանք պիտի կրեն երաժշտութիւն սովորելու համար», ասում է լատինական ասացուածքը։ Ձայնանիշ համարուած գծերն և կէտերը միանգամայն անտանելի բաներ էին և, առանց նախապէս եղանակը սովորելու, անհասկանալի, մինչև որ Գիւի Որեցցին ստեղծեց այժմուայ երաժշտական կարգը. բայց այդ նորութիւնը Նրան արժան չ'նստեց՝ քիչ մնաց Նրան հերձուածող հրատարակէին, որովհետև նորա աշակերտները ձայնանիշներին նայելով ամէն մի եղանակ առանց նախապէս վարժուելու երգում էին։

Երկրորդ տեղը բռնում էր մանկան բոլորովին անհասկանալի լեզուով մեքենայօրէն աղօթքներ, ամբողջ ութ կանոն սաղմոսը, աւելի ուշ՝ ամբողջ օրէնսգրքեր և տրամաբանութիւնը բերան անել տալը. մի տանջանք, որի առաջ ներկայ մանկավարժութիւնը սարսափած յետ կ'քաշուի։ Ոչ նուազ տանջանք էր և քերականութեան ուսումը։ Աղէքսանդր Բելլերտացու Doctrinale դասագիրքը ամենատարածուած ձեռնարկն էր. ամէն մի փորձ այդ դասագրքի մէջ որև է փոփոխութիւն մտցնել՝ հեշտացնելու գիտաւորութեամբ, հերձուածողութիւն էր համարուում։ Նա գրուած էր լատիներէն. մի վիպերգութիւն էր դա 12 հագներգութեամբ, ուր ոտանաւորով բացատրուած էին ստուգաբանական և համաձայնական կանոնները։ Այստեղ միտքը բոլորովին զոհուած էր չափական և յանգիտութեան կանոններին։ Այդ դասագրքով սովորողները նմանեցնում են Նրան մի բաւիղի, ուր Մինոտաւրոսն էր բնակում։ Այդ ժամանակուայ դասագրքերի մասին գաղափար կազմելու համար աւելորդ չի լինել մէջ բերել մի կտոր մեծ հռչակ ունեցող քերականութիւնից։ Հարց — Es tu scolaris? Պատասխան —Sum. (Աշակերտ ես.—Այո)։—Ի՞նչու sum չի վերջանում ոչ o և ոչ or: — Որպէս զի միւս բայերի վրայ ունեցած գերազանցութիւնը ցոյց տայ։ —Ի՞նչպէս կբացատրես այդ։—Sum երրորդութիւն է ցոյց տալիս. նրա մէջ երեք տառ կայ։—Ինչո՞ւ Sum վերջանում է m և ոչ n։—Որովհետև m-ն էլ ցոյց է տալիս երրորդութիւն, m ունի երեք գիծ։ Es tu scolaris?—Sum.—Հուռ տուր Sum.—Mus։—Ի՞նչ է նշանակում Mus.——Մուկ։—Ի՞նչ բան է աշակերտ։—Մի մարդ որ մեծ ջանասիրութեամբ ուսանում է առաքինութիւններ։ —Եւ այս բոլորը պէտք էր իմանալ բերան՝ բառ առ բառ։ Բայց և այնպէս դա խաղ ու պար էր թուաբանութեան առաջ, որ դարձեալ հագներգութիւններով մի վիպերգութիւն էր, ոտանաւոր գրած, որից մի պարզ բաժանման գործողութիւն հասկանալու համար հարկաւոր էր գերմարդկային համբերութիւն և սրամտութիւն։ Այս մտաւոր տանջանքները որքան էլ ծանր են, սակայն աւելի ևս անհաւատալի և աներևակայելի կթուին ներկայ ժամանակի մարդու համար մարմնական այն պատիժներն ու տանջանքները, որոնցից չէր կարող զերծ մնալ միջնադարեան դպրոցի ոչ մի ուսանող. որքան էլ ընդունակ լինէր նա դասերի մէջ և վարքով անմեղ՝ այնուամենայնիւ պիտի կրէր։ Միայն այդ նկարագիրը կարդալով հասկանալի է դառնում այս յօդուածի սկզբի դրած արիւն, քրտինք, տանջանք բառերի գործածութեան պատճառը։

Ս. Ց.

ՄԱՆՐԱԼՈՒՐՔ.

Համալսարանական Դրադարանների հաբրստութեան կողմից Եւրոպայում առաջին տեղը բռնում է Գերմանիան, որի քսան գրադարաններում 5, 850, 000 հատոր գիրք կայ՝ երեք միլիոնով աւելի քան Իտալիոյ գրադարաններում, որ երկրորդ տեղն է բռնում։ Անգղիա, Աւստրիա եւ Ռուսաստան՝ իւրաքանչիւրը 1,800,000 հատորից աւելի ունին։ Շվեդնորվեգիա 790, 000, Սպանիա 726, 000։ Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ

Փրանսիան 16 մատենադարաններ ունենալով հանդերձ գրքերի քանակութեամբ (692, 200 ֆ.) բոլոր յիշածներից յետ է մնում, եւ որ Անգլիայի 4,849,600 ֆ. գրքերի միլիոնից աւելին Օքսֆորդում ու Կէմբրիջում է. Պէտք չէ մոռանալ սակայն, որ այդ պակասը լրացնում են մասամբ հասարակաց մեծ մատենադարանները, ինչպէս Լոնդոնի Բրիտիշ Մուզէում եւ Փարիզի Ազգային մատենադարանը. Քաղաքների մէջ ամենամեծ ժողովածուները ունեցողներն են՝ Շտրասբուրգ (704, 076 ֆ.), Օքսֆորդ (550,000 ֆ.), Կէմբրիջ (506,500 ֆ.) եւ Լայպցիգ (504,689 ֆ.). Գէօտտինգէն, Հայդելբերգ, Միւնհէն, Վիեննա եւ Պետերբուրգ ունին իւրաքանչիւրը 400, 000 ֆ. ից աւելի:

Բրոկհաուզի աշխարհաշէն հանրագիտական բառարանը տօնում է այս տարի իւր հարիւրամեակը: Յայտնի է, թէ ինչ անագին դեր են կատարում մեր դարում հանրագիտական բառարանները. գիտութեան բազմադիմի միջոցներով եւ հազարաւոր մարդոց աշխատանքով ձեռք բերած նիւթը նորա մատչելի են դարձնում հասարակութեան բոլոր խաւերին եւ նոյն իսկ գիտութեամբ պարապողներին դիւրութիւն ընծայում ամենակարեւոր տեղեկութիւններն առանց մատենադարաններ քրքրելու մի րոպէի մէջ ձեռք բերել: Բրոկհաուզի բառարանն իւր տեսակի մէջ առաջինը չէ եղել, բայց ամենից աւելի կարողացել է յարմարուել ժամանակի պահանջներին, եւ այսօր հագիւ միայն Մայերի հանր. բառարանը յաջողութեամբ մրցել կարող է նորա հետ: Նորա առաջին հեղինակն եղել է Լայպցիգում ապրող մի ուսումնական Դր. Լէօբել անունով, որ մի իրաւաբանի գործակցութեամբ 1786 թ. ին հրատարակել է Ա. հատորը. բայց դեռ ամբողջը չվերջացած նա մեռնում է, եւ գործը, ինչպէս նաեւ այս առթիւ հիմնած տպարանը, ձեռքէ ձեռք ընկնելով 1808 թ.-ին Փր. Բրոկհաուզի ձեռքն է անցնում, որ բոլորովին ուրիշ կերպարանք է տալիս նորան եւ իրաւամբ իսկական հիմնադիր է համարուում: 1811 թ.-ին լոյս է տեսնում վերջապէս ամբողջ բառարանը 6 նախնական (սկզբում 4 էր ծրագրած) եւ 2 յաւելուածական հատորներով: Այսօր պատրաստ է արդէն ԺԴ. հրատարակութիւնը՝ բաղկացած 16 հատորներից, 16,550 էջ. 126,000 յօդուածներով, որոնց վերայ աշխատել են աւելի քան 500 առաջնակարգ գիտնականներ: Մօտ 40,000 նկարներ կան նորա մէջ եւ 450 զանազան տեսակի քարտէզներ:—Պէտք է ի նկատի առնել՝ քանի հարիւր հազար օրինակներով տարածուել է այդ գիրքը եւ քանի միլիոն ընթերցողներ ունեցել, քանի ուրիշ բառարանների համար իբրեւ օրինակ է ծառայել եւ օտար լեզուներով փոխադրուել (ինչպէս օրինակ նոյն իսկ Բրոկհաուզ տան ձեռնարկութեամբ ներկայումս լոյս տեսնող ռուսերէն՝ տեղական պայմանների համեմատ մշակուած, փոխադրութիւնը), որպէս զի պարզ լինի՝ արժէ՞ արդեօք տօնել մի գրքի հարիւրամեակ:

Մտքի լուսանկարը.— Բեօնտգէնի ճառագայթների գիւտը առաջ բերեց գիտնականների շրջանում նոր ենթադրութիւններ, որոնք զարմանալի գիւտերի սկիզբ կարող են համարուել. այս վերջիններից է, եթէ հաւատանք ամերիկական հրատարակութիւններին, մտքի լուսանկարումը: Լոնդոնի Պրոֆեսսոր Ջենգլիս Ռիշերս զանազան փորձերով գտաւ, որ Բեօնտգէնի ճառագայթներով ոչ միայն կարելի է մթութեան մէջ պատկերներ արտալուսանկարել, այլ եւ հնարաւոր է լուսանկարչական ապակու վրայ ստանալ եթերի այն անտեսանելի ալիքները, որոնք առաջ են գալիս մարդու մտածողութեան ժամանակ.

Ցիշեալ պրոֆեսսորը հետեւեալ փորձերով է հանգում այդ եզրակացութեանը. մի քանի րոպէ նայում է փոստային նամականիշի վերայ, ապա գնում է մութ սենեակ եւ այնտեղ լուսանկարչական կամերայի ապակով նայում է լուսանկարաշկան ապակու վրայ. հետեւանքն այն է լինում, որ նամականիշի պատկերն տպագրուում է ապակու վրայ թագուհու պարզ պատկերով եւ „one penni" բառերով. թէեւ շատ փոքր դիրքով: Այս փորձը կարելի է բացատրել նրանով, որ առարկայի պատկերը տպաւորուում է աչքի ցանցամաշկի վրայ, եւ ապա այնտեղից անդրադառնում է ապակու վրայ, ինչպէս պատկերից արտանկարելիս: Ենթադրութիւնը հաստատելու համար անհրաժեշտ էին ուրիշ փորձեր: Անգլիացի գիտնական Նամերոնելի նայելով լուսանկարչական խողովակից ապակու վրայ, աշխատում էր պարզ պատկերացնել իրան ամենից աւելի ծանօթ մի կենդանի, որ նա ամենից շատ տեսած էինէր—իրանց կատուն: Երկար ժամանակ լարուած մտածելուց եւ աչքերը սեւեռելուց յետոյ, ապակու վրայ տպաւորուեց կենդանու պատկերը. նեգատիվի վրայ պարզ նկարուած էր մի շրջան. որ անշուշտ ստացուած էր աչքի բբի լայնանալուց. իսկ այդ շրջանի մէջտեղը երեւում էր կատուի պատկերը:

*
* *

Բազմավէպ թերթը իւր ղեկտեմբեր հ.-ի մի յաւելուածով հաղորդում է, թէ Փարիզի Արեւելեան կենդանի լեզուաց վարժարանի մասնաւոր թանգարանի մէջ պատահմամբ գտնուել է Մաք Աքաս կաթինայի Հայոց պատմութեան ասորերէն ձեռագիրը, որի ուսումնասիրութիւնը յանձնուած է հայագէտ ուսուցչապետ Դարրիէրին եւ սպասուում է, որ նա այդ մասին տեղեկութիւն հաղորդէ Հանդէս Ամսօրեայ թերթի միջոցաւ:

ԱԶԳԱՅԻՆ.

ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ԳԱՂԱՓԱՐԸ.

Ինչո՞ւ մենք արժանաւոր հոգեւորականներ չունինք և չենք ունենում՝ ահա մի խնդիր, որի նկատմամբ կարելի է կրկնել Գէօթէի այն խօսքը թէ, ամեն ինչ ասուած է արդէն, և սակայն ամեն ինչ մնում է դեռ ասելու: Ամենքն այդ խնդրի լուծումը միմեանց վերայ են ձգում: Ժողովուրդը մեղադրում է բարձր հոգեւորականութեան, որ նա անարժաններին ձեռնադրում է, հոգեւորականութիւնը մեղադրում է ժողովրդին, որ նա այդպիսիներին է ընտրում: Մամուլը, հասարակական գործիչը երկուսին էլ մեղադրում է, բայց...

հարցը մնում է չլուծուած։ Ցիրաւի՞ ով է իսկական պատասխանատուն այս խնդրում։ Բայց դուցէ աւելի ուղիղ կլինէր նախ հարցնել. ի՞նչ է մեր իսկական պահանջը։

Մեծ մասամբ հոգևորականութեան վերայ նայում են իբրև մի առանձին դասակարգի վերայ՝ իբրև իւր որոշ շահերն ունեցող, հասարակութիւնից կտրուած, կեանքի տարբեր խորհուրդ, տարբեր նպատակ ունեցող դասակարգի. ուստի նորա վիճակի, նորա բոլոր արարքների համար նորան են միայն պատասխանատու ճանաչում։ Բայց այդպէս է արդեօք. հոգևորականութիւնը մեր մէջ այդպիսի մի բաժան դասակարգ է կազմում, ինչպէս օրինակ հռովմէական եկեղեցւոյ մէջ։ Մի ժողովուրդ, որ ամեն միջոց ունի իւր քահանայացուների դաստիարակութեան վերայ հսկելու, որ ինքն է ընտրում իւր քահանային՝ ընտրում է բոլոր քահանաներին ուղղակի կամ անուղղակի կերպով ձեռնադրութեան շնորհը բաշխող քահանայապետին, ինքնախաբութեան մէջ է անշուշտ, երբ հաւատում է, թէ իւր հոգևորականներն էլ նոյնն են, ինչ որ Ցիսուսեանների դպրոցներում ամենքի աչքից հեռու կրթուած, պատրաստ՝ որոշ սկզբունքներով աշխարհը նուաճելու և մարդոց իրենց ուսուցիչների նպատակին ծառայեցնելու համար դուրս թողած կղերականները։ Այն կոյր ջանքը, որ տասնեակ տարիներէ ի վեր մեր ժողովրդի մէջ գործ է դրուում, այս մոլար հայեացքը հաստատելու համար՝ անօգուտ կռիւ է ստուերների դէմ և միայն ֆետակար հետևանքներ կարող էր ունենալ՝ ձգելով հոգևորականութեան, առանց այն էլ խախտուած վարկը։ Հոգևորականը մեզանում, լինի նա քահանայ թէ կուսակրօն, մնում է հասարակութեան մէջ ոչ իբրև մի օտար, հարստահարիչ, այլ իբրև անդամ՝ իբրև իւր որոշ դերը, իւր կոչումն ունեցող անդամ։ Խօսքն ի հարկէ զեղծումների մասին չէ, այլ սկզբունքի, և մեր եկեղեցին իրաւամբ կարող է պարծենալ նորանով, որ այդ սկզբունքն է պաշտպանում։

Արդ, մեր կեանքի պայմանները ներկայում այնպէս են, որ մենք՝ իբրև հայ ժողովուրդ, իբրև մի առանձին եկեղեցական համայնք, մեր հակացողութեան համեմատ, մեր սեփական միջոցներով, առանց օտարների մասնակցութեան, ուրիշ զրեթէ ոչ մի կոչում ձևակերպել և յառաջ տանել չենք կարող։ Որպէս զի դաստաւորը, ոստիկանը, արուեստագէտը, վաճառականը, երկրագործը՝ նոյն իսկ ուսուցիչը, իրենց կոչման համապատասխան լինին, հարկաւոր է պետութեան ազդեցութիւնը, մեզ հետ ապրող ուրիշ ժողովուրդների գործակցութիւնը։ Բայց հոգևորականութիւն պատրաստել կարող ենք և պարտաւոր ենք մենք ինքներս՝ և մենք իբրև ամբողջութիւն, իբրև համայնք, իբրև եկեղեցի, և ոչ իբրև անդամ այս կամ այն դասակարգի։ Այս տեսակէտից չգիտեմ կա՞յ արդեօք մեզ համար աւելի լուրջ և կարևոր մի հասարակական խնդիր, որի մասին նաև այս տարուայ վերջին մտածել և խորհրդածել հարկ լինէր, ինչպէս հասարակութեան այն անդամների կոչման խնդիրը, որոնց վերայ ամենից աւելի է դրուած՝ մեր ինքնուրոյն եկեղեցական կեանքը պահպանելու, մեզ իբրև մի համայնքի անդամների իրար հետ կապելու և այդ համայնքին առաջնորդող գաղափարներով դաստիարակելու պարտքը։ Հարկաւ ամենից առաջ հոգևորականները պէտք է մտածեն իրենց կոչման համապատասխանելու, իրենց դիրքը ճանաչեցնելու մասին։ Բայց նոցա ձգտումն այն ժամանակ միայն արդիւնաբեր կը լինի, երբ ամբողջ համայնքը ձգտում է, երբ համայնքը գիտէ, թէ ինչ է պահանջում նոցանից և տալիս է նոցա միջոցներ այդ պահանջներին բաւականութիւն տալու։ Ունի՞ արդեօք հայ համայնքն այդ գիտակցութիւնը, կատարո՞ւմ է իւր պարտքը հոգևորականութեան նկատմամբ. ըստ մեզ՝ ոչ, և այդ իսկ պատճառով հոգևորականութիւնն էլ իւր պարտքը չէ կատարում համայնքի նկատմամբ։

Ո՞րն է երկուսի համար էս ամենազգալի պակասութիւնը. ըստ մեզ՝ այն, որ մենք մի առաջնորդող գաղափար չունինք, որին պէտք է համակերպի, մի իդէալ, որին հասնել ձգտէ հոգևորականը։ Ի հարկէ ամեն ոք նորա առաջ մի պահանջ դնում է, բայց այնչափ տարբեր են այդ պահանջները և երբեմն այնչափ հակասական, որ մի ընդհանուր եզրակացութիւն հանել նոցանից և ասել, թէ ամբողջ

ժողովուրդն ինչ է պահանջում՝ շատ դժուար կլիներ։ Իդէալն այնպիսի բան է, որ ոչ մի արդելքի առաջ չի ընկճուում որ ամենաանյաջող պայմանների մէջ իւր համար ճանապարհ բանալ, մարմնանալ կարող է, եթէ գոյութիւն ունի, և կենդանի է մարդոց սրտերում։ Եթէ հոգևորականի իդէալը մեր ժողովրդի մէջ չի մարմնանում այդ նշան է միայն, որ նա կենդանի չէ այստեղ։ Մի ժողովուրդ, որ անմահացնում հերոսների կարգն է դասում երբեմն հոգևորական ոչ մի արժէք չունեցող հոգևորականների, և ընդհակառակն կարծես չի տեսնում կամ արհամարհանք և ատելութեամբ է վերաբերուում դէպի այնպիսիները, որոնք լուռ ու առանց աղմուկի իրենց պարտքն են կատարում արժանի էլ չէ՛ իսկապէս արժանաւոր հոգևորական ունենալու։ — Մենք հոգևորականներս իրաւունք չէինք ունենայ երբէք արտնջալու, Եթէ ժողովուրդը ամենախիստ կերպով քննադատէր մեր ամեն մի արարքը և արդարամտութիւն ունենար միայն այն գնահատելու և քաջալերելու, ինչ որ իրօք կապ ունի մեր կոչման հետ, բարձացնում է մեր՝ իբրև հոգևորականի ունեցած արժանիքը։ Բայց երբ նա պատրաստ է աչք խփել ամեն տեսակ բարոյական զեղծմանց և պաշտօնի վերաբերեալ զանցառութեանց դէմ՝ միայն նորա համար, որ իւր առաջինն, օրինակ, ուսում ունի, կամ ուրիշների ժողոված փողով երկու քար իրար վերայ է դրել, մի շէնք կառուցել՝ երբ անտարբերութեամբ նայում է, թէ ինչպէս ամենաանարժան մարդիկ քահանայութեան սուրբ խորհուրդները կատարում են, և փոխանակ զայրոյթ, արդար ցասումն զգալու, միայն իւր արհամարհանքն է շատացնում հոգևորականութեան դէմ, առհասարակ հոգևորականութեան, լաւի ու վատի մէջ խտրութիւն չդնելով, մարդկային վատթարութիւնը այդ սրբազան կոչման հետ անհրաժեշտաբար կապուած համարելով՝ բնական է, որ կոչման յարգը կընկնի, և միայն բաղդախնդիրները հետամուտ կլինին նորա միջոցով իրենց ապօրինի ձգտումներին յագուրդ տալու։

Հոգևորականը, ճշմարիտ է, ամբոխի քմահաճութիւններին ուշադրութիւն պէտք է չդարձնէ՝ պէտք է աշխատէ Աստուծոյ հաճոյ լինել եւ ոչ մարդկան, աշխարհից անկախ՝ իւր կոչման հոգևոր աղբիւրից պէտք է առնէ ու իւր անձի մէջ մարմնացնէ այն սուրբ գաղափարը, որի առաջ խոնարհում են վաղ թէ ուշ բոլոր սրբութիւն ըմբռնելու ընդունակ սրտերը։ բայց չէ՞ որ նա իւր ժողովրդի զաւակն է մնում միշտ և, ինչպէս կոչումն ընդունելիս բերում է իւր հետ նորա հոգին, այնպէս և յետոյ իւր բոլոր յարաբերութիւնների մէջ կապուած է մնում նոյն ժողովրդի հետ, նորա ազդեցութեան ներքոյ է շարունակ։ բիրտ իրականութիւնը բանեցնում է իւր ոյժը, և միայն հազուագիւտ ամենաանկուն բնաւորութիւնները կարող են պաշտպանել նորա դէմ իրենց ինքնուրոյնութիւնը։ մնացած սովորական մահկանացուները կամայ ակամայ խառնուում են ընդհանուր հոսանքին։ Որպէս զի այս դէպքում ժողովուրդը բարերար ազդեցութիւն ունենայ, նա ևս իւր կոչումը չպէտք է մոռանայ, չմոռանայ որ Քրիստոսի եկեղեցի է՝ կոչուած աւետարանի հոգին, Աստուծոյ արքայութեան գաղափարը իւր մէջ սնուցանելու, և միայն այդ հոգւով, այդ գաղափարով դատելու թէ՝ իւր և թէ մանաւանդ իւր յառաջնորդութիւն կարգուած հոգևորականի ամեն մի արարքը։ իսկ մեր ժողովուրդը օր աւուր աւելի է հեռանում իւր այդ նուիրական կոչումից, որով և աւելի կորցնում նորա պահանջած գաղափարական չափը։ Մի տեղ ուսում են պահանջում միւս տեղ գործունէութիւն, մի այլ տեղ բաւականանում են հոգևոր հովուի բարոյական արժանիքներով, կամ ժամակարգութեան մէջ ունեցած հմտութեամբ։ բայց քիչ չեն նաև օրինակներ, որ մի հոգևորական ոչ խելք ունենայ, ոչ ուսում, ոչ բարոյական վարք, ոչ որ և է գործնական արդիւնք կամ մի աչքի ընկնող հմտութիւն ցոյց տուած լինի, և այնուամենայնիւ փառաբանուի՝ միայն նորա համար, որ այս կամ այն կուսակցութեան պահանջներին համակերպում է, այս կամ այն դասի թոյլ կողմերը շոյում։

Ահա թէ ինչ պատճառով հոգևորականին իւր արժանաւոր դիրքը տալու, նորա կոչումը շատերի աչքում նախանձելի. կացու-

ցանելու և այդպէս ընդունակ ու արժանաւոր անձանց ասպարէզ հանելու համար՝ հարկաւոր է ամենից առաջ նորան առաջնորդող գաղափարը պարզ որոշել և որքան կարելի է ընդարձակ շրջաններում գիտակցութիւն զարթեցնել այդ մասին։ Մի անգամ որ այդ գաղափարը պարզ և կենդանի եղաւ եկեղեցւոյ՝ քրիստոնեայ ժողովրդի մէջ, այլ ևս ամեն օր չեն կրկնուի այն հազար ու մի անտեղի պահանջները, որ իւրաքանչիւր Հայոց ազգի խնամակալ իրաւունք է համարում հոգևորականութեան առաջ դնել. այլ ևս ամենուրեք չենք հանդիպի այն անտեղութեանը, որով մի հոգևորականի լաւ ու վատ կողմերը թուելիս սովորաբար մոռացուում է նորա հոգևորական, քրիստոնեայ՝ աւետարանի աշակերտ և եկեղեցու սպասաւոր լինելը, որ հոգևորականի վերաբերուն միջոց է համարուում ինչ ինչ երևելի (կամ աներևոյթ) նպատակների համար, կարելի է համարուում հագնել այն առանց նոյն իսկ քրիստոնէական զգացումն ու հաւատ ունենալու. այլ ևս կը-քաշուին գուցէ մարդիկ այնպիսի ծայրահեղ անհեթեթութիւններից, ինչպէս է ծաղրել ու պախարակել մի հոգևոր հաստատութիւն, որ ձգտում է իւր սաներին հոգևոր կրթութիւն տալ՝ մի հոգևորականի, որ մեղք է գործել իւր հոգևոր ասպարիզի համար անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերած լինելը հաստատող վկայական ստանալու. կարիերիստ և այլ նման մակդիրներով պսակել այն երիտասարդներին, որոնք փափագում են և սիրով յանձն են առնում երկար տարիներ աքնել ու աշխատել բարձր. կրթութեան մարզարաններում, որպէս զի մի օր կարողանան ծրի ծառայել կրթութեան, հոգևոր կրթութեան գործին։—Եւ հէնց այս կրթութիւնն է, որը հաստատուն հիմունքների վրայ դնելու համար, անհրաժեշտ է պարզ գիտակցութիւն ունենալ հոգևորականութեան առաջնորդող գաղափարի մասին. այդ կրթութեան գործն է, որի մասին գուցէ ամենից քիչ ենք մտածում և ամենից աւելի խոտորնակի կերպով։ Ըստ երևութին մեր մէջ ո՛չ մի հոգս և ջանք չի խնայուում հոգևոր կրթութեան չափն ընդարձակելու ու բարձրացնելու. եղած հաստատութիւնները բաւական չհամարելով՝ հասարակութիւնը այս տաղնապալից ժամանակում ամենագովելի նախանձախնդրութեամբ աշխատում է նորերն աւելացնել. բայց արդեօք հոգևոր կրթութիւն տալու համար՝ ահա խնդրի հիւանդոտ և ցաւալի կողմը։ Ո՞վ պէտք է կառավարէ այդ հաստատութիւնները և նոցա մէջ հոգևորական, աւետարանական, բարոյական հոգի ներշնչէ՝ արդեօք այդ մասի՞ն ևս մտածուում ու հոգացուում է։ Կարծել թէ բաւական է մի շէնք կանգնել մէջտեղ և մանուկներ ներս ժողովել՝ այն էլ որքան կարելի է ապականուած մթնոլորտի ու փչացած հասարակութեան մէջ, որպէս զի մանուկներն իրենց մաստոյ հասակում տեսնեն կեանքի բոլոր մութ կողմերը, և ի հարկ է անարատ մնան—առաջնորդ ունենալով մի քանի զարգացած պարոնների, որոնք նոյն հասարակութեանն են պատկանում և նորա կենցաղին մասնակցում—մնան՝ ճանաչեն կեանքը և մի օր հրապարակ ելնեն ու ուղղեն կեանքի թերութիւնները՝ այդ...այդ առնուազն մի անհամեստ երևակայութիւն է. եղած կեանքը բարելաւելու և ապականութիւնից մաքրելու համար հեռը մի նոր՝ լաւ, բարձր, վսեմ, անապական կեանք բերել պէտք է. այդպիսի կեանքի համար միայն մի աղբիւր կայ և նորա ակը պատմական անցեալի մէջն է. գտնելու համար՝ այդ անցեալն ուսումնասիրել պէտք է, ուսումնասիրել իմանալու համար՝ արդէն իսկ հմուտ ուսումնասիրողների դիմել պէտք է։ Հոգևորականին շատ հմտութիւններ կարող են պէտք գալ կեանքի մէջ, բայց նորան առաջնորդող գաղափարը չի կարող դուրս գալ այն շրջանակից, որ գծել է նորա առաջ ինքը՝ քարոզելու, մարդոց երկնքի արքայութեան ուռկանով որսալու և իւր հոգւով մկրտելու համար նորան աշխարհ ուղարկող Տէրը։ Հոգին, որով մկրտում ենք, Եկեղեցին կոչ իւր շնորհաց անսպառ աղբիւրից. իսկ ուռկանը, որով հոգևորականը պէտք է իւր գործն յառաջ տանի՝ նորա ձեռքը կարող է տալ լուրջ գիտական աշխատութիւնը միայն։ Արդարև հասարակ ագէտ ձկնորսներ անօրինակ ճարտարութեամբ գործ դրին մի օր այդ ուռկանը և ամենամեծ յաջողութիւն ունեցան, բայց

նոցա աչքի առաջ կանգնած էր ամենամեծ վարդապետի անմիջական կենդանի օրինակը։ Մեր վարդապետն ևս նա ինքն է, նորա կենդանի օրինակն է նաև մեր հոգևոր դաստիարակութեան միակ աղբիւրը։ բայց մենք նորան և նորա արուեստը ճանաչել կարող ենք միայն գրքերի միջոցով, այն անձանց կենդանի խօսքի միջոցով, որոնք այդ գրքերը կարդացել են և կարդալու եղանակը մեզ կսովորեցնեն։ Աշխարհն ևս. մանաւանդ քաղաքակիրթ աշխարհը, իւր արուեստն ունի մարդիկ որսալու, որի դէմ յաջողութեամբ մրցելու համար Ս. Գրոց արուեստին հմուտ մի Պօղոս Առաքեալի ընտրել ու ասպարէզ կոչել հարկ եղաւ երբեմն։ աշխարհի արուեստն այժմ աւելի զարգացած է քան երբէք, և միայն հոգևոր արուեստի ամենահմուտ ծանօթութեամբ Առաքելական Եկեղեցւոյ պաշտօնեայն կարող կլինի նորա դէմ մրցել։ Այո՛, մի արուեստ է դա, տարբեր բոլոր միւս արուեստներից, որ ուրիշներին սովորեցնելու համար՝ նախ սովորել պէտք է ամենահմուտ արուեստագէտների մօտ։

Կ. Վ.

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ։
ՄԱՅՐ ԱԹՈՌ։

Վեհափառ Հայրապետը տեղեկանալով, թէ դեկտ. 18-ին լրանալու է Ս. Պետերբուրգի Մետրոպոլիտ Ամեն. Տ. Պալլադիոսի եպիսկոպոսութեան երեսնամեայ Յոբելեանը, նոյն օրը հեռագրով շնորհաւորեց, որին ի պատասխան ս. Մետրոպոլիտը յայտնեց իւր սրտեռանդն շնորհակալիքը։

Անցեալ նոյեմբ. ամսի 30-ին Ս. Գայիանէի վանքում Գեր. Մեսրոպ Արքեպիսկոպոսը դպրութեան և սարկաւագութեան աստիճան տուաւ Մայր Աթոռի միաբաններից Մելքոն Դանագեօզեանին, Բագարատ Մատթէոսեանին և Յովհաննէս Խարազեանին։

Իսկ դեկտ. ամսի 9-ին Ս. Գայիանէի վանքում Գեր. Տ. Գրիգոր եպիսկոպոս Գառնակերեանց կուսակրօն քահանայ ձեռնադրեց Մելքոն սարկաւագ Դանագեօզեանին և Յովհաննէս սարկաւագ Խարազեանին՝ վերակոչելով առաջնին Մուշէ և երկրորդին՝ Յովէլ։ Նոյն երեկոյեան նորընծաներն ստացան աբեղայութեան կարգ և վեղար։

Կիւրակէ դեկտ. 29 պատարագից առաջ Ս. Գայիանէի վանքում Վեհափառ Հայրապետի հրամանաւ Գեր. Կարապետ եպիս. Այվազեանն «Մասն. վարդապետութեան չորս աստիճան և Գաւազանի իշխանութիւն» տուաւ Բարեշնորհ Կորիւն և Մամբրէ աբեղաներին։

Դեկտ. 10-ին Մայր Աթոռս ժամանեց Պետերբուրգի և Մոսկուայի Հայ եկեղեցեաց Փոխանորդ և քարոզիչ Արժ. Տ. Տիրայր վարդապետը։

---

† Դեկտ. 12-ին Մայր Աթոռում երկարատև հիւանդութիւնից յետոյ վախճանուեց Գէորգ վարդապետ Մարտիրոսեան։ Հանգուցեալը վանքի ամենահին միաբաններից մէկն էր՝ ընդունուած Ներսէս Ե. Հայրապետի օրով։ Նա վարել էր զանազան պաշտօններ այլ և այլ տեղերում։ Մի դատի առիթով հանգուցեալը դատապարտուել էր բանտարկութեան Թիֆլիզի Նահանգական դատարանի կողմից, որի համաձայն Ս. Էջմիածնի Սինոդը զրկեց նորան վեղարից և փիլոնից. բայց, դեռ դուրս չեկած վանքից, նա վախճանուեց և թաղուեց վանքի միաբանութեան գերեզմանոցում դեկտ. 14-ին։

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ.

Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրը, համաձայն ամենահպատակօրէն զեկուցման Ներքին գործոց Տ. Նախարարի՝ ամենաողորմածաբար բարեհաճել է հրամայել՝ Թոյլատրել բանալ հանգանակութիւն Կայսերութեան մէջ յօգուտ Ցաճկաստանից մեր երկիրը գաղթած և փախած հայերի։ Հանգանակութիւնը պիտի լինի պաշտօնական անձանց ձեռքով և պիտի հաւաքուի Կառավարչապետի մօտ, այնտեղից բաժանուելու համար կարօտեալներին։

Գ. ՃԵՄԱՐԱՆ.

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ.

Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի վարչութիւնն այսու յայտնում է ի գիտութիւն հասարակաց, որ ճեմարանի հանգուցեալ ուսուցչի, Վարդան Աբովեանի, որբացեալ ընտանեաց համար առ 1-ն յունուարի 1897 ամի ստացուել է նպաստ ընդամէնն 578 ռուբլի

հետևեալ կերպով. 1) Հայուհեաց բարեգործական ընկերութիւնն հանգուցեալի դստեր քառամեայ ուսման և սննդեան վարձ վճարելու համար նուիրել է քառասուն ռուբլի. 2) Գերապատիւ Տ. Սուքիաս արքեպիսկոպոսը Վեհափառ Հայրապետի օրհնութեամբ հանգանակել է չորս հարիւր քսան և ութն ռուբլի. 3) Բժշկապետ պ. Բագրատ Նաւասարդեանը նուիրել է հինգ ռուբլի. 4) Եղբարք պ. պ. Զաքար և Բաղդասար Աբովեանք՝ հարիւր ռուբլի. 5) պ. Յովհաննէս Ժանդարեանց հինգ ռուբլի. ընդամէնն հինգ հարիւր եօթանասուն և ութ ռուբլի։

Վեհափառ Հայրապետի հրամանով վարչութիւնս պատիւ ունեցաւ դիմելու և Ռուսաստանի Հայոց թեմական առաջնորդների աջակցութեանը, ակն ունելով, որ նոքա կը բարեհաճին սիրայօժար օգնութեան հասնելու մի բազմամեայ վաստակաւոր ուսուցչի որբացեալ ընտանիքին։ —

Գերապատիւ Տ. Սուքիաս արքեպիսկոպոսի շնորհիւ հանգուցեալ Վ. Աբովեանի ընտանեաց օգտին հանգանակած գումարի նուիրատուների անուանական ցուցակն հետևեալն է.

	Ռ.
ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ	50
Գեր. Սուքիաս Արքեպիսկոպոս Պարզեանց .	40
Գեր. Կարապետ եպիսկոպոս Այվազեան .	10
Գեր. Անանիա եպիսկոպոս Համազասպեանց .	10
Գեր. Գրիգոր եպիսկոպոս Գառնակերտեանց .	3
Արժ. Ստեփաննոս վարդապետ Իսկանդարեանց	2
Արժ. Ղուկաս վարդապետ . . .	2
Արժ. Եղիա վարդապետ . . .	3
Արժ. Գէորգ վարդապետ Ռշտունի. .	5
Արժ. Վահան վարդապետ . . .	10
Արժ. Յուսիկ վարդապետ Մովսիսեան .	10
Արժ. Ղևոնդ վարդապետ . . .	5
Արժ. Ադամ վարդապետ . . .	10
Ոմն բարեպաշտ	5
Տէր Ստեփաննոսեան	3
Արժ. Աշոտ վարդապետ . . .	5
Արժ. Նահապետ վարդապետ . .	10
Արժ. Սահակ վարդապետ Ամատունի .	15
Արժ. Կորիւն աբեղայ . . .	5
Արժ. Բարդուղիմէոս վարդապետ Գէորգեան	10
Շնորհ. Ղուկաս Սարկաւագ . .	1
Շնորհ. Սմբատ Սարկաւագ . . .	1
Շնորհ. Կոստանդին Սարկաւագ . .	1
գումար —	216
Շնորհ. Եսայի Սարկաւագ . . .	3
Ն. Ս.	3
Պ. Կարապետ Կոստանեանց . .	25
Պ. Նիկողայոս Քարամեան . .	10
Պ. Յ. Յովհաննիսեան . . .	5
Պ. Ս. Կանայեան	5
Պ. Ս. Յարութիւնեան . . .	5
Պ. Գ. Թումանեան	5
Արժ. Կարապետ վարդապետ . .	5
Արժ. Մամբրէ աբեղայ . . .	5
Պ. Պետրոս Տիգրանեան . . .	5
Պ. Մ. Ղազարեան	5
Պ. Մ. Հախնազարեան . . .	5
Պ. Գ. Ղազարեան	5
Պ. Ս. Մանգինեան	5
Պ. Տէր Խաչատրեան	5
Ճեմարանի Զ-րդ դասարանի աշակերտներից	22
« » Ե-րդ	21
Պ. Բ. Մատթէոսեան . . .	3
Պ. Խ. Այվազեանց	1
Տ. Սոփիա Շահխաթունեանց . .	10
Տ. Իսկուհի Խրիմեան . . .	10
Տ. Վարսենիկ Ատարբէգեան . .	3
Պ. Գ. Մուշեղեան	5
Պ. Յովհաննէս Աւետիքեանց . .	3
Պ. Տիգրան Նաւասարդեանց . .	3
Պ. Ս. Սամուէլեանց	5
Պ. Աւետիս Թարխանեանց . . .	1
Տ. Եսթեր Գառնեանց . . .	1
Պ. Յովակիմ Զաքարեանց . . .	3
Պ. Տիգրան Սամուէլեանց . . .	2
Ոմն	1
Պ. Փիչխուլեանց	1
Պ. Օհանջան Մանուչարեանց . .	2
Պ. Մ. Աբէլեան	1
Պ. Ս. Փոթէյեանց	1
Պ Յակոբ Խէչանեանց . . .	1
Պ. Կ. Յարութիւնեանց . . .	2
Պ. Ա. Օհանջանեանց . . .	1
Պ. Սաժումեանց	5
Պ. Ենոք Զանիբէգեան . . .	3
Գումար —	212
Ընդհանուր գումար —	428

Գերապատիւ Տ. Սուքիաս սրբազանին վանքում և Վաղարշապատում հանգանակելու աջակից եղած են շնորհ. Ղուկաս սարկաւագ, պ. Պետրոս Մուշեղեանց և Տիկ. Ս. Քարամեանց։

Վարչութիւնս այսու պատիւ ունի յայտնելու նաև իւր շնորհակալութիւնն յիշեալ նուիրատու և աջակցող անձանց։

ՏԵՍՈՒՉ ՃԵՄԱՐԱՆԻ Դ. Կոստանեանց.

ի 27 Դեկտ. 1896 ամի.

Ի Վաղարշապատ.

ԱՌԱՔԵԼ. ՊԱՏՄԱԳՐԻ ԴԱՄԲԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԺՈՂՈՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ՝

Արարատ ամսագրիս նախորդ համարում ներկայացրած հաշուի համաձայն ունէինք 94 ռ. նոր ստացել ենք 79 ռուբլի՝ որ և ընդամէնը կունենանք 173 ռուբլի.

Գեր. Մեսրոպը աղք-եպիսկոպոսից . . .	3 ռ.
Արժ. Բարդուղիմէոս վարդապետից . . .	3 ռ.
Ս. Պետերբուրգից Արժ. Տիրայր վարդապետի ձեռքով	60 ռ.
Արժ. Գարեգին վարդապետ Սաթունեանից . .	10 ռ.
Բարեշ. Կորիւն Աբեղայից	3 ռ.
Գումար.	79 ռ.

Հանգանակութիւնը շարունակւում է. ցանկացողները թող բարեհաճեն ուղարկել իրենց նպաստները Ս. Էջմիածին մեր հասցէով.

ՂՈՒԿԱՍ ՍԱՐԿԱՒԱԳ ԱՂԱՒԵԼԵԱՆՑ.

ՇԱՄԱԽՈՒ ԹԵՄ.

Անցեալ նոյեմբ. ամսի 21-ին Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրն ամենաողորմածաբար բարեհաճել է հաստատել Ղարաբաղի թեմի նախկին Առաջնորդ Գեր. Կարապետ եպիսկոպոս Այվազեանցին Շամախու թեմական Առաջնորդ՝ ի տեղի Գեր. Մակար եպիսկոպոս Բարխուդարեանցի, համաձայն առաջարկութեան Նորին Սրբութեան Վեհափառ Հայրապետի ազգիս։

ՏԱՃԿԱՀԱՅՔ.

ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԸ.

Արարատի նախորդ համարում բաւականացանք միայն Գեր. Մաղաքիա եպ. Օրմանեանի Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք ընտրուիլն ու հաստատուիլը շնորհաւորելու և օրհնելու համար Վեհափառ Հայրապետի ուղղած հեռագիրը հաղորդելով։

Նոր Պատրիարքի ընտրութեամբ Տաճկահայոց մէջ եկեղեցական գործերն ևս աւելի որոշ կերպարանք ստացան, որքան դժբաղդ պարագաները ներում են. մի և նոյն ժամանակ գրեթէ միատեղ հանդէս եկան Կ. Պոլսում երկու նոր թերթեր՝ Բիւզանդիոն (շաբաթական թերթ նախկին Արեւելքի) և Մասիս (կերպարանափոխութիւն նախկին շաբաթաթերթի), այնպէս որ մենք միջոց ունինք այժմ կրկին պարբերաբար տեղեկութիւններ հաղորդել մեր տաճկահայ եղբարց եկեղեցական—բարոյական վիճակի մասին։

Ամենից հետաքրքիր հարցն է հարկաւ, թէ ո՞վ է նորընտիր Պատրիարքը և ի՞նչ չափով ընդունակ է ամենածանր պայմաններում մի ամենաթշուառ ժողովուրդ հովուելու։—Օրմանեան Սրբազանը Մայր Աթոռում և Կովկասում յայտնի է ամենից առաջ իբրև աստուածաբանութեան ուսուցիչ. մի տարի պաշտօն է վարել նա Մայր Աթոռի ճեմարանում և իւր գործունէութեամբ մեծապէս նպաստել է այն հանգամանքին, որ ճեմարանից առաջին անգամ նոր անդամներ ներս մտան Միաբանութեան տարիներէ ի վեր փակ մնացած դռներով։ Իւր աշակերտներին Օրմանեան Սրբազանը կարողացաւ համոզել, որ կրօնի ու աստուածաբանութեան դասերն էլ կարող են հետաքրքիր լինել ու նիւթ բովանդակել իրենց մէջ. թէ նոցա, թէ ուրիշ շրջապատողների առաջ դրեց նա աշխատող մարդու մի չտեսած օրինակ. նա ցոյց տուաւ այդ կարճ ժամանակամիջոցում, թէ մի մարդու եռանդագին աշխատութիւնն ինչքան բան արտադրել կարող է, ինչքան տարբեր է այդպիսի մարդը կիսասիրտ, աշխատութիւնից փախչող մարդկանցից։ Արտաքինները նորա կողմից սիրալիր յարաբերութիւն են տեսել միշտ, նորա աշակերտները և մի քանի մտերիմ բարեկամներ միայն նորան ի մօտոյ ճանաչում են. բայց փոխանակ այդ ճանաչողութիւնը լոկ յառաջ բերելու՝ աւելի լաւ ենք համարում օգտուել Բիւզանդիոն, գրեթէ կիսապաշտօնական, թերթի մի առաջնորդողից, որ, թէև շատ բան ըստ տեղական սովորութեան գերադրական աստիճանով՝ ըստ մեզ ուղիղ է գնահատել մեծ մասամբ Սրբազանի արժանաւոր կողմերը։

Նախ՝ ինչքան գիտենք, Օրմանեան Սրբազան օտար դաւանութիւնից դարձած առաջին եպիսկոպոսն է, որ պատրիարքական գահ է նստում։ Բիւզանդիոն այդ հանգամանքի վերայ խորթ աչքով նայողների դէմ նկատում՝

է. «Հռովմէականութենէ դարձած եկեղեցական մ՝ ընդուներ ենք մեր եկեղեցւոյն մէջ, եպիսկոպոսութեան բարձրացուցեր ենք, ամենէն կարևոր թեմերու առաջնորդ ընտրեր ենք ... և որ ամենէն կարևորն է՝ ապագայ բարձրաստիճան հայ եկեղեցականութիւնը պատրաստելու պաշտօն ունեցող հաստատութեան մը ուսումնական և վարչական վերջին ուղղութիւնն իրեն յանձներ ենք, և միայն պատրիարքութիւնն է, որ շատ պիտի տեսնէինք այսքան արժանաւոր, այսքան ընդունակ, այսքան կարող եկեղեցականի մը»։ «Օրմանեան Սրբազան սիրելի է Ազգին, որովհետև ինքն ալ այնքան սիրեց իր Ազգն ու ազգային Եկեղեցին, որ անոր գիրկը մտաւ՝ աւելի (մենք այդ աւելին կընչէինք) աղէկ ծառայելու համար անոր»։—Մենք չէինք վստահանայ քննել, թէ Սրբազանը որչափ սիրելի է Ազգին, բայց թէ նա արժանի էր սիրելի լինելու գոնէ այն տեսակէտից, որ գուցէ միակ Հռովմէականութիւնից դարձող հայ եկեղեցականն է եղել, որ անկեղծ ջանք է գործ դրել Հռովմէական փոշին բոլորովին թօթափել իւր վերայից, ծառայել Ազգին իւր բոլոր կարողութեամբ և պաշտպանել ըստ ամենայնի Ազգային եկեղեցւոյ ինքնուրոյնութիւնը։

Երկրորդ աչքի ընկնող և առանձին կարևորութիւն ունեցող կէտն այն է, որ յանձին Օրմանեան Սրբազանի պատրիարք դահ է բարձրանում առաջին անգամ համալսարանական կրթութիւն ունեցող մի անձն։ Այդ նշանակում է, այնպիսի մի հանգամանքում երբ Պատրիարքին ամեն ժամ առիթ է ներկայանում գործ ունենալ դիւանագէտների, եւրոպական դեսպանութեանց և ուրիշ ազդեցիկ մարմնոց ներկայացուցիչների հետ՝ դիմացինը երբէք իրաւունք չի ունենայ բարձրից նայելու նորա վերայ, մի քանի արևելեան հաճոյախօսութիւններով բաւականանալու, այլ կրթութեամբ հաւասար, եթէ ոչ բարձր, անձն կունենայ իւր առաջ, որ հեռուն ու մօտիկը կշռադատելու նոյնչափ կարողութիւն ունի, որչափ և ինքը։ Մի պատրիարք, որ գրեթէ բոլոր ներկայացողների հետ առանց թարգմանի խօսել կարող է, մեծապէս ապահոված է այնպիսի մի աշխարհում, ուր ոչ ոք ընկերի վերայ չի վստահանում։

Մի ուրիշ, ըստ մեզ նոյնպէս շատ կարևոր և հազուադիւտ առաւելութիւն, որի զրկանքը երևի շատ պարագաներում զգացել է նոյն ինքն Օրմանեան Սրբազանի անմոռանալի Նախորդը՝ այն է, որ նա հաւատարիմներ ունի։ Եռանդոտ և ճկուն Պատրիարքի կողքին իբրև խորհրդատու կանգնած է Ցաճկաստանում ամենախելօք, այլև առհասարակ դիւանագիտական աշխարհում մեծ վարկ ունեցող մի քաղաքագէտ, Յարութիւն փաշայ Ցատեան, որ միևնոյն ժամանակ իբրև ամենալաւ հայ է ճանաչուած և, իւր փափուկ դիրքին չնայելով՝ իւր ազգութեան դէմ երբէք չէ մեղանչել։ Բացի այդ, նա շրջապատուած է մի խումբ իւր իսկ դաստիարակած և հասցրած երիտասարդ վարդապետներով, որոնք ինչքան և խակ ու անփորձ, այնուամենայնիւ աչքի են ընկնում ժողովրդի միջ իրենց ունեցած կրթութեամբ՝ որոնց նա լաւ ճանաչում է և շատ դժուարին հանգամանքներում նոցա վերայ վստահել կարող է, նոցա միջոցով հասնել շատ տեղեր, ուր ինքն անձամբ անձեռնհաս է։

«Օրմանեան բնաւ չբամբասուած ըլլալու եզական արժանիքն ունի», նկատում է իրաւամբ Բիւզանդիոն ... «ամենէն չար լեզուներն անգամ Օրմ. սրբազանին բարոյական նկարագիրը չէին կրնայ ստգտանել։ Օրմ. սրբազանի ընտրութիւնն յուսանք որ դաս մ՝ ըլլայ մեր եկեղեցականութեան, նոյն իսկ եպիսկոպոսական դասուն, վճռապէս ցոյց տալով, թէ Հայ Ազգն ոչքան մեծ կշիռ կուտայ եկեղեցականի մը անբասիր, անաղարտ վարքի ու բարքի տէր ըլլալուն»։—«Օրմանեան Սրբազանի՝ մէկ ուրիշ գովելի ձիրքը պարտաճանաչ, կարգապահ, ճշդապահ մարդ մ՝ ըլլալն է»։ «Ազգային իշխանութիւնն ուր որ զրկեց զինք, ինչ պաշտօն որ տուաւ, սիրով կատարեց, և թէպէտ բնիկ Պոլսեցի, շատ մը գաւառացի եկեղեցականներէ աւելի ծառայեց Պոլիսէն դուրս»։ «Մեր եկեղեցականութեան մէջ կարգապահութեան ոգւոյն պակսութեան վերայ յաճախ այնքան գանգատներ լսուած են, և այնքան իրաւացի գանգատներ, որ կարգապահութեան ոգւոյն մարմնացումն եղած եպիսկոպոսի մը Պատրիարք ընտրուիլն ազգու և

հանրօգուտ դաս մը պիտի ըլլայ բովանդակ եկեղեցական դասուն»։

Ի՞նչ է հետևում այս բոլորից. արդեօք մեն, որ Սրբ. Օրմանեան իբրև պատրիարք շատ աջողակ կերպով իշխանութիւն կվարէ և անուն կվաստակէ. ամենևին ոչ. պարագաները այնպէս բացառիկ են, որ հակառակ հետևանքներ կարող են յառաջ բերել։ Նա գործ պիտի ունենայ մի ինքնակալի հետ, որին արդարագորով մարդի մարդասպան են անուանում, մի կառավարութեան հետ, որ հարիւր հազարաւոր հայեր կոտորել տալուց, մի ամբողջ ժողովուրդ խորտակելուց յետոյ ստիպում է խոստովանել, թէ իրենք հայերն են մեղաւոր այդ բոլորի համար, իսկ դահիճներն արդար ու քաւեալ նոցա արիւնից. և այդպիսի մի կառավարութեան պէտք է նա բարեկամական ձեռք մեկնէ, ազատելու համար այն, ինչ որ ազատել դեռ կարելի է՝ ինչ որ ազատելու երկու տարիների դժբաղդ փորձը ուրիշ միջոցներ չընձեռեց։ Ուղիղ քաղաքականութիւն է այդ, —ո՞վ կարող է այժմէն իսկ հաստատապէս որոշել. շատերը սովոր են այդպիսի դէպքերում հեշտ վճիռներ դնել. ինչ որ տեսնում ես չես կարող գլուխ հանել, ինչ որ գլուխ հանելու համար ստիպուած պիտի լինիս խղճի դէմ բաներ ասել ու անել՝ մի՛ ձեռնարկիր. բայց իրաւացի՞ է արդեօք այդպիսի տեսութիւններով ասպարիզից քաշուիլը, և ո՞րն է իրօք խղճի դէմ բանը՝ հեռու կենալ և մաքուր մնալ այնտեղ, ուր օգնութեան են կանչում, թէ ամեն վտանգ աչքի առաջ առնելով, նաև անուան կարութիւն աշխարհի աչքում՝ անել ձեռքից եկածը։ «Այսօր ընդհանուր և բարձր պաշտօնի մը լուծը կդրուի վրաս—ասել է Նորընտիր Պատրիարքը կայսեր. պաշտից վերադառնալուց յետոյ պատրիարքարանի եկեղեցում իւր ուխտն անելիս—և ես պարտաւորեալ կը խոնարհիմ անոր առջև, որպէս զի չստեմ ամբողջ կենացս հաստատուն կանոնը, չխուսափիլ որևէ աշխատութենէ և զոհողութենէ, երբ բարձր կամք մը զայն կօրինադրէ»։ — և գալիք սերունդը նորան կարդարացնէ այս պարտաճանաչութեան համար, եթէ մինչև իսկ անյաջողութիւն ունենայ իւր գործունէութեան մէջ և ըստ երևութին մեղաւոր գտնուի, ինչ ինչ բաներում։

Նորընտիր Պատրիարքի ձեռնարկութեանց մասին այժմէն իսկ ի լրոյ պատել մեծ անտեղութիւն ենք համարում։ Թէև Բիւզանդիոնի մէջ մի քանի անգամ յիշուած է, որ Պատրիարքի և կրօնական ժողովի կողմից պաշտօնական տեղեկութիւններ պէտք է տրուէին Վեհափառ Հայրապետին, բայց ցարդ ոչ մի պաշտօնական գրութիւն չէ ստացուած. մընում է ուրեմն սպասել անմիջական տեղեկութիւններին՝ ստոյգ աղբիւրից։ Յամենայն դէպս Օրմանեան Սրբազանի ամբողջ անցեալը մեզ ապահովեցնում է, որ նա ամենանեղ հանգամանքներում իսկ իւր Ազգի իրաւանց, իւր սրբազան պարտականութեանց, իւր ուխտի հակառակ ոչինչ չի գործի։

—

Պատրիարքական ընտրութիւնից տասն օր առաջ Հոկտ. 28-ին «Եկեղեցական համագումար ժողով» էր կայացել պատրիարքարանում և պատր. ընտրելիների տասնեհինգ անուն ցանկ էր պատրաստել (Հմայեակ եպ. ընտրուած էր 43 քուէով, Բարդուղիմէոս եպ. 37 քուէով—Օրմանեան Սրբ. 13 քուէով միայն)։ Ապա երեք օր յետոյ Հոկտ. 31-ին «ընդհանուր ժողով» էր գումարուել կրօնական և քաղաքական ժողովները կազմելու. Ա-ի համար ընտրուած 14 անդամներից 4 եպիսկոպոս են (Օրմանեան Սրբ.-ի պատրիարք ընտրուելուց յետոյ երեք մնացին, որոնցից Մելքիսեդէկ եպ. մի քանի անգամ հրաժարական է ներկայացրել), 5 վարդապետ և 5 քահանայ. իսկ Բ. ի համար ընտրուած են Պոլսոյ ազգայնոց մէջ ամենից աւելի աչքի ընկնող և յարգի անձնաւորութիւններ՝ «քաղաքական ժողով մը, որուն չափ պատկառելի, ազդեցիկ և թէ՛ ցէրութեան և թէ Ազգին վստահութիւնը վայելող մարմին մը դուն ուրեք կոչուած էր ազգային գործերը վարելու այնքան փափուկ և դժնդակ հանգամանքներու մէջ» ասում է Բիւզանդիոն։—Նոյեմբ. 5 գումարման միջոցին Քաղ. ժողովը ընտրել է Ա. ատենապետ Յարութիւն փաշա Տատեան, Բ. ատենապետ Ստեփան փաշա Ասլանեան. Ա. ա-

տենադպիր Էլիաս էֆ. Զայեան, Բ. ատենադպիր Միհրան էֆ. Սէթեան. ապա գաղտնի քուէարկութեամբ պատր. ընտրեցաց Հնգանուն ցանկ է պատրաստել՝ Մամբրէ եպ. Երուսաղէմի, Բարդուղիմէոս եպ. Զամչեան, Խորէն եպ. Մխիթարեան, Ստեփան եպ. Յովակիմեան և Մաղաքիա եպ. Օրմանեան։ —Յաջորդ օրը Նոյեմբ. 6-ին «Ազգային ընդհ. ժողովը» գումարուեցաւ Մայր Եկեղեցւոյ մէջ 62 երեցփոխանաց ներկայութեամբ, ուր 47 քուէից բացարձակ առաւելութեամբ Պատրիարք ընտրուեցաւ Օրմանեան Սրբազան։—Կրօնական ժողովը իւր Ա. ատենապետ ընտրել է Գրիգորիս եպ. Յովհաննիսեանին, Բ. ատենապետ Վահրամ եպ. Մանկունուն, Ա. ատենադպիր Եղիշէ Ծ. վ. Դուրեանին, Բ. ատենադպիր Յովսէփ Ծ. վ. Այվազեանին։

—

Նորընտիր Պատրիարքին եղած բազմադիմի շնորհաւորութեանց և այցելութեանց մէջ առանձին ուշադրութեան արժանի է այն, որ Հայ—Հռովմէականաց Պատրիարք Ազարեան ևս անձամբ այցելեց Նորան Նոյեմբ. 15-ին, անմիջապէս Կայսեր հաստատութիւնից յետոյ։ Նորին Ամենապատուութիւն շտապեց հարկաւ փոխայցելութեան գնալու, և փառաւոր ընդունելութիւն գտաւ։

—Ամեն. Տ. Մաղաքիա եպ. Պատրիարք ընտրուելուց առաջ արդէն հրաժարած էր Արմաշու Դպրեվանքի փոխ-վանահայրութեան պաշտօնից, ինչպէս և Եղիշէ Ծ. վ. Դուրեան դպրոցի տեսչութեան պաշտօնից, որովհետև վանքի շուրջը տիրող տնտեսական տագնապի պատճառաւ, մանաւանդ թէ ըստ նիւթականին իւր ամենից աւելի զօրաւոր նեցուկ Աբիկ էֆ. Ունջեանի խնամածութիւնից զրկուելով, անել դրութեան մէջ էր ընկել՝ անկարող ոչ միայն դպրոց պահելու, այլև նախկին թուով միաբաններ սնուցանելու։ Բնականաբար Նորին Ամենապատուութեան մի գլխաւոր հոգածութեան առարկան ևս պիտ լինէր իւր կանգնած գործը անկումից ազատել։ Այս նկատմամբ արդէն կարևոր ջանքեր եղել են. Դպրեվանքի սաներից Աղան վարդապետ ժամանակաւոր կառավարիչ է նշանակուել, և ինչպէս Մասիս իւր 20 թ.-ով հաղորդում է, դպրոցը վերաբացուել և արդէն դասերն սկսուել են։ Դպրեվանքից ելած մի քանի երիտասարդ վարդապետներ արդէն առաջ զանազան տեղ քարոզչութեան պաշտօն էին ընդունել. այժմ կամենում են մի մասին Պատրիարքարանի հետ կապելով՝ ընթացիկ գործերի մէջ վարժեցնել։

—

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԿՈՏՈՐԱԾԻՆ.

Բ.

ՅԵՏ ԿՈՏՈՐԱԾԻՆ.

Յունիս 5 չորեքշաբթի օրէն սկսեալ արդէն հետզհետէ քաղաքս կը հասնէին շրջակայ Սղգայ, Հուշանց, Կուռապաշ և այլն գիւղերու կանանց և մանկանց խուռներամ գաղթականութիւնն։ Ուրբաթ օրն Շահպաղիէն, Լեսկէն, Աւերակիէն, Բերդակէն և Հայոց—Զորի շատ մը հայաբնակ գիւղերէն մեծաւ մասամբ նոր այրեցած և որբացած թշուառներու բազմութիւնն, իրարու վրայ կուտուած՝ որի այրը սպանուած, միւսի հայրը, մէկի եղբայր, ուրիշի բարեկամը, ասոր մայրը առևանգուած, անոր քոյրը։ Շատ սրտաճմլիկ է ասոնց ընծայած ողբալի, աղեխարշ տեսարանն, որոյ ի տես անկարելի է որ չզգացուի ոք. մինչև անգամ շատ մը թիւրքերու աչքերէն ալ արտասուք կը հոսէր։ Ասոնք ալ քաղաքացի հայ ժողովրդեան նման կապաստանեն Ամերիկեան միսիոնարաց տունը, որ անգլիական դրօշակի պաշտպանութեան ներքև առնուած է, իսկ մեծ մաս մ՝ ալ կապաստանին Քաղաքամիջի ս. Եկեղեցեաց ծոցը և Առաջնորդարանը։ Երկուշաբթի օրը (յունիս 10) խաղաղութեան վերահաստատման հռչակումէն յետոյ ալ հասան Արճակի և ապա հետզհետէ աւելի հեռաւոր գիւղերու գաղթականութիւնք։

Խաղաղութեան պաշտօնապէս հռչակուելէն յետոյ գիւղացի գաղթականք, որոց թիւը կը հասնի իբր 12—15000-ի, այլևս չեն ընդունուի Ամերիկեան միսիոնարաց տունը, բաց ի վիրաւորներէն և հիւանդներէն, որք կը պատսպարուին այս առթիւ յատուկ հիւանդանոցի վերածուած Սանդիստեան վարժարանին մէջը և անդ կը դարմանուին. մնացեալք կը տարածուին ուղղակի փողոցներու մէջը՝ Նորաշէն եկեղեցւոյ և Քէնդրջիի փողոցներէն սկըսեալ մինչ Աւօի դար, յորս կը գտնուին Անգլիական հիւպատոսարանն և Ամերիկեան միսիոնարաց տունն։ Ասոնց տեսարանն ալ խիստ աղեկտուր է։ Թշուառներու, այրիներու, որբերու ահագին բազմութիւն մը, որք աշխարհի մէջը ոչինչ ունենալով, փողոցներու և փոշիներու մէջը թաւալած, անդ կը

ննջեն, անդ կը ճաշեն մի բրտուճ հաց կամ մի տեսակ ճաշ, զորս ժամերով հաղիւ կարողացած են ձեռք բերել, և անդ կը ծննդաբերեն։ Մարդիկ մեծ դըժուարութեամբ հաղիւ կարող կը լինին ճեղքել ահագին բազմութիւնը և անցնել. փողոցներու մէջը անգամ խեղճերուն տեղ չկայ, իրարու վրայ խռնուած են, և ի լրումն դժբաղդութեանց՝ ճիշդ նոյն միջոցին կը ցամքի մեծ Քէնդրջիի աղբիւրն, որոյ ջուրը կանցնէր նոյն փողոցներէն և որով թըշուառներն իրենց ծարաւը կը յագեցնէին և կամ աղտեղութիւնները կը մաքրէին։

Իբրև հետևանք սոյն թշուառութեանց, երկիւղներու, սովին և գէշ սննդառութեան՝ շուտով վրայ կը հասնին նաև հիւանդութիւններ և համաճարակներ։ Հիւանդանոցն հիւանդներով և Նորաշէն եկեղեցւոյ գերեզմանատունն մեռեալներով կը լեցուին. քահանայք և ժամկոչք մեռեալներ թաղելէ աչք չեն կարող բանալ, որոց թիւն օրական մինչ 50—60 կը հասնի։

Մարդ կարող է կատարեալ գաղափար մը կազմել տիրող ահագին թշուառութեան և կոտորածի դարշելի տեսարանին վրայ, այցելելով հիւանդանոցն, ուր կը գտնուին անոնց դժբախտ զոհերն։ Այստեղ կը պատսպարուին, կը խնամուին ու կը դարմանուին 100-էն աւելի վիրաւորեալներ և նոյնչափ ալ հիւանդներ։ Վիրաւորելոց տեսքը իսկ սոսկում կազդէ. մարդիկ և կանայք՝ որք սուրի, դաշոյնի, գնդակի և այլն զինուց բազմաթիւ ու խոր վէրքեր ստացած են, և զարմանալի է թէ ինչպէս կարող եղած են ապրել։ Ամերիկեան հրուշակաւոր մարդասէր օրիորդ Տօքթօր Քիմպըլ մօր մը յատուկ եղած խնամով ու գորովով կը խնամէ զանոնք, վէրքեր կը փաթաթէ ու կը դարմանէ։

Արդէն ըսուեցաւ որ Վարագայ լեռան շրջապատ Վերին Հայոց—Զորի և ուրիշ քանի մ՝ գիւղերու բնակիչներէն հազարաւոր անձինք, իրենց տաւար ու ոչխարներով, փախած ու Վարագայ վանուց մէջը ու լեռը ապաստանած էին։ Յունիս 10 երկուշաբթի օրն, երբ խաղաղութիւնը պաշտօնապէս հռչակուելէ յետոյ քիւրդ Աշերէթներն դուրս հանուեցան քաղաքէն և իրենց պաշտօն տրուեցաւ հալածել շաբաթ օրն քաղաքէն դէպ ի Պարսկական սահմանագլուխը մեկնող հայ փախստականները և անոնց հետևող անզէն ժողովուրդը՝ Աշերէթներն դիմեցին դէպ ի քաղաքի արևելեան կողմն—Վարագայ լեռը և նորա կողերու վրայ գտնուած Վարագայ և Կարմիրորի վանքերը, և Շուշանց գիւղի եկեղեցին հրկիզելէ և Վարագայ վանուց միաբանութեան անդամներէն, աշակերտներէն ու վարդապետներէն զոմանս սպանելէ յետոյ՝ կատաղի յարձակում գործեցին նաև վանուց մէջը և շրջակայքը ապաստանող հայ ժողովրդեան վրայ և այդ նշանաւոր, պատմական վանուց մէջը արեան հեղեղներ հոսեցուցին։ Վարագայ ս. լեռան, արդեօք քանի՞երորդ անգամն լինելով, ներկուեցաւ հայ արիւնով և Վարագայ ս. Խաչն, որ հակառակ քանդող ձեռաց հնարներուն, դեռ ևս կանգուն կը մնայ իր շրջակայ փլատակներու վրայ՝ ականատես վկայ եղաւ այդ սոսկալի նախճիրներուն։ Մնացեալ ժողովուրդք ապա ապաստանեցան քաղաքը։ Արդէն պէտք չը կայ ասելու, որ լեռը փախուցած իրենց տուարք և անասունք ալ յափշտակուած էին։ Անոնք՝ որք զերծ մնացին այս կոտորածէն, լեռան այնպիսի անմատչելի բարձրութիւններու վրայ ապաստանած էին, որ քիւրդերը չը մտեցան անոնց։ Ճամփու վրայ, ուր որ անցան սոյն քիւրդ Աշերէթներն, իրենց շուրջը սփռեցին մահ և աւերում, կործանում և թշուառութիւն։ Գեղերու աւերմանց և կոտորածի մի կարևոր մասն տեղի ունեցաւ յունիս 10-էն յետոյ հայ փախստականները հալածելու պաշտօն ունեցող սոյն Աշերէթներու ձեռամբ։

Քաղաքէն մեկնող անձնապաշտպան զինեալ անձերն, թուով իբր 200 անձինք, յունիս 8 շաբաթ երեկոյին դուրս գալով քաղաքէն, նոյն գիշերն և յաջորդ կիւրակէ օրն ապաստանեցան Վարագայ լեռը։ Գիտենք որ ասոնց հետևած էին 1000-էն աւելի քաղաքացի անզէն անձեր, որք կոտորածէ զերծ մնալու համար լաւագոյն համարած էին միանալ անոնց և նոյն զինուց պաշտպանութեամբ դիմել դէպ ի Պարսկական սահմանագլուխը։ Ասոնցմէ մի մասն քանի մ՝ օր Վարագայ լեռան մէջը և այլուր ապաստանելով, վտանգն անցնելէ յետոյ նորէն վերադարձան քաղաքը, իսկ միւս մասն, թուով իբր 600, տեսնելով որ քաղաքն բոցի ու կրակի մէջ է և թէ ժողովուրդն դուրս կը հանուի Անգլիական դրօշի պաշտպանութենէն, զայն մոլեռանդ խուժանի յարձակմանց ենթարկելու համար՝ որոշեց հետևել ինքնապաշտպան խումբերուն դէպ ի Պարսկական սահմանագլուխը։ Ասոնք քաղաքի և շրջակայ գեղերու երիտասարդութեան և պատանեկութեան ընտրելագոյն, ամենաթարմ և զարգացած մասը կը կազմէին։

Վարագայ մէջը ինքնապաշտպան խումբերը վէճ ունեցան՝ վերոյիշեալ անզէն ժողովուրդը Պարսկական սահմանագլուխը փոխադրելու խնդրոյն վրայ, և այս պատճառաւ բաժնուեցան երկու խումբերու։ Մեծագոյն մասն՝ տեղացի տարրերու առաջնորդութեամբ և իբր 500 զինեալ և անզէն ժողովուրդէ բաղկացեալ՝ երկուշաբթի օրը մեկնեցաւ Պաշգալէի և Սալմաստի ճամբով, իսկ փոքր մասն, թուով իբր 100 անձինք, քանի մ՝ օր լեռան մէջը ապաստանած մնալէ յետոյ, մեկնեցաւ Սարայի և Խօթուրի ճամբով։ Հէքարիի և սահմանագլխի բոլոր քիւրդ Աշերէթներուն, կանոնաւոր և համիդիյէ զօրաց

հրաման տրուեցաւ բոլոր ոյժով հալածել այս խումբերը։

Կառավարութիւնն իմանալով, որ վերջին խումբն ապաստանած է Վարագայ լեռան կողերու վրայ, զինուորական գունդեր և քանի մ՝ լեռնային թնդանօթներ ղրկեց հետազօտելու նոցա հետքը և հալածելու հայ ինքնապաշտպանները. սակայն չը կարողանալով գտնել զանոնք, բաւականացաւ միայն այրելով ու քանդելով լեռան հիւսիսային թեւերու վրայ գտնուած Կողպանց գիւղը և ս. Գրիգոր Լուսաւորչի վանքը։

Ճամբան՝ Պարսկական սահմանագլուխը դիմող վերոյիշեալ երկու խումբերն ալ կը պատահեն ամեն կողմերէն զիրենք հալածելու համար համախմբուող Աշերէթներու, հավիդլէք և կանոնաւոր զօրաց 10,000-էն աւելի բազմութիւն մը, և 4—5 օր պարտաւորուելով կռուել անհամեմատ ոյժերու դէմ, նօթի և պարտասեալ, փամփուշտի մթերքնին ալ պակսած և անօգնական մնալով՝ կը պաշարուին անոնցմէ և ամենամեծ մասամբ կը կոտորուին. դէթ այսպէս է կառավարութեան պաշտօնական տեղեկութիւնը, զոր ոչ պաշտօնական աղբիւրք ալ կը հաստատեն տակաւ։ Անզէն անձերէն շատերը, գուշակելով խմբի դժբաղդ վախճանը, կը փորձեն բաժնուիլ խումբէն և ապաստանարան գտնել շրջակայ գիւղերու, լեռներու և Պաշ-Կալէի մէջը. սակայն անոնք ալ նոյն դժբաղդ վախճանը կունենան, միայն վեց անձինք ճամբաներու վրայ կը ձերբակալուին և քանի մ՝ շարաթ Պաշ-Կալէի մէջը բանտարկուած մնալէ յետոյ, Վանայ կեդրոնական բանտը կառաջնորդուին։ Քաղաքիս մէջն ալ քանի մ՝ հայեր կը ձերբակալուին և կը բանտարկուին։

Կոտորածէն յետոյ կուսակալի փոխանորդ Գերիգ Սաադ-Էդդին փաշայն ձեռնարկեց բոլորովին զինաթափ ընելու հայերը, առարկելով որ հայոց մէջը տակաւին կը գտնուին փամփշտաւոր հրացաններ, մանաւանդ Քաղաքամէջ, որ պահպանութեան ներքև աւնուած լինելով, ոչ ոք զինուորեալ կարող եղած չէր մեկնել դէպ ի Պարսկական սահմանագլուխն, որպէս Այգեստանէն։ Քաղաքի և Այգեստանի հայ երևելեաց հետ կը կոչէ Վանայ Պատրիարքական փոխանորդը՝ Տ. Սահակ վարդապետը, և 24 ժամ միջոց կը տայ զէնքերը յանձնելու։ Հայերն նորէն մեծ սարսափի մէջ կիյնան, կասկածելով որ խուզարկութեան անուան տակ նորէն մեծ կոտորած պիտի սկսի Այգեստանի անվնաս մնացեալ թաղերն և ի Քաղաքամէջ։ Վերջնոյս բնակիչք առաւել սարսափահար, ոմանք մինչև իսկ կը փոխադրուին Այգեստան։ Հայերն կառարկեն, որ զինեալ անձերն արդէն քաղաքէն մեկնած լինելով, մնացեալ զէնքերն պարզ հրացաններ և վեցհարուածեաններ են, յորոց կարգ մը կը հաւաքեն և Առաջնորդարանին կը յանձնեն։ Կառավարութեան հայազգի օգնական Վսեմ. Ստեփան Էֆէնդի Մելիք չը հաւաներ հայերը զինաթափ ընելու համար բուռն միջոցներու գործադրութեան, որոց հետևանքը պարզելով իւր համոզիչ և ճարտար խօսքերով կը յետաձգէ դայնս։ Յաջորդ օրն կեդրոնական կառավարութենէն ստացուած հեռագրական հրահանգն կը հաստատէ Վսեմ. օգնականի հայրենասիրական տեսութիւնները։

Այսպիսի հայրենասիրական ուղիղ տեսութիւններով էր, որ նախորդ կուսակալ Վսեմ. Նազըմ փաշայն զգուշացաւ միշտ Վանայ մէջը կոտորած յառաջ բերելու ծանր պատասխանատուութիւնը ըստանձնելէ և յաճախ ջանաց հաշտարար և մեղմ քաղաքականութեամբ սիրաշահել երկրի գլխաւոր երկու տարրերը և արգելել ազգային ու կրօնական ատելութիւնները և արժանապատուութիւնը գրգռելու բնութիւն ունեցող ամեն փորձերը։ Դժբաղդարար իւր քաղաքականութիւնն քաջալերը չստացաւ բարձրագոյն շրջանակներու մէջը և Կայսերքենիչ Գերիգ Սաադ—էդդին փաշային յանձնուեցաւ իրերու և դերերու փոփոխութիւն յառաջ բերել Վանայ մէջը։ Սա քաջալերեց քրդական յոռի միտումները, փաղաքշեց զանոնք և խրախուսեց քաղաքիս թիւրքերու մէջը կազմուած հակահայ գօմիթէները, որոց գլխաւորներն կոտորածին մէջը ունեցան խիստ տխուր դերեր։ Այս գօմիթէներն էին, որ տեսնելով հայոց կեդրոնական թաղերու ընդդիմադրութիւնը և մահմեդական խուժանին պատճառած կարևոր կորուստները, յարձակումներ գործել տուին Ն. Վսեմութեան տան վրայ, պահանջելով զինուորական օգնութիւն և մինչև իսկ սպանել տուին նորա գլխաւոր կուսակիցներէն Համդի պէյ անուն մի երևելի թիւրք, որ Շաքիրի խումբը ետ դարձնելու պաշտօնով անոր ընդառաջ ղրկուած էր։ Վսեմ. Նազըմ փաշայն կոտորածի միջոցին չը համարձակեցաւ դուրս ելնել տունէն թիւրք խուժանի կատաղութենէն վախնալով, մինչև որ ընդունուեցաւ իր տուած հրաժարականն։ Արդէն թիւրքերն կանուանէին զայն «Կեավուր—Նազարէթ փաշայ»։

Կոտորածի միջոցին և կոտորածէն յետոյ քաղաքացի և գիւղացի այրիներու, որբերու, կողոպտեալներու, այրեալներու և այլն ամեն տեսակ ղրկեալներու և թշուառներու ահագին բազմութիւն մը լեցուած է Ամերիկեան Աղքատախնամ յանձնախմբի վրայ, որք անօթի, հաց, հաց կաղաղակեն։ Ի՞նչ ընել, ի՞նչպէս կերակրել այդ 30,000-էն աւելի անօթիներու բազմութիւնը։ Յանձնախմբի տրամադրութեան ներքև գտնուած նիւթական միջոցներն սպառած են, և մանաւանդ աղէտի և անապահովութեան պատճառաւ ջրաղացներն դադրած լինելով, երբէք ալիւր չը գտնուեր, իսկ պատրաստելն անհնարին է։

Յանձնախումբին կը թելադրուի մի իմաստուն

խորհուրդ։ Հայոց կեդրոնական թաղերու ընդդիմութիւնը շարունակուի և խուժան տակաւին կարող եղաւ չէ մտնել հայոց այդ թաղերուն մէջը։ Ցանձնախումբն կը ծանուցանէ որ փոխանակ ալիւրը թոլու տանց մէջը, որ տնական ուրիշ ուտեստից և յարասեաց հետ պիտի կողոպտուի, եթէ խուժանն աջողի մուտ գտնել կեդրոնական թաղերու մէջը թող ունեցողներն փոխ տան յանձնախմբին։ Այսպիսով յանձնախումբն իւր տրամադրութեան ներքոյ կ՚ունենայ բաւական քանակութեամբ ալիւր, որվ կարող կլինի այդ տագնապալի միջոցին օրական հազիւ կէս կամ մէկ հաց բաշխել անձ գլուխ։ Իսկ քանի մ՚ օր ալ կարօտելոց հազիւ կարէի կլինի մատակարարել մի դգալ լափա — ցորեան և մսէ եփուած մի տեսակ ճաշ։ Այժմ ալ մեղացի կարօտեալներուն կը բաշխուի արդէն օրական մէկ հաց (100 դրամ։) առ իւրաքանչիւր անձ գլուխ։

Ցոսիսի դէպ ի վերջերը կառավարութեան հրամանա. բոլոր գեղացիներն իրենց տեղերը վերադարձուցուեցան բռնի, առանց ոևէ ապրուստի միջոց հայրհայթելու իրենց։ Խեղճերն մի ամսոյ չափ ապրեցան բոյսերով և ցորեանի թերհաս հասկերով։ Այժմ հունձքերն հասունցած են արդէն, գեղացիք ոչ բահ ունին, ոչ մանգաղ կամ գերանդի և ոչ փոխադրութեան կալսելու և ամբարելու համար պէտք եղած միջոցներ և անասունները։ Եւ ոչ ուստեքէ անկեղծ ջանք մը չերևէր վերադարձնելու և կամ օյլ միջոցներով գեղացւոց հայթհայթելու քանի մ՚ պէտք եղած անհրաժեշտ գործիքներ և անասունները, առանց որոց անշուշտ պիտի փճանայ, կամ թիւրք և քիւրդ դրացիներու ձեռքը պիտի անցնի յառաջիկայ հունձքն, որ շատ տարիներէ ի վեր նմանը չը տեսնուած աննման հունձք մը լինելով՝ գիւղացւոց միակ հարստութիւնն կը կազմէ։

Բաց ի Այգեստանի Արաբք և Նորաշէն և Քաղաքամիջի ս. Եկեղեցիներէն՝ բոլոր գաւառի և գիւղօրէից ս. եկեղեցեաց և վանօրէից մէջը այժմ լռած են եկեղեցական ժամերգութիւնք և կրօնական արարողութիւնք։ Եկեղեցիներն և վանքերն ամայի և աւերակ մոխրակոյտ մը կամ իսլամական աղօթատեղիներ դարձած, իսկ քահանայներն և վարդապետներն ալ սպանուած կամ մահմետական մոլլայ դարձած են։ Իսկ ատոնց մէջը աղօթող հազարաւոր հայ ժողովուրդն, փոխանակ հազարաւոր տարիներէ ի վեր եկեղեցեաց մէջը երգով ալէլուիայներու և մեղեդեաց, այժմ կը փառաբանէ Մահմեդը . . .

Իսկ մնացեալ հայ ժողովուրդն ալ նոր կոտորածի հաւանականութեամբ և երկիւղիւ պաշարեալ, նորանոր միջոցներ կը խորհի ազատելու իւր կեանքը և քրիստոնէական կրօնը։

Դ.

Կոտորած գիւղերու եւ կրօնափոխութիւններ.

Արդէն գիտենք, որ նախապէս պատուէրներ ու հրահանգներ ուղղուած էին Համիտիէին և բոլոր քիւրդ Աշերէթներուն, պատրաստ գտնուիլ քաղաքի և գիւղերու վերայ յարձակելու։ Երբ յունիսի 3-ին կոտորածն սկսաւ քաղաքի մէջ, պաշտօնական հեռագիրներն անմիջապէս ծանուցին զայն գաւառաց գայմագամներուն և անոնց միջոցաւ Համիտիէի և Աշերէթներու պետերուն, անշուշտ զանոնք ի գործունէութիւն մղելու համար։ Այսպէս ալ իւրաքանչիւր աւուր դէպքն հեռագրաւ կը ծանուցուէր գաւառներն։ Ուրեմն քաղաքի կոտորածն սկսելէն անմիջապէս յետոյ, սկսաւ նաև գիւղերու և գաւառներու կոտորածն, առաւել սաստիկ և անխնայ։

Բոլոր շրջապատ քիւրդ Աշերէթներու և Համիտիէյի հետ՝ դրացի գիւղերու, որպէս նաև քաղաքի քիւրդ, թիւրք և գնչու ժողովրդոց հարիւրաւոր անձանց խուժան յարձակեցաւ բոլոր հայ գիւղերու վրայ, և ամեն տեսակ զէնքերով, մահացուցիչ ամեն կերպ աներևակայելի տանջանքներով սպանեցին զով որ յաջողեցան ձեռք բերել. շատ մը տեղեր ալ առանց խտրութիւն ընելու առն կամ կնոջ, մանկան կամ ծերունւոյ։ Եւ վասնզի գիւղացի ժողովուրդն ալ Հայկավանքի և քաղաքի միւս թրքախառն թաղերու ժողովրդեան նման զուրկ կը գտնուէր ինքնապաշտպանութեան ամեն միջոցներէն, այս պատճառաւ ալ քաղաքի նոյն թաղերու նման շատ աւելի զոհ տուաւ կոտորածին։

Թէև երթևեկութեան դադարելուն պատճառաւ տակաւին չենք կրցած ամեն գաւառներէն և գիւղերէն ստանալ ճիշդ վիճակացոյցներ կոտորածի և աւերմանց, սակայն մեզի հասած քանի մ՚ վիճակագիրներէն, որպէս նաև մեր ստացած շատ մը տեղեկութիւններէն կարող եղած ենք ենթադրել որ՝ Վասպուրականի գիւղերու և գաւառներու կոտորածն, ի միասին առնելով նաև Վանը, 15—20,000-էն պակաս չէ, թէև ոմանք այդ թիւը կը հասցնեն մինչ 30,000-ի։

Կոտորածն ամենէն սաստկագոյն լինել կը թուի Արճէշի, Հայոց—Զորի, Գաւաշի և Կարճկանի մէջը։ Միայն Արճէշէն և Հայոց—Զորէն ստացած ենք վիճակացոյցեր, յորոց կերևի որ 1650 անձի կոտորած եղած է Արճէշի 15 գիւղերու և 850 անձի կոտորած Հայոց—Զորի 32 գիւղերու մէջը։ Արճէշի կոտորածի մծտաւորապէս կէսն կիներ և մանուկներ են։ Նոյնչափ և թերևս աւելի կոտորած տուած են Գաւաշ և Կարճկան գաւառներն։

Գրեթէ արու բնակիչ չէ մնացած Արճէշի Ասրաֆ, Բանոն, Գանձակ, Արմեղան, Տիլոն և Ցարութիւն գիւղերու մէջը, որոց իւրաքանչիւրին մէջը 150—

250 անձի կորուստ տեղի ունեցած է։ Միայն հրաչակաւոր աւաղակ և ոճրագործ Դայֆիւր 150-ի չափ մարդիկ սպանած է Հայոց—Զորի Կէմ և Անգղ և այլն գիւղերու մէջը։ Այս գիւղերէն քանիներն ալ բոլորովին աւերակ դարձած են, կորսընցուցած լինելով իրենց բոլոր բնակիչները, որպէս Մարկս, Պլթենց, Թրքաշէն, Աթանանց և այլն։ Դաւաշի Նարեկ պատմական գիւղին մէջը սպանուած են 200-ի չափ անձեր և անկէ աւելին Բէլու գիւղին մէջը։ Կը պատմուի թէ՝ միայն 3 մարդիկ կարող եղած են ազատուել Աղթամարի մերձակայ Փշաւանց գիւղէն և 7 մարդիկ Կարճկանի Ուրանց բաղմահայ գիւղէն։ Դաւաշի կոտորածի հեղինակներ և առաջնորդներն եղած են Կուլիխան—բէկ, որդիք Եիւսիֆ և Ապտիւլրահման և եղբայր Ահմատ խան և Խալիլ բէկեր, նորա արբանեակներէն Ապտիւլ Համիդ և եղբայր Ապտիւլ Կաֆիւր. վերջին երկուքն 200-ական անձինք սպանած են նոյն իսկ իրենց ձեռքով. Դախմանցի Օսման աղա և սորա եղբօր որդիք Հիւսէյին և Ապտիւլ Կաֆիւր. Ոստանայ միւֆթէն Սարէ գիւղացի մենլա Իբրահիմ և Ոստանցի Միր Մահմադ և Խուրշիդ աղաներն, Նոյնչափ մեծ կոտորած տուաւ նաև քաղաքիս կէս ժամ հեռաւորութեան վրայ գտնուող Շահպաղի գիւղն. այս գիւղին մէջը կոտորուեցան առաւել քան 160 անձինք։

Արճակ գիւղի կոտորածի պատմութիւնն ուշագրաւ է։ Այդ բաղմահայ գիւղն փոքր ի շատէ զերծ մնացած լինելով նախորդ աշնան աւերմունքէն, յօրէ անտի 130 զօրաց ջոկատ մը դրուած էր անդ գիւղի պահպանութեան անունով, զոր ութն ամիսէ ի վեր Արճակցիք պարտաւորուեցան կերակրել և շահել։ Երբ կոտորածն կսկսի գաւառին մէջը, ջոկատի հարիւրապետն և յիսնապետք կերդնուն, որ չը պիտի թողուն ոևէ վնաս հասնի Արճակին, երդում՝ որ շուտով կը մոռցուի, երբ 1—2 օրէն յետոյ անդ կիջնէ անցեալ աշնան կողոպուտները հաւաքելով տերերուն վերադարձնելու և գաւառաց մէջը բարեկարգութիւն վերահաստատելու պաշտօնով գիւղերը ղրկուած և վերջերը Ճուլամերկի կառավարչի փոխանորդ նշանակուած Վանեցի Դելավեր—զադէ Հասան փաշայն և ընդդէմ Թեմուրեանց կազմուած Թիւրք համանուն կուսակցութեան պետն (Թեմուրեան կուսակցութեան այժմեան պետն է Թեմուր—զադէ յայտնի Ղալիպ փաշայն)։ Արճակցիք ընդ առաջ կելնեն նմա և արտասովոր պատիւներով և յարգանքներով կը հիւրասիրեն։ Սակայն Թիւրք կուսակցապետն խիստ դաժան ընդունելութեամբ կը փոխարինէ անոնց յարգանքները։ Քիչ յետոյ 8 ամիսէ ի վեր գիւղի մէջը բանակող զօրաց ջոկատն կը վերցուի գիւղէն և կերթայ բնակելու մերձակայ Աղդաշ քիւրդ գիւղին մէջը։ Արճակցիք նախազգալով վտանգը, կը թողուն գիւղը և կը փախչին, ոմանք ալ կապաստանին գիւղի եկեղեցւոյն մէջը։ Անոց ետևէն կը հասնի համիտիյէն և թէ փախչողներն, թէ եկեղեցւոյ մէջ ապաստանողներէն 200-ի չափ անձեր կսպանէ, 60-ի չափ կիներ և աղջիկներ կաւանդէ, գիւղն ալ կը կողոպտէ։ Իսկ փախչելու թաղողները կը դիմեն մերձակայ Մղրէ քիւրդ իւղն և հոն մահմեդականութիւն ընդունելով զերծկը մնան կոտորածէն։

Այս առթիւ ի դէպ է յիշել որ՝ այդ գիւղաքաղաքներու և գիւղերու մէջը, ուր կը գտնուէին զինուորական կամ ոստիկանաց գունդեր, նոնք ամենայն եռանդեամբ կոտորածին և աւարառութեան մասնակցելէ յետոյ, խուժանի յարակմանց ալ առաջնորդած և հրահանգած են ընդ միշտ։ Հայտերանլը Աշերէթի ազգեցիկ պետերէն Ահմատ բէկ, հակառակ իրեն եղած յորդորանաց և որուած հրահանգներուն, թէ անցեալ աշնան և թէ այժմ, չուզեց մասնակցել Բերկրի գաւառի աւարառութեան և կոտորածին, որով նոյն աւառի հայաբնակ գիւղերն անցեալ աշնան աւարառութենէն զերծ մնացին։ Բերկրի պահապան զօրքն տեսնելով, որ Մահմատ բէկ այս անգամի կոտորածէն ալ ձեռնպահ կը մնայ, որով Բերկրի հայաբնակ գիւղերը, որպէս աւարառութենէ, նոյնպէս ալ կոտորածէն զերծ պիտի մնան, կսկսի կոտորել Խրծօթ բաղմահայ գիւղի հայ ժողովուրդը և աւարել գիւղը։ Այս տեսնելով քիւրդերն՝ իրենց ընդաղացութիւնն կը գրգռի, որով նոքա ալ կը մասնակցին Բերկրիի կոտորածին և աւարառութեան։ Արճէշի Ականց գիւղաքաղաքի կոտորածն և աւարառութիւնն ալ զինուորական հեծեալ ջոկատի մ՝ կողմէն կսկսի, որ նոյն օրն անդ հասած էր պահպանութեան համար։

Խեղճ գիւղացիք, անձնապաշտպանութեան միջոցներէն զուրկ լինելէ յետոյ, փախչելու ապաստանավայրեր ալ նուազ ունէին, որչափ քաղաքացիք։ Այն գիւղացիք՝ որք յաջողեցան փախչել, դիմեցին լեռները և կամ պարտաւորեցան սպհուրտել խոտերու և ցորեանի արտերու, այգիներու, այրերու, ճահիճներու, եղէգնոցներու և լիճերու մէջը։ Բայց շատ մը գիւղեր, որպէս Հայոց—Զորի, Թիմարի, Արճէշի և Արծկէի մէջը, այդ բնական ապաստանավայրերն ալ կը պակսէին։ Զուրեն ալով մատակայ լեռներ, ճահիճներ կամ լիճեր, իսկ ցորեանի և խոտի արտերէն ալ ապահով ապաստանավայր մը չը կրնալով շինել՝ խեղճերուն ուրիշ միջոց մը չէր մնար, այլ կամ սպանուիլ և կամ իսլամական աղօթատուները և Շէյխերու, Տերվիշներու և մենլաներու տուները ապաստանելով, բռնի և ակամայ ընդունել մահմեդական կրօնը, զերծ մնալու համար կոտորածէն. թէև գիւղերու և գաւառներու մէջ ալ գտնուեցան քիւրդ բէկեր, որք իրենց ճորտ կամ

մրիպայ եղող կարգ մը գիւղացւոց ապաստանարան տալէ յետոյ, նոյն շահասիրական և հեռատես նը-պատակներով պահպանեցին կոտորածէն քանի մ՝ գիւղերը կամ գիւղացիներու մի մասը։ Միայն Մոկացի խան—Մահմուդ զադէ Պէյթուլլահ պէյն է, որ մարդասիրական բարձր նպատակաւ, թէ անցեալ աշնան և թէ այժմ, պահպանեց ու պաշտպանեց ամբողջ Մոկաց գաւառը, որով Մոկք, ուիշ գաւառաց հետ բաղդատելով, աննշան կորուստ միայն ունեցաւ։ Կարժէ յատկապէս յիշատակել այս քիւրդ բէկի վեհանձն մարդասիրութիւնն, որ քաջ գիտենալով հայ ընթերցանութիւն և գիր, բազմիցս գրաւորապէս իւր ցաւակցութիւնը յայտնած է Մոկաց գաւառի թշուառ և ադքատ հայ ժողովրդեան վիճակի մասին և դարմաններ առաջարկած։ Պէյթուլլահ բէկն Վան կը գտնուէր, երբ քաղաքի կոտորածն սկսաւ։ Գուշակելով, որ իւր բացակայութենէն օգուտ քաղելով քիւրդ Աշերէթք, մեծ կոտորած պիտի գործեն Մոկաց մէջը, անմիջապէս մեկնեցաւ։ Վանէն Մոկք հասնելով իր շուրջը հաւաքեց 400-ի չափ քրդական բանակ մը և անով յետոյ մղեց Մոկաց վրայ քալող քիւրդ Աշերէթներու առուաւել սոսուարաթիւ խուժանը։ Սոյն բէկն անցեալ ձմրան ալ Մոկացի հայ կարօտելոց սոսուար խումբեր կերակրած ու հոգատարած էր, իր անձնական-նէն ծախսելով 250—300 լիրայ։

Միայն Վարագայ լեռն ապաստանարան եղաւ 5000-ի չափ գիւղացւոց, որք լեռան ստորոտի և Հայոց—Ձորի գիւղերէն իրենց տուար ու ոչխարներով ապաստանած էին Վարագայ ս. Խաչի թեւոց տակը։ Թէև ինչպէս պիտի տեսնուի, անոնք ալ ջերմ չը կրցան մնալ կոտորածէ։ Լեռը և կամ այլ տեղերը ապաստանեալներն օրերով ու շաբաթներով մնացին նօթի և ապրեցան միայն բոյսերով։ Ուանցիք և ծովեզերեայ շատ մը գիւղերու բնակիչք ալ ապաստանեցան նաւերու մէջը և ծովու վրայ ելան՝ ապաստանելով Լիմ և Կտուց կղզիներն։ Ասոնց թիւն ալ կը հասնի իբր 8000-ի։

Ինքնապաշպանութեան փորձեր տեղի ունեցան Հաղիւ մի քանի գիւղերու մէջը ու Արճէշի Ասրաֆ և Բանոն, Հայոց—Ձորի Հնդոտան գիւղերու, իսկ գլխաւորապէս Հադախի մէջը։

Արճէշի Ասրաֆ բազմահայ գիւղն, որ այժմ ամենամեծ կորուստ տուող հայ գիւղերէն մին է, անցեալ աշնան յաջողեցաւ զերծ մնալ աւերումէ։ Ինքնապաշտպան միջոցներու դիմելով։ Մերձակայ Բանոն և ուրիշ հայ գիւղերը իրենց ինքնապաշտպան այժերը հաւաքեցին Ասրաֆի մէջը և քաջ ընդդիմադրութիւն ըրին քրդական արշաւանաց, ընդդիմադրութիւն՝ որ մնաց աննուաճ։ Հայտերանը Էմին փաշայն, որ գիտէր այդ գիւղերու ինքնապաշտպան այժը և նախկին յաջող փորձը, մեծագոյն զօրութեամբ յարձակեցաւ անոնց վրայ։ Հայերն թէև նորէն ընդդիմադրեցին, սակայն իրենց այժերը ի մի հաւաքելու միջոց չունենալով, անկարգ անկարգ մնացին և հետևաբար շուտով նուաճուեցան։ Համիտիյէն մտաւ այդ գիւղերու մէջը և գործեց ամենամեծ աւերումներ և անգթութիւններ։

Առաւել տոկուն ընդդիմադրութիւն ցոյց տուաւ Հայոց—Ձորի Հնդոտան գիւղն։ Սա 2—3 օր ընդդիմադրեց, մնալով աննուաճ և քրդական արշաւանքները յետս մղելով կարևոր կորուստներով։ Նենգաւոր Համիտիյէն տեսնելով որ չէ կարող նուաճել այդ գիւղը զօրութեամբ, կը դիմէ դաւաճանութեան։ Կերդնու, քանի կը տայ որ եթէ Հընդոտանցիք յանձնուին, Համիտիյէն չը պիտի վնասէ անոնց։ Միամիտ հայերն անոնց խոստմանց հաւատալու դիւրահաւանութիւնը կունենան և կը յանձնուին։ Համիտիյէն ներս մտնելով կը կոտորէ 64 անձինք։

Հադախի ընդդիմադրութիւնն եղաւ աւելի բուռն և յաջող։ Հադախցի հռչակաւոր Կրաւեանն և այլն քիւրդ Աշերէթներն, իրենց գլուխը ունենալով նշանաւոր ոճրագործ Հաքիրը, մեծ զօրութեամբ կը յարձակին Հադախի Քաղ գիւղաքաղաքին վրայ և Վանայ Եյգեստանի նման այնտեղ ալ ծայրագոյն թաղերէն կսկսեն կոտորածը և կսպաննեն 60-էն աւելի անձեր։ Հայերն տեսնելով որ իրենցմէ ոչ մին ապատուելիք չունի կոտորածէն, կը կեդրոնանան ընդարձակ տան մ՝ մէջն և կընդդիմադրեն Կրաւեանց բուռն յարձակմանց, կարևոր կորուստներ պատճառելով անոնց։ Կրաւեանք կը կոզոպտեն գիւղաքաղաքի բոլոր հայոց տները, զորս կայրեն գրեթէ ամբողջութեամբ։ Կառավարութիւնն, կասկածելով որ հայոց ինքնապաշտպան կեդրոնին մէջը կը գտնուին օտարահպատակներ և փամփշտաւոր հրացաններ, քանիցս մարդիկ կը ղրկէ, որոնք անձամբ կստուգեն որ ինքնապաշտպաններն սոսկ տեղացիներ են, զինեալ միայն շեշխանէներով և պարզ հրացաններով։ Ցաջող ինքնապաշտպանութիւնն կերկարի և Կրաւեանք՝ անյաջող եղած՝ ամենամեծ ամբարշտութիւն և պարտեալ՝ կը թողուն պաշարումը և ետ կը քաշուին։ Այս տեսնելով ինքնապաշտպան հայերն՝ կը վստահանան և դուրս կելնեն իրենց ամրացեալ դիրքէն։ Սակայն տեղական կառավարութիւն՝ յորում Կրաւեանք մեծ ազդեցութիւն ունին՝ կարևոր պաշտօններ ձեռք բերած լինելով՝ կը խեղաթիւրէ իրողութիւնները և կը ներկայացնէ զայն նահանգական կառավարութեան՝ հակառակ ճշմարտութեան տեղեկագրելով՝ որ հայոց ամրացեալ դրից մէջը կը գտնուին օտարահպատակ անձեր և փամփշտաւոր հրացաններ։ Նահանգական կառավարութիւնն Հադախի ընդդիմադրական այժն ալ ջախջախելու նպատակաւ, զինուորական գունդի մ՝ հետը ի Հադախ կը ղրկէ երկու լեռնային թընդանօթները։ Սոքա Հադախ հասած ժամանակը,

յարձակումն և ընդդիմադրութիւն վերջացած և Շադախցիք իրենց կեդրոնական դիրքէն արդէն ելած լինելով, հայ ինքնապաշտպանք կը հաւաքեն իրենց շէշխանէները և միասին կը յանձնուին զինուորական իշխանութեան, յայտնելով որ իրենք Կայսեր կառավարութեան ընդդէմ ոևէ մեղադրելի նպատակ չունենալով, պարտաւորուած էին միայն ինքզինքնին պաշտպանել քրդական յարձակմանց և անմեղ անձանց կոտորածին դէմ։ Զինուորական գունդն և թնդանօթներն կը վերադառնան առանց բռնուն գործողութեան մ՝ ձեռնարկելու, միայն հայ ինքնապաշտպաններէն 28 անձինք կը ձերբակալուին և կը բանտարկուին։

Գիւղաքաղաքի առաջը անյապաղ ելնող Կրաւեանք, վերցնելով պաշարումը, իրենց պարտութեան և կորուստներու վրէժը կերթան լուծել Շադախի գիւղերու մէջը, յորս՝ ուրիշ դաւառաց գիւղերու նման, կը գործեն նոյնպէս մեծ արիւնհեղութիւններ և կոտորածներ անզէն և անպաշտպան ժողովրդեան մէջը։ Միայն Կաղպի գիւղին մէջը 47 անձինք կսպանուին, Կաճեղի մէջ ալ կարևոր թուով անձեր կը զոհուին։ Ճըշդիւ սորա նման, այն քիւրդ Աշերէթներն և մահմեդական խուժանն, երբ Այգեստանի կեդրոնական թաղերու վրայ գալով, չէին կարող ներս խուժել, այլ յետս կը մղուէին կորուստներով՝ կը վերադառնային շրջակայ և Հայոց—Զորի հայաբնակ գիւղերու վրայ, ուր մեծ կոտորած և արիւնհեղութիւն գործելով, իրենց քաղաքի պարտութեան և կորուստներու վրէժը լուծել կը կարծէին։

Այն գժոխային և՝ տանջալի մահացուցման տեսակներն, որք ի գործ դրուեցան քաղաքի կոտորածին մէջը՝ ճշդիւ գործադրուեցան նաև գիւղերու կոտորածին մէջը, այս տարբերութեամբ, որ մինչդեռ Այգեստանի ընդդիմադրութեան պատճառաւ, գրեթէ միայն Հայկավանքի, ս. Յակոբի և Կլոր—Դարի ժողովուրդն զոհ գնաց անոնց, ընդհակառակն գիւղերու մէջը, ընդդիմադիր անձնապաշտպանութեան բացակայութեան պատճառաւ, շատ աւելի թուով անձեր զոհուեցան, զանազան տեսակ տանջալի և սոսկալի մահերով բռնամահ լինելով։ Այդ օրինակ ճիւաղային մահացուցման օրինակները մենք արդէն տեսանք քաղաքի կոտորածին մէջը, որոց վրայ պէտք է յաւելուլ Արճէշի մէջը հայ քահանայի մ՝ ձիու պոչին կապելով և քաշտալով մահացուցման գարշելի օրինակը և հետևեալ ամենասխուժդուժ, ամենասոսկալի վայրագութեան զաղիր պատկերը։ Նադըր օղլի Ալի բէկ անուն քիւրդ աղայ մ՝ Արճէշի Գանձակ գիւղին մէջը 20-ի չափ մանուկներ և 10-ի չափ պառաւ կնիկներ կը լեցնէ հորի մ՝ մէջը և կսկսի քարկոծել զանոնք, այնպէս որ խեղճերն կը ծածկուին թանձր քարակոյտով մը և տակաւին քանի մ՝ օր ալ կը մնան ողջ. կը պատմուի թէ 2—3 օրերէ ի վեր հորի մէջէն կը լսուէին խեղճերու աղիողորմ, խեղդուկ ձայներն։

Մահմեդական խուժանն և համիտիյէն զանազան տեսակ քմահաճոյքներ ունեցած են Վասպուրականի կոտորածին մէջը։ Քաղաքի մէջը մենք տեսանք, որ խուժանի ատելութիւնն ուղղուած էր առաւելապէս արուներու դէմ։ Ցան մ՝ կամ թաղի մ՝ մէջը մտած ժամանակը, խուժանն կը զատէր կիներ և տղաներն և կսպանէր միայն արուները։ Միթէ չը տեսա՞նք, որ Ղալիպ փաշայն խեղճ Հայկավանցիները ի ներկայութեան կանանց և տղայոց խժդժաբար սպանելէ յետոյ, անոնց ջուր խմցնելու աստիճան բարի եղած էր, որպէս զի չը վախնան։ Արճէշի կոտորածին մէջը ընդհակառակն երբէք խտրութիւն չէ եղած մարդու կամ կնոջ, տղայի կամ ծերունիի. ամէնքն ալ հաւասարապէս և նոյն օրինակ խժդժական մահերով զոհուած են։ Իսկ միւս բոլոր դաւառաց և գիւղերու մէջը համիտիյէն և խուժանն նմանօրինակ վարմանց ենթեւեած են, սպանած այն ամեն արուները, զորս ձեռք բերել կարելի եղած է, չը խնայելով բազմիցս նաև կիներու և տղաներու։ Իսկ գեղեցկադէմ կիներ, հարսներ և աղջիկներն առհասարակ առևանգուած են։ Քանի մ՝ գիւղերու մէջը 30—50-էն աւելի կը համարուի առևանգեալ կիներու և աղջիկներու թիւն։ Հայոց—Զորի, Արճակի և շրջակայ ուրիշ գիւղերու գաղթականութիւնը Վան հասած ժամանակը նկատելի առաջին պարագայն էր, որ անոնք բաղկացած էին միայն տղայներէ և չափահաս կամ պառաւ կիներէ. մարդիկ սպանուած էին, իսկ երիտասարդ և գեղանի կիներ և հարսներն և մատաղ օրիորդներն առևանգուած էին։ Շատ մ՝ գեղանի կիներ՝ և աղջիկներ ալ երեսնին կաւով ծեփած, մազերնին կտրած էին, որպէս զի գեղեցկութենէն յայտնի չը լինի և չառևանգուին։ Առևանգեալներէն ոմանք այժմ կը վերադարձուցուին։

Որպէս քաղաքի, նոյնպէս ալ գիւղերու մէջը տեղի ունեցած են բռնաբարութեանց բազմաթիւ դէպքեր, որք կը ծածկուին առ համեստութեան։

Կոտորածին պատճառաւ գիւղացիք գիւղերնին թողած և զանազան տեղեր ապաստանած լինելով, բոլոր գիւղերն ալ օրերով ու շաբաթներով թափուր և բաց մնացին քիւրդ համիտիյի և խուժանի առաջը։ Սոքա անարգել մտան գիւղերը և կողոպտեցին թէ անցեալ աշնան աւարառութենէն զերծ մնացեալները և թէ արդէն կողոպտուածները։ Շատ մը գիւղեր, անցեալ աշնանէ մինչ ցայժմ երրորդ և չորրորդ անգամ լինելով, կը կողոպտուին։ Այլ ևս բան մը չը մնաց հայ գիւղերու մէջը. եթէ անցեալ աշնան աւարառութենէն տակաւին բան մը մնացած էր կարգ մը գիւղերու մէջը և կամ այն օրէն ի վեր եթէ գիւղացիք յաջողած էին իրենց պանդուխտներու կամ զանազան օգնութեամբ ձեռք բերել ուտեստ, երկրագործական գործիք կամ անասուն՝ ամէնն ալ կողոպտուեցան, շատ տեղեր մինչև իսկ անասնոց թրիքն ալ տարուեցաւ։

Կողոպուտէն յետոյ ալ այրեցին շատ մը գիւղեր ամբողջովին և կամ գիւղի մէջը նշանաւոր ու երկյարկ տները. իսկ միւս շատ մը գիւղերու տանց դռները խորտակուած, առաստաղները քակտած և կարևոր շինութիւնները տարած են։

Կողոպտուեցան նոյնպէս գրեթէ բոլոր գիւղաքաղաքներու կրպակներն, ինչպէս նաև գիւղերու

մէջը գտնուած շրջիկ մանրավաճառներն։ Ասոնց մէջը Արճէշի Ականց գիւղաքաղաքի շուկայն։ Վանայ շուկայէն յետոյ։ Նահանգի մէջը երկրորդ կարևոր շուկայն էր և ունէր բաւական բանուկ վաճառականութիւն։ որ գրեթէ ամբողջովին հայոց ձեռքը կը գտնուէր։ Այս տեղը գտնուող Վանեցի և Բաղէշցի վաճառականներէն ալ 30-ի չափ անձինք սպանուեցան. իսկ մէկ մասն ալ կրօնափոխութիւն ընդունեցին։ Ձերծ մնացողներն։ ժամանակ մը Թիւրքերու տանց մէջը պատսպարուելէ յետոյ։ կառավարական տնօրէնութեամբ աստ վերադարձան։

Այն գիւղացիներն։ որք զանազան տեղեր ապաստանելով։ կարող եղած էին զերծ մնալ կոտորածէն։ պարտաւորուեցան ընդունել մահմեդական կրօնը. մանաւանդ անոնք՝ որք կոտորածի ժամանակն ապաստանավայր ընտրած էին մահմեդականաց աղօթատեղիները և կամ նոցա կրօնաւորաց տուները։ Այսպէս՝ այսօր մահմեդական կրօնի անուան պաշտպանութեան ներքև մնած են Արճէշի։ Արծկէի։ Գաւաշի։ Կարճկանի։ Խօշապի և Հայոց—Ձորի շատ մը գիւղերն։ Արդէն գիտենք։ որ անցեալ աշնան ռոնի մահմեդականութիւն ընդունող Խիզան։ Սպարկերտ։ Կարկառ և Մամրտանի գաւառներն։ հակառակ ուժ ամիսէ ի վեր տարուած ջանից։ չեն յաջողած վերադարձնել ի ծոց քրիստոնէական ս. Եկեղեցւոյ։ Եթէ շարունակուին կեցող հանգամանքներն։ որպէս անցեալ աշնանէ ցայսօր։ և իրաց վիճակն անփոփոխ մնայ։ անտարակոյս ասոնք ալ վերջնական կերպով կորսուած պիտի լլինին հայութեան համար։ Ո՞ր հայն պիտի համարձակի ուրանալ նորաստաց մահմեդական կրօնը և վերադառնալ քրիստոնէութեան։ ինչ որ յաչս մահմեդական խուժանին և մանաւանդ կրօնականներուն պիտի նշանակէ ծաղր և արհամարհանք մահմեդական կրօնի։ Թէև այսօր կառավարութիւնն զանոնք պաշտօնապէս մահմեդական չը ճանչնար։ վասն զի օրինական ձևակերպութեան տեղի ունեցած չեն։ սակայն այնուամենայնիւ հայերն պիտի մնան յոչ պաշտօնէ մահմեդականներ։ նոցա հետ պիտի աղօթեն։ խնամութիւններ պիտի հաստատեն յակամայից։ մինչև իսկ պիտի թլփատուին։ մինչև որ հանգամանաց բերմամբ կամ կարող լլինին անվախ վերադառնալ ի ծոց Մայրենի Եկեղեցւոյ և կամ օրինական ձևակերպութեանց լրմամբ։ պաշտօնապէս ճանչցուին իբր մահմեդական։ Արդէն ուրեք ուրեք սկսած են թլլփատել։ Հակառակ պարագային այն հայն։ որ համարձակի այսօր վերադառնալ ի ծոց քրիստոնէութեան։ անկասկած իւր վրայ պիտի հրաւիրէ մոլեռանդ վրէժինդրութիւնը։ Ո՛չ ոք չը պիտի համարձակի առ այդ։ Մահմեդականացեալ ժողովրդեան թիւն պակաս չէ քան 30,000 անձ։ որոնք այժմ։ իբր նշան մահմեդականութեան։ գլուխներ ճերմակ շորով մը փաթաթած և վրանին դաշոյն մը կապած են։ Գտնուեցան շատ մը հայեր ալ։ որք մահմեդականութիւնը ընդունելէ յետոյ։ նորէն չը խնայուեցաւ իրենց՝ սպանուեցան։ Ասոնք կերևի պէտք եղած վստահութիւնը չէին կարողացած ներշնչել տալ իրենց նոր հաւատոյ անկեղծութեան մասին։

Մահմեդական խուժանն իւր կատաղութիւնը ամենէն աւելի թափեց հայ վանօրէից։ եկեղեցեաց։ դպրոցաց և մատենադարանաց վրայ։ Ասոնք այսօր առհասարակ աւերակաց կոյտեր դարձած են։ մանաւանդ գիւղերու և գաւառներու մէջը։ Աղթամարի վանուց դրսի տունն։ ուր՝ բացի եկեղեցական անօթներէն և ծանրագին սպասներէն ու սփռոցներէն։ կը գտնուէր վանուց բոլոր հարստութիւնն։ կողոպտուեցաւ։ և Աղթամարեան միաբանութիւնն քրդական նաւերու յարձակումէն փախնելով։ պարտաւորեցաւ թողուլ կղզին և ապաստանել ի Կոտուց։ Կողոպտուեցան և մեծաւ մասամբ այրեցան Նարեկի։ Վարագի։ Կարմրաւորի։ ս. Խաչի։ ս. Գրիգոր Լուսաւորչի։ Մեծոփայ։ Անգղի ս. Աստուածածնայ։ Սպիտակ վանուց ևն։ մեծ ու փոքր վանօրայք։ և վանահարք ու միաբանական անդամք ալ մեծաւ մասամբ սպանուեցան։ Կողոպտուեցան դարձեալ Լիմ և Կոտուց անապատներու դրսի տներն և ս. Էջմիածնի վանքն։

Նարեկի վանահայր և հանգուցեալ կաթուղիկոսի եղբօրորդի Տ. Եղիշէ վարդապետի գլուխն կտրուելով։ շուներու առաջը կը ձգուի։ որք զայն կը տանեն մինչ Վրկինէս քիւրդ գիւղն։ Վարագայ միաբաններէն սպանուեցան Տ. Արիստակէս Տէվկանց և Տ. Ցարութիւն վարդապետներն։ ուրիշ միաբաններ և ժառանգաւորաց վարժարանի աշակերտներէն երկուքն։ Վանահայր Տ. Դանիէլ վարդապետն արդէն քաղաքի մէջը սպանուած էր։ Դարձեալ սպանուեցան Էջմիածնի վանուց վանահայր Տ. Կարապետ և ս. Խաչի վանահայր Տ. Ցակոբ վարդապետներն։ Իսկ Երէմերուի վանուց վանահայր Տ. Մարտիրոս քահանայի մարմիներ ողջամբ։ վառուած թոնիրի մէջը հրելով։ խորովեցին չարաչար։

Կողոպտուեցան դարձեալ վանօրէից և եկեղեցեաց եկեղեցական թանկագին սպասներն։ անօթներն։ սփռոցներն ևն։ որոց գումարը կը կազմէ ահագին հարստութիւն։ Միայն Նարեկի և Վարագայ վանուց կողոպտած շարժական և անշարժ հարստութիւն կը հասնի իբր 5—1000 լիրայի։ Թողունք նշանաւոր հնութիւնները։ հին ձեռագիրները։ մատենադարանները։ որոնք կողոպտուեցան և կամ բզիկ բզիկ կտրտուեցան։ Նարեկայ վանուց մէջը գտնուած կենաց փայտի մասունքն և ուրիշ զանազան մասունքներն ալ գերուեցան. իսկ ս. Գրիգոր Նարեկացիի գերեզմանն ալ խորտակուեցաւ։ Այսօր գօրքեր և ուրիշ թիւրք կամ քիւրդ աւարառուներն կը բերեն ու կը ծախեն։ կամ ջարդել կը տան արծաթեայ և ոսկեայ ծանրակշիռ սկիհներ։ խաչեր։ գաւազաններ։ թագեր։ բուրվառներ։ արծաթապատ կամ ոսկեպատ աւետարաններ ևն։ Ոչ ոք չը համարձակիր առնուլ այդ սրբութիւնները սրբապիղծ ձեռքերէ։

Հանգոյն վանօրէից այրուեցան ու կողոպտուեցան շատ մը գիւղական եկեղեցիներն ու դպրոցներն։ սպանուեցան քահանաներն և ուսուցիչներն։ Ասոնց մէջը յիշատակութեան արժանի են Աւանց գիւղի եկեղեցին։ որոց երկու քահանաներն ալ սպանուեցան։ Արդամէտ։ Ծառըստան։ Եկմալ և այլն գիւղերու նորաշէն եկեղեցիներն ու դպրոցներն։ Մինչև իսկ քանի մ՝ տեղեր ալ հին քարուկիր տաճարները։ զորս կարելի չէր այրել։ քանդուած են աւերիչ ձեռքերէ։ որպէս Ցայնկոյսներ եկեղեցւոյ տաճարն։

Քաղաքի նման գիւղերու մէջն ալ սպանուած դիակներն երկար ժամանակ։ շաբաթներով։ մնացին անթաղ։ գիւղերու։ հրապարակներու կամ տանց մէջը։ ճամբաներու ու լեռներու վրայ։ ու կեր եղան շուներու։ գազաններու և թռչուններու։ Շաբաթներ յետոյ միայն։ երբ գիւղացիք գիւղը վերադարձան։ անճանաչելի դիակներ։ կամ կեր եղած ու կրծուած ոսկորներ միայն գտան ու թաղեցին։

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

ՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿՈՏՈՐԱԾԻ ԵՒ ԱՒԵՐՄԱՆՑ

Թիւ շրջանակներու·	Շրջանակք·	Կողոպտած տունք·	Ամբարուած թագեր·	Այրուած տունք արժէքով·	Սպանուած Այր·	Սպանուած Կին·	Վիրաւորք·	Վախէ կամ խեղճութենէն մեռնող	Գողցուած	Ծրագրերի·	Անհայտացած կամ գերեցուած·
				Լիրա·							
1	Հայկավանքի շրջանակը·	237	6	12ա·=1920	248	16	5	19	7	0	17
2	Ս. Յակոբի	230	9	36 = 3885	69	1	13	15	25	2	2
3	Յայնկուսների	496	8	183=17010	45	6	8	15	130	0	6
4	Նորաշինի	71	8	3 = 120	9	0	0	69	164	1	0
5	Արարքի	456	9	120=19990	136	4	7	30	181	2	6
6	Քաղաքամէջը	24	5	0 0	12	1	3	0	13	0	0
6	Գումարը	1514	43	356=42925	519	28	36	148	520	5	31

Զանազան թաղերու մէջը սպանուած գիւղացիք իբր	150
Սպանուած կանանց թիւն	28
Կորուսածներն, որոց ալ կորուսած լինելն կասուգուի	520
Վախէ և խեղճութենէ մեռնողք	148
Ընդհանուր գումար քաղաքի մէջը կորսուած, սպանուած և մեռած անձանց, որոց իբր 15-ը 2—10 տարու տղայներ են սպանած և 6 ալ քահանայներ,	1365

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ·

ՎԻՃԱԿԱԳՐԵԱԼ ԳԱՒԱՌԱՅ ԿՈՏՈՐԱԾԻ ԵՒ ԱՒԵՐՄԱՆՑ·

Թիւ կոտորածի գաւառաց	Գաւառք	Կողոպտեալ եւ աւարակոծ եկեղեցիք	Քարուքանդ եղեալ	Սպանուած· Այր·	Սպանուած· Կին·	Սպանուած· Մանկ·	Վիրաւորք	Անհայտացեալք եւ ըստացեալք	Գերեալք	Ծիծաղափրիք	Կառուցեալ եկեղեցի	Վերակառուցեալ կամ կառուցեալ վանք
1	Հայոց-Ձոր . . .	32	14	738	53	—	35	25	154	5616	6	5
2	Արճէշ	16	—	815	339	432	—	200	—	160	—	—
3	Հադամ	13	2	185	9	—	13	—	—	—	—	—
	Շեղան	5	1	53	15	—	—	—	—	—	—	—
4	Թիմար	17	2	264	6	—	52	22	—	200	—	5
5	Վերին Խոշապ . .	4	—	64	—	—	15	2	—	70	—	—
	Ներքին » . .	7	—	250	33	—	27	50	—	80	—	1
6	Գաւաշ	15	10	429	—	—	—	—	—	50	—	5
7	Վանայ շրջակայք .	7	4	62	3	—	2	2	—	—	2	4
8	Բերկրի	8	—	34	—	—	—	—	—	—	—	—
8	Գումար·	125	33	2894	458	432	141	301	154	6176	8	20

Սպանեալ կրօնականք . . .	33
» կանայք	458
» տղայք	432
Կորուսեալք	154
Համագումար	3971
Սպանեալք և կորուսեալք . .	1365
Համագումար	5336

Ասոնցմէ ի զատ միւս գաւառաց սպանելոց մէջն ալ բազմաթիւ տղայք կըգտնուին որոց մեռած լինելն հաւանական է անձանց կորուստնին ի գաւառս տես քաղաքին վիճակագիրն անձանց կորուստ են ի գաւառս և ի քաղաքս

ՊԱՐՍԿԱՀԱՅՔ·

(Թղթակցութիւն Արարատի)·

Սեպտեմբերի վերջին օրերը Վեհափառ Կաթուղիկոսի կոնդակով և յանձնարարականով հասայ Մակու։

Մակու Նախիջևանայ և Շահթախթի հանդէպ տարածուած Պայազիթի ընդարձակ դաշտագետնոյն արևմտեան բարձրութեան վերայ մի երկար և խոր ձորի մէջ է. երկու կողմից անհպելի ժայռեր բարձրացած, արեգակի դէմ բռնած են, այնպէս որ ժամը 9—9½ հազիւ արեգակի երես տեսայ։

Մակու իւր շուկայով փոքր ինչ քաղաքի ձև առած է. խաներն ունին հոյակապ պալատներ, իսկ ժողովուրդն աննշան կապրին, որոնք ուրիշ գործ չունին գրեթէ, մեծ մասամբ խաներու ծառայելով կապրին. իսկ հայեր, որք 70 տան չափ են, փոքր թուով առևտրական և մեծաւ մասամբ արհեստաւոր, բաւական համեստ ապրուստ ունին և պատիւ խաներու մօտ՝ իրենց գործունէութեամբ և հաւատարմութեամբ, թէև մի տեսակ բարոյական ճնշում զիրենք սառնարիւն դարձուցած է. այս մասին չափը անցուցած են՝ սովորութիւն դարձած է իրենց մէջ ամեն բանի պէլի (այո) ասել, չնայելով որ խաներն աւելի հայերու խօսքին կը հաւատան, քան թուրքին։

Խաներն բազմաթիւ են, իւրաքանչիւրն ունի իւր ապարանքը, սակայն կղզիացած դրութեան մէջ կը գտնուին, չունին դրսի հետ յարաբերութիւն. Թղթատուն և հեռագիր չկայ, բժիշկ և դեղատուն չկայ։

Խաներն ամարանոցներ ունին, այդ ամարանոցներու մէջ ևս ապարանքներ. Անծուկ, Բարան և Օղակ գեղջ մէջ գտնուած փառաւոր ամարանոցներ տեսայ, նոյնպէս շատ գիւղերու մէջ. Թիմուր խանի ամարանոցն Անծուկ գիւղի մէջ է, երկար տարիներ սկսած է շինել և դեռ չէ աւարտած։

Թիմուր խանին, որոյ Սարդար ևս կասեն, այս Անծուկի (Պաղչաճուկ) ամարանոցին մէջ ներկայացայ, արդէն մի օր առաջ Վեհափառի յանձնարարականը յղած էի նորան։

Խանը գործերից դադարած՝ պալատի ներքին յարկը լուսամուտի մէջ նստած էր ծնկաչոք, դէպի առաջ երեսն բարձին կրթնցուցած լուսամուտից դուրս կը նայէր՝ հրամաններ կտար ձիապանին, որ ձիերն մի առ մի իրեն ներկայացնեն, տեսնէ թէ ինչ կերպ պահած են՝ ուրիշ ծառաներու ևս այլ հրամաններ կտար. զինքն այն վիճակի մէջ տեսայ, որ իւր գործերու ամեն բանին անձամբ հասու պիտի լինի, մանրամասն ամեն ինչ գիտէ և գիտնալու հետամուտ է. նա ուժեղանմեայ մի պատկառելի ծերունի է, կարճահասակ, նիհար և թխադէմ է. նորա հրամաններն անթերի պիտի կատարուեն։ Թիմուր խանի սահմաններու վերայ խոնուած են քրդեր, որք Հայաստանի մէջ գտնուած քրդերից աւելի քաջ, աւազակ և անվեհեր են. զարմանալի է թէ Թիմուր խան որպէս զսպած է այս քրդեր. Հայաստանի մէջ քրդեր ցեղ ցեղի դէմ կը պատերազմին, շատ անգամ տեսնուած է որ փաշաներն չեն կարողացած արգելել, իսկ Թիմուր խանի հողի մէջ չէ տեսնուած այդպիսի մի բան՝ Հայաստանի մէջ քրդեր արիւնը ծով շինեցին, իսկ Թիմուր խանի իշխանութեան ներքև մի հայի քիթ չարիւնեցաւ. վերջապէս ինչ ասեմ, ամենէն աւազակաբարոյ քուրդն նորա սարսափի ներքոյ արիւնաքամ կը լինի։

Խանին ներկայացուցին դալիսն, սկսաւ ծխել և հարցնել Վեհափառի տարիքը և նորա առողջութիւնը, ապա սկսաւ պատմել հայերու և գաղթական հայերու վերայ տարած խնամքը. այլև պատուիրեց Վեհափառ Կաթուղիկոսին գրեմ այն, ինչ որ ճշմարիտ է ևն. ևն. ապա հետևեալ օր հրաման գրեց Պէպէճուկի ժողովրդեան (սրբոյն Թադէի առաքելոյ վանքը այդ գաւառակի մէջ կը գտնուի) որ զիս պաշտօնապէս ճանաչեն վանքի կառավարիչ։

Հոկտ. 1-ին մեկնեցայ Մակուից և 7 ժամէն հասայ սրբոյն Թադէի առաքելոյ, մեր նախկին Լուսաւորչի անուամբ կառուցած վանքը։ Վանքը տեսայ փառաւոր և հոյակապ. ունի հին և նոր շինութիւն, հինը խորանն և դպրաց կեցած տեղն է, իսկ նորն, որ մի դար առաջ Սիմէոն արքեպիսկոպոս կառուցած է, դրսից բոլորովին սպիտակ քարով, որ և դիւրատաշ է. ունի ճիշդ ս. Էջմիածնայ ձևն ու մեծութիւնը, և որի կաթուղիկէն երկու տեղէ ճեղքուած է։ Սիմէոն արքեպիսկոպոս եկեղեցւոյն կից մի զանգակատուն ևս սկսած, ներքին կամարներն կապած ու կիսատ թողած է. այս զանգակատունը տակաւ առ տակաւ քանդուելով եկեղեցւոյ արևմտեան մասը ևս իւր հետ խոնարհեցնելու վերայ է։

Եկեղեցիս կառուցանելու համար շատ մեծ ծախք եղած է. նորոգելու համար ևս բաւական գումար պէտք է։

Նոր մասն եկեղեցւոյս կառուցուած է այն ժամանակ, որ այս կողմերն ամբողջ հայաբնակ էին, որպէս քարերու վերայ գրուած յիշատակագրերն կը յայտնեն։

Եկեղեցւոյս հին մասն 2կէ թուականին շինուած է. մեր և Մակուայ միջավայրն գտնուած լեռան կողի վերան կապի կիրճն կայ, ուր մեծ ժայռի մի վերան կը տեսնուի արձանագրուած 2կէ

թուական և «Հիշխանութեամբ Տէր Զաքարին», Ձեռագիր աւետարանի յիշատակարան մի ևս տեսայ, Տէր Զաքար անուամբ Աղթամարայ կաթուղիկոս մի կը յիշէ նոյն թուականով։

Վանքի շուրջն պատած են Էջմիածնայ խցերու ձևով խցեր, որք 50-ի չափ կան, ունին բաւական թուով ներքնադարաններ, աշտարակներ, սակայն կիսաւերակէս փլած են, ցարդ մէկը չէ նորոգուած. հին պարսպից դուրս արևմտեան կողմն կայ նոր պարիսպն, ուր զետեղուած է ձիթհանքն, անամնոց գոմեր, երկրագործական տուն ևլն. նրանք բոլորովին փլած են բացի ձիթհանքէն, որն ևս փլելու վերայ է։

Վանքի շուրջն եղած է անտառ, իսկ այսօր 50—60 ծառ հազիւ մնացած է. քանի տարի առաջ ունէր ջրաղաց, այն ևս չկայ, 3—4 վերստ յարևելս հեռաւորութեան վերայ վանքի լաւ հողերն անմշակ մնալով, նաև անտէր, անցած են թուրքերու ձեռք, որ այսօր 100 տուն երկրագործի բաւական է. այժմ ևս վանքը բաւականին ընդարձակ հողեր ունի, սակայն գութան և ոյժ պէտք է մշակելու համար։

Վանքը եկամուտ չունի, երկրագործութեամբ պիտի շէն մնայ. երեք գիւղ ժողովուրդ ունի. վանքի գիւղն (30 տուն) որ կը ծառայէ Փարաճուլա խանին, միայն վանքի հունձը ձրի անելու պատրաստ է։ Քիշմիշ թափա, որ 60 տան չափ կան, 3 խալուար ցորեան պտղի կտան վանքին, իսկ մակուեցիք 70 տուն՝ 40 մանէթ։

Եթէ կարգին երկրագործութիւն արուի տեղս, վանքը կարգի կը մտնէ, աւերակներն տակաւ առ տակաւ կը կանգնին, նաև կարգին դպրոց մի ևս կը պահուի։

Վանայ կողմից միշտ գաղթականներ կգան տեղս այնպիսի վիճակի մէջ, որ վանքը ստիպեալ պիտի օգնէ, այնպիսի տեսարանի մէջ, որ տեսնողին սարսուռ կազդէ. մէկ քանի ընտանիքի պաշտպաններն մեռած, երեխայքն մնացած են երեսի վերայ, մէկ քանին հիւանդ՝ ոչ այս ոչ այն կողմ կարող են գնալ։ Անցեալներն ձիւն եկաւ. հինգ ընտանիք մերկանդամ լալով վանքս հասան։ Ապաղայի մէջ երեք տեղ կողոպտած էին զիրենք քրդեր, ցուրտ բնակարանի մէջ յարդով և խոտով հազիւ կարողացանք պատսպարել։ Այս օր վանքի դուռն արևածագին 30—40 երեխայք և աղջկունք արեգակի դէմ փռուած էին սնկռտալով. նոյնչափ կանայք և հարսունք։

Ցաւալի են կարգ մի կանայք, որք այրերնին զոհ տուած, երախաներով են շրջապատուած. ի՞նչ պիտի անեն, ո՞ւր պիտի գնան՝ իրենք ևս շուարած, բանականութենէ հեռացած, անասուն դարձած են. ի՞նչ անեն, այստեղ հայ գիւղեր չկան, որ մի տեղ պատըսպարան գտնեն, մուրան ու ապրին։ Վանքն ևս անկարող, բայց մի և նոյն ժամանակ ինչ որ կարող է անել, ձեռքէ չէ թողած, զի այս վանքը այս կըզգիացած վայրն ըստ կարելւոյն փրկիչ դարձաւ գաղթականաց։

Քսան տուն գաղթականներ զետեղուեցան Գըրքբուլաք գիւղն, ուր պատսպարան գտան և սերմ սերմանեցին, քուրդ Պահար խանի պաշտպանութեան ներքև. նոյնչափ մի ևս զետեղուած են Մլան՝ Թիմուր խանի ձեռաց տակ։

Ս. Հայկունի։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՇԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Կոնդակ Օրհնութեան և գոհունակութեան յանուն Տ. Գիւտ քահանայի Աղանեան, վասն անթերի և ճիշդ կատարման հրամանաց Նորին Սրբութեան և մատուցանելոյ ըզճիշդ և զօրինաւոր հաշիւս նորոգ գնեալ մեքենայից Տպարանի Մ. Աթոռոյ. թ. 1463.

— Յանուն Տ. Հմայեակ վարդապետի Արշարունւոյ, որով կարգի խնամակալութիւն մի վասն գաղթականաց՝ Յիգդիր. թ. 1472.

— Օրհնութեան յանուն Նորին և ժողովրդոց Սուրմալւոյ գաւառին վասն խնամելոյն զգաղթականս. թ. 1474.

— Յանուն Տ. Հմայեակ վարդապետի Արշարունւոյ, որով շնորհի նմա խաչ լանջական ականակուռ. թ. 1484.

— Օրհնութեան յանուն ժողովրդոց Ալէքսանդրապոլ քաղաքի վասն խնամելոյ զգաղթականս. թ. 1509.

—Օրհնութեան յանուն Աւագ խանի Շահպազեան ի Մակու. թ. 1521.

— Յանուն Տ. Աբրահամ Վարդապետի Ռշտունւոյ, որով շնորհի նմա խաչ լանջական ականակուռ. թ. 1534.

— Ցանուն Տ. Կարապետ քահանայի Տ. Կարապետեան Քեալքեանջ գեղջ, որով շնորհի նմա խաչ քահանայական. Թ. 1535.

— Ցանուն Սինոդի ս. Էջմիածնի, որով ազատ համարի Տ. Յակովբ քահանայն Այվազեան Շիրվանձուղ գեղջ յապաշխարանաց. Թ. 1536.

—Ի նոյն անուն, որով Տ. Խորէն վարդապետն Մխիթարեան կարգի ի վանահայր Հաղարծնի վանուց. Թ. 1545.

—Ցանուն Տ. Վրթանէս Ծ. վարդապետի Տ. Սարգսեան, որով շնորհի նմա խաչ լանջական ականակուռ. Թ. 1560.

— Ցանուն Եփրոսինեայ սարկաւագուհւոյ Անապատին ս. Ստեփաննոսի Տփղեաց, որով շնորհի նմա խաչ լանջական քահանայական. Թ. 1606.

— Ցանուն Մանիա սարկաւագուհւոյ նոյն անապատի ի նոյն միտս. Թ.1607.

— Ցանուն Գեր. Փոխ—Թեմակալին Երևանայ Տ. Ներսէս Եպիսկոպոսի, որով թոյլատրի նմա բանալ միդասեան եկեղ. Ծխակ. դպրոց ի Փոքր Արքիսուալի գեղջ. Թ. 1641.

— Օրհնութեան յանուն Աղէքսանդրի Տ. Մկրտչեան Թայիրեան՝ վասն 3000 ռ. նուիրին յանուն վերաշինութեան Մայր Տաճարի. Թ. 1652.

— Ցանուն Տ. Հմայեակ վարդապետի Տ. Սարգսեան, որով շնորհի նմա խաչ լանջական ականակուռ. Թ. 1657.

— Օրհնութեան յանուն Համբարձումայ Խուրշուտեան ի Կորիս. Թ. 1691.

— Օրհնութեան յանուն Գէորգայ Լիանոզեան ի Մոսկվա՝ վասն նուիրելոյն 1000 ռ. յօգուտ գաղթականաց. Թ. 1690.

— Օրհնութեան յանուն ժողովրդոց Թեմին Հայոց Շամախւոյ, որով կարգի Գեր. Տ. Կարապետ եպիսկոպոսն Այվազեան ի պաշտօն առաջնորդութեան նոյն Թեմին. Թ. 1698.

ՎՐԻՊԱԿ

ՈՒՍՈՒՄՆ. ՎԱՐՁԱԿԱՆ ՑԱՆՁՆԱԾՈՂՈՎ

Արարատի նոյեմբեր համարում 530 եր. երկրորդ էջ տպուած է՝ «պ. Գրիգոր Նշայեան Ե. կարգի ուսուցիչ», պիտի լինէր «Ի կարգի».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՑԱԿԱՆ

1. Անփառունակ տարավերջը . . . Կ. Վ. 537
2. Աստուծոյ Արքայութիւն տանող արդարութեան ճանապարհը . . . . . Կ. Վ. 550
3. Լեւոն ԺԳ. Պապը 544
4. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ 555

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

5. Երբ լռում եմ ես . . . Ց. Յովհաննիսեան 552
6. Հաւատում եմ . . . . . .
7. Եղիշէի եւ Մակաբայեցւոց գրքերի յարաբերութեան խնդիրը . . . . . Ս. Ց. 555
8. Ներսէս Ե.-ի Թուղթը 555
9. Ժողովրդական գրականութեան բեկորներ . 556

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

10. Ազատ պարապմունքներ եւ արհեստներ Ս. Մ. 560
11. Միջնադարեան դպրոցները . . . Ս. Ց . 567
12. ՄԱՆՐԱԼՈՒՐՔ 568

ԱԶԳԱՑԻՆ

13. Հոգեւորականի առաջնորդող գաղափարը Կ. Վ. 569
14. ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ 573
Մայր Աթոռ. . . . . .
Շամախու Թեմ . . . . . .
ՏԱՃԿԱՀԱՅՔ . . . . . .
ՊԱՐՍԿԱՀԱՅՔ

ՊԱՀՊՏՕՆԱԿԱՆՔ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.
ՑԱՒԵԼՈՒԱԾ.
ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ
ԺԱՆՈՒՑՈՒՄՆ.
ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՅԱՒԵԼՈՒԱԾ ԱՐԱՐԱՏԻ 1896 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ.

ԽՈՍՐՈՎ

ԳԱՆՁԱԿԵՑԻ

Խոսրով Գանձակեցու վկայութեան պատմութիւնը ունէինք մենք Ցայսմաւուրքում,* առանց տարեթուի։ Աւգերեանն իւր ընդարձակ Սրբոց—Վարքում (հատոր 12-դ) համառօտում է այս նահատակի պատմութիւնը, առնելով Ցայսմաւուրքից։ Զգիտեմ որտեղից է Աւգերեանի մէջ բերած այս վկայի նահատակութեան սխալ թուականը՝ «յամի 1399—ՊԽԸ»։ Նահատակութեան ճիշտ թիւը շատ աւելի կանուխ է։ Հայոց ՈԺԶ—1167 Փրկչ.։

Մեր հրատարակած այս վկայաբանութիւնը ժամանակակցի գործ է և նոյն 12-դ դարի ձեռագրից։ Այդ ձեռագիրը մեր մատենադարանի № 939,6 ճառընտիրն է, որի մասին ընդարձակ գրելու արդէն առիթ ենք ունեցել (տես մեր «Ագաթանգեղոսի Աղբիւրներից» յօդուածը, Արարատ, 1896, սեպտ.)։ Ճառընտրի գրութեան թուականը, ինչպէս կարծում ենք ապացուցած լինել, է ՈԼԵ—ՈԼԶ [=1187], ուրեմն հազիւ քսան տարի նահատակութիւնից յետոյ։

Վկայաբանութիւնը նահատակութիւնից միայն մի քանի տարով ուշ է գրուած։ Վկայաբանութեան հեղինակը, թէև ոչ ականատես նահատակութեանը, սակայն ականատես է սրբի նշխարների տեղափոխութեանը. «իսկ զկնի անցելոց երկուց ամաց փոխեցաւ ի մատուռն ի նոյն տեղւոջ գերեզմանացն։ Եւ ի փոխել նորա ականատես եղաք, զի ոչ էր այրեալ կապանք ձեռացն և ոչ մազ մի ի գլխոյն ծախեալ»։

Վկայաբանութիւնից յետոյ դնում ենք միևնոյն ձեռագրից Մխիթար Գոշի Ներբողեանը, դըժբաղդաբար թերատ և պատառոտուն։ Ներբողի պատմական մասը առնուած է վկայաբանութիւնից և մեզ թւում է հաւանական, որ վկայաբանութեան հեղինակն էլ նոյն ինքն Մխիթար Գոշն է, որն և հաւանականաբար առաջին անգամ կարգեց կատարել Խոսրով Գանձակեցու տօնախմբութիւնը, ինչպէս այդ երևում է Ներբողեանի ակնարկներից։ Շատ հին ժամանակներից սովորութիւն էր, որ վկաների յիշատակի օրը կարդացւում էր նրանց նահատակութեան պատմութիւնը և ապա ներբողեան կամ դրուատ։ Սովորաբար թէ ներբողեանի և թէ վկայաբանութեան հեղինակը միևնոյն անձն էր լինում. բաւականանք իբրև օրինակ յիշելով Խորենացու անուամբ մեզ հասած Հռիփսիմեանց Պատմութիւնը և նոյն կոյսերի Ներբողեանը։

* Իմ ձեռքում եղած Ցայսմաւուրքը ունում է յուլիսի 3-ին, Աւգերեանը յուլիսի 2-ին։

Ճառընտրի համրակ գրչին՝ Մխիթարին՝ պէտք է վերագրել տեղ տեղ պատահող լեզուի անհարթութիւնները և ոչ թէ հեղինակին՝ Մխիթար Գոշին։

Մի հատուած Ներբողեանում կարօտ է բացատրութեան։ Գոշը բառախաղով Մահմետին անուանում է Հետ մահու, այն է՝ ճանապարհ կամ շաւիղ մահու. Մահումետ—մահու հետ. Այս մըտքով պէտք է հասկանալ, իմ կարծիքով, Ներբողեանի ասացուածը. «և [ոչ] հաւանիմ մոլար ձեր օրինացդ և զհետ դամ հետին մահու, զի այդ է անուն մոլորեցուցչին ձերոյ»։

Մեր ազգի պատմութիւնը, ահա 1200 տարի է, մի անընդհատ կռիւ է, մի արիւնոտ և անհաւասար ուժերով պատերազմ մահմետականութեան դէմ։ Այդ կռւում ընկած նահատակները՝ բացի սրբեր լինելուց Քրիստոսի եկեղեցում՝ մեր պատմութեան ամենափառաւոր հերոսներն են։

Մի ռամիկ գիւղացի տղայ, առանց առուտուրի մտնելու իւր խղճմտանքի հետ, առանց հրապուրուելու զանազան խոստումներից, յանձն է առնում մահ, հաստատ մնալով իւր համոզմանը։ Ահա մարդկային գործերից ամենից բարձրը, ամենից վեհը . . .

Գանձակ քաղաքում, նրա եկեղեցիներում և նրա շրջակայքում, երևի պահուած կըլինի այս նահատակի յիշատակն ու անունը։ Մեր հրատարակութեան նպատակն է, բացի մատենագրական—պատմական խուզարկութիւնից, նորոգել այդ յիշատակը։

Գալուստ Տ. Մկրտչեան

25 դեկտ. 1896.

ՎԿԱՅԻ ԹԻՒՆ

ՍՐԲՈՅՆ ԽՈՍՏՐՈՎՈՒ

ՄԵԾ ԵՒ ՓԱՌԱՒՈՐԵԱԼ [ՎԿԱՅԻՆ]

ՈՐ ԿՈՉԻ ՆՈՐ ՆԱՀԱՏԱԿ

ՈՐ ՎԿԱՅԵԱՑ ՅԱՇԽԱՐՀՆ ԱՂՈՒԱՆԻՑ Ի ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆ

ՈՐ ԿՈՉԻ ԳԱՆՁԱԿ

[Զ. էջ 479b]

Ի ժամանակս բռնակալութեան [Ծ]ղեմացւոց, յորում վաղ ուրեմն բարձեալ էր թագաւորութիւնն Հայոց իսպառնպուռ, և անտերունչք* շրջէին մնացորդք իշխանաց, որ ընդ բնաւ աշխարհս վարատեա[լ]ք, ոչ հնա-

* Զ. Անդերունչք.

զանդելով միմեանց, մանաւանդ այնոքիկ, որ բնակեալ էին յամուրս աշխարհին Արցախայ, աւազակաբար կելով ի լերինս և ի զերծ տեղիս, և յանցս ճանապարհաց նստելով՝ առնուին կապուտ կողոպուտ յամենայն ազգաց, յորս յաղթե(ա)լն կարէին։ Եւ նեղութիւն ոչ սակաւ հասուցանէին քրիստոնէից, հարկս խնդրելով։ Զոր ի դէպ է այժմ և մեզ ասել։ Ոչ գոյ ի ժամանակի յայսմիկ իշխան և առաջնորդ որ հովուէ, և այլն։

Զայնակցէ մարգարէն ողբոցս։ Առնոյր առնէր ոք զգլուխս իմ ի շտեմարանս ջուրց և զաչս իմ աղբիւր արտասուաց, զի նստե[ա]լ լայի ի տուէ և ի գիշերի զթշու[առու]թիւն ազգիս մերում և զցրուեալն ընդ ամենայն ազգս վաճառակուր լեալ։ Եւ ոչ կացեալք ի կայի,* այլ ըստ նմանութեան ալեաց ի մրրկաց ծովու յուզեալք, և ոչ հասեալք ի նաւահանգիստ։ Քանզի ինքեանք զայն ախորժեցին վասն առաւել նենգաժետութեանն և կրծելի պիղծ բարուց իւրեանց, որք լաւ համարէին ի սարկութեան կալ ամենայն ազգաց, քան թէ հնազանդել միմեանց և կեալ յազատութեան։ Վասն այսորիկ նեղեցան և տառապեցան յանաւրէն և յամբարիշտ ազգաց, յորդւոց Քետուրայ և Իսմայէլի, և յԵղեմացւոց։ Որոց առաւել ծանր էր քան զերկաթ լուծ անրոյ նոցա ի վերայ քրիստոնէից, մանաւանդ յաշխարհին Պոնտացւոց, որ վասն առաւել հարկապահանջութեանն վաճառէին զորդիս իւրեանց և տային ի գինս փրկանաց անձանց։ Եւ բազում էր ամպրոպ խռովութեան ամենայն ուստեք յամենայն տեղիս։ Քանզի զաստուածաշէն եկեղեցիս, որ փոխանակ դրախտին տուան** մեզ, տապալէին, զվանորայս ի հիմանց քակէին, զմատրունս վկայիցն անասնոց տեղի պատրաստէին։ Զպատուական արս անարգէին, և իմաստունքն յոչինչ համարեալ լինէին։ Եւ բազումք ի քրիստոնէից թուլանային ի հաւատոց ըստ յառաջագոյն գուշակելոյն Պաւղոսի, եթէ ի ժամանակս յետինս քակտեսցին մարդիկ ի հաւատոց, և հայեսցին յայս[ս] մոլորութեան։*** ԱՆ

* Զ. ,,ի սահ'' կամ ,,ի կահ'' Ս=Ն. այս տառերը բոլորովին նման։

** Զ. տուաւ.

*** Զ. եւ հայեսցին յայս մոլորութիւն հմմտել. Ա. Տիմ. Դ. 1.

և թագաւորն Վրաց, որ էր սահմանակից տանն Աղուանից, կամեցաւ անբնակ առնել զաշխարհն ի մարդոյ և յանասնոյ, [480a] մանաւանդ զբերրի և զարգաւանդ* երկիրն Ուտիացւոց յաւեր դարձուցանէր։ Եւ այս լինէր վասն ծովացեալ մեղաց մերոց, որք ոչ վարեցաք ըստ իրաւանց և ըստ արդարութեան։ Քանզի հայրապետք արծաթով առնէին ձեռնադրութիւն, նոյնպէս քահանայապետք և քահանայք։ Որպէս ասաց Յսայի՝ Քահանայն և մարգարէն յիմարեցան։ Եւ յայնչափ յանդգնութիւն հասին, մինչ զի և մարդիկ աշխարհական, որ ոչ ունէին զաւծումն քահանայութեան, այլ և կանայք նոցա վերատեսուչք լինէին եկեղեցեաց։ Եւ ամենայն ոք համարձակ գործէր զչարիս, և ոչ ուսանէք երկիւղ, և ոչ յանդիմանութիւն։

Յայսպիսում ժամանակի յանկարծակի ծագեաց իբրև զաստղ մեծապայծառ նոր վրկայն Քրիստոսի Յոստրով։ Բայց աւրինակ վկայութեան նորա է այսպիսի։ Էր սուրբն Յոստրով քրիստոնէեայ ի քրիստոնէեայ ծնողաց, յաշխարհին Առանայ, հուպ ի քաղաքն, որ կոչի Գանձակ։ Եւ տակաւին մանուկ գոլով** ուշիմ և հանդարտ կայր զդուշական կենաւք։ Իսկ բարիատեացն սատանայ, որ մարտեաւ ընդ Ադամայ ի ձեռն կնոջն, յարոյց պատերազմ ի վերայ պատանւոյն այսպիսի աւրինակաւ։ Այր մի ի փոքունց և յաննշանից պարսիկ, որ բնակեալ էր ի գաւառին Առանայ առ սահմանաւք ժառանգութեան քաղաքին մեծին Գանձակայ, ի գեւղի միում Արխանաշէն կոչեցեալ։ Կէսքն ի նոցանէ քրիստոնեայք էին, և կէսքն հեթանոսք։ բարեկամք և սիրելիք գոլով միմեանց ըստ մարմնոյ։ Եւ ունէր պարսիկն ուստերս և դստերս, այլ յայլմէ ծնեալք ի կնոջէ։ Իսկ մի յորդ[ւ]ոց նորա ցանկացեալ քեռն իւրում՝ որ ոչ էին համահայր, որ և բռնադատե[ա]լ զաղջիկն՝*** շնացաւ, և յղանալն երկեաւ յոյժ, մի գուցէ իմասցին ծնողքն և սպանցեն։

Բայց զի յառաջագոյն տռփեալ էր նա պատանւոյն Յոստրովու, զի էր ամենագեղեցիկ

* Զ. զարգեւանտ.

** Զ. գովով.

*** Զ բռնայդատել.

տեսլեամբ, խարտե[ա]ղ հերով, կարմիր և սպիտակ գունով։ Եւ զի էին դրացիք միմեանց, և միշտ տեսանէր ի մտանելն և յելանել՝ և լինէր յորժամ հանդիպէր մանկանն առանձինն, բանս պատիրս փաղաքշելով խաւսէր ընդ նմա, զի թերևս կարասցէ գլորել զնա, զի մի՛ յայտնեսցին գործք նոցա չարութեանն և սպանցին։ Եւ զայս առնէր ոչ մի անգամ, այլ բազում անգամ։

Իսկ պատանուոյն սրբասիրի և ողջախոհի, ոչ խոտորե[ա]լ ամենևին ի բանս աղջկանն, այլ կայր՝ և հանդիսանայր ընդդէմ չարին, որպէս Յովսէփն այն ի հնումն, կամ ևս վեհագոյն ասել, եթէ ոչ յանդգնութիւն իցէ. քանզի նա յետ այնր առաքինութեան ընդ ամուսնութեան աւրինաւք եմուտ և մանկունս ծնաւ զՆփրեմ և զՄանասէ, այլ սա զայժմու ժամանակիս զանցուցեալ արութեամբ, եմուտ ի սքտագիտնն առնլով ըզբ[ր]աբիոնն յաղթութեան։

Իսկ իբրև գիտաց հայր աղջկանն* [480b] եթէ յղի է դուստրն նորա ի շնութենէ, ի խոշտանգանս** արկանէր զդու[ս]տրն և հարցանէր. Ո՞վ բռնադատեաց զքեզ ասա՛ ինձ։ Իսկ դուստրն սատանայի և հին զէնն, որ ըստ իւրաքանչիւր ժամանակաց բազում չարեաց պատճառ եղև մարդկան ազգի, զրպարտեաց զմանուկն Յոստրով, կարծելով եթէ այնու պատճառաւ ազատիցի և զկամս ցանկութեանն լցցէ, զի խոշտանգեալ*** ուրասցի և առցէ զնա ի կնութիւն։

Վա[ս]ն այսորիկ մատնի դատաւորին բարէ յաղթ վկայն Քրիստոսի Յոստրով։ Եւ հրամայեաց արկանել զնա ի բանդ. և կացեալ ի բանդին ամսաւրեայ աւուրս սակաւապէտութեամբ, անսուաղ անցուցանելով և աւրհնելով զաստուած։

Եւ հրաման դատաւորն զկնի աւուրցն այնոցիկ հանել զնա ի բանդէն։ Եւ եկեալ ծնաւղք սրբոյն առաջի արկանէին զալիս, զծերութիւն, զհոգեխառն սնունդն, որով զնա սնուցին։

Եւ մայրն ասէ. Ողորմեա՛ թշուառացեալ մաւրս, և մի՛ մատնիր ի ձեռս արիւնարբու գազանացն։ Նոյնպէս և հայրն աղիողորմ արտասուաւք և հառաչանաւք ասէր. Ցանձն առ որդեակ առաջի տեսնին, և միայն զերծիր ի տանջանացդ և ի մահուանէդ։ Եւ տարցուք զքեզ յաշխարհն Վրաց, և անդ համարձակութեամբ պաշտեա զՔրիստոս։

Իսկ նորա ի բաց դարձուցեալ զերեսն՝ ոչ ընդունէր զասացեալսն ի նոցանէն։ Եւ իբրև գիտացին զհաստատուն և զանյողդողդելի միտս մանկանն, ի բաց գնացին լալով։ Եւ զայս լուեալ դատաւորն ասէ. Ցերեսցուք սմա սակաւ աւուրս, զի թերևս խրատեալ եկեսցէ յուղղութիւն։ Եւ դարձեալ հրամայեաց արկանել ի բանդ, և խորհէր թէ զինչ արասցէ սրբոյն։ Եւ կացեալ ի բանդին այլ ևս աւուրսն ութ՝ ոչ եկեր և ոչ արբ յաւուրսն յայնոսիկ։ Եւ ի կատարել աւուրցն այնոցիկ հրաման ետ և ածին առաջի դատաւորին։

Խաւսել սկսաւ դատաւորն և ասէ. Յոստրով, մի՛ մոլորիր տարապարտուց։ Դարձիր և հաւանեա և տաց քեզ ոսկի բազում և զաղջիկն զայն ի կնութիւն և այլ ևս մեծութիւն։ Ապա թէ ոչ կամիցիս լսել ինձ՝ բազում և անհնարին տանջանաւք չարչարեցից զքեզ։

Սուրբն ասէ. Պարգևք քո ընդ քեզ լիցի ի կորուստ. ես Քրիստոսի հաւանեալ եմ իմում թագաւորին, որ արար զերկինս և զերկիր, զծով և զամենայն որ ի նոսա։

Դատաւորն ասէ. Խնայեա ի մանկութիւնդ քո և արա զոր ասեմ քեզ. լե՛ր ընդ մեզ և որդի իմ կոչեսցիս, և կեաց. ապա թէ ոչ ապականեմ զքեզ քո վայելուչ։

Սուրբն Յոստրով ասէ. Ասացի քեզ և դարձեալ ասեմ, եթէ ո՛չ եմ լսելոց ձերոց յաւդապատիր խաբէութեանցդ. զի թէ վաղ և թէ անագան, սակայն մեռանելոց եմ։

Դատաւորն ասէ. Հրո՞վ այրեցից զքեզ, եթէ ոչ դարձցիս յայդպիսի յամառութեանց։ [481a] Յոստ[ր]ով ասէ. Ո՛չ կարես այնպիսի հուր պատրաստել, զոր Քրիստոս պատրաստեալ է մեղաւորաց և այնոցիկ, որ իբրև զձեզդ իցեն ամբարիշտք։

Դատաւորն ասէ. Գոնեա հաւանեա՛ Մահմետի, որ զայս աշխարհս ետ մեզ և անդ զդրախտն։

* Զ. աղջկանն.
** Զ. խոշտանկանս
*** Զ. Խոշտանկեալ.

Սուրբն ասէ. Զկենդանին ուրանալ տաս ինձ և մահկանացուաց երկիր պագանել, որ ինքեանք մոլորեցան և զձեզ մոլորեցուցին յուղիղ ճանապարհէն։

Եւ բարկացեալ դատաւորն հրամայեաց երկուց զինուորաց կապել զերանելին ձեռս յետս և դնել անուր երկաթի ի պարանոց նորա և շրջեցուցանել ընդ քաղաքն ի տեսիլ ռամկին։ Եւ բազումք ի հեթանոսաց զարմանային ընդ համարձակութիւն և ընդ անփոփոխելի միտս սրբոյն, և թէ որպէս սնոտի յուսով մեռանի։

Զկնի այսորիկ եհատ ի վերայ նորա դատաւորն վճիռ, զի քարկոծ լիցի. գիտացեալ զհաստատուն միտս նորա։

Եւ առեալ զնա ամբոխին՝ հանին արտաքոյ քաղաքին ընդ կողմն հիւս[ի]սոյ ի տեղի մի քարուտ, առ եզերբ դետոյն ցամաքելոյ։ Այլ և քրիստոփնեայք, որ էին ի քաղաքին, ելեալս առնէին զմիմեամբք թագնաբար, զի տեսանեն զնահատակութիւն սրբոյ վկային։

Եւ իբրև ածին զերանելին ի տեղին՝ ուր հանդերձեալն էր կատարիլ՝ խաւսել սկսան դարձեալ ըստ հրամանի դատաւորին և ասեն ցսուրբն. Մի՛ յամառիր իբրև զմանուկ, այլ լո՛ւր մեզ և արա զկամն դատաւորին, և մեք աղաչեմք զի ներեսցէ քեզ. միայն հաւանեա դենիս մերում և թողցէ քեզ զամենայն անարգանսն, զոր յաճախեցեր առաջի նորա։

Ասէ սուրբն. Ո՞ւմ արդեաւք տայք ինձ երկիր պագանել, կախարդի՞ն և մոլորականի՞ն և մեռեալ շա՞ն։

Եւ մրմռեալ իբրև զդազանս վայրենիս և կրճտեալ զատամունս իւրեանց ի վերայ նորա՝ զան հարկանէին զնա յանխնայ։ Եւ կապեալ զնա ընդ ծառոյ միոյ թթենոյ—բայց յառաջ քան զկապելն ծունր կրկնե[ա]լ կայր յաղաւթըս և ասէր. Զքեզ Քրիստոս փառաւորեմ հանդերձ Հարբ և ամենասուրբ Հոգ[ւ]ովդ—և բարբարոսացն դրդռեալ զմիմեան[ս]՝ քարեակիզ լինէին ի սուրբն, և կայր երանելին իբրև զդառն ի մէջ գայլոց։ Ոչ ոք էր, որ ողորմէր, և ոչ ոք, որ ի թիկունս հասանէր, այլ ամենեքեան յեկացն և ի բնակացն Պարսից, իբրև շունք կատաղեալք, թափէին ի նա զնեռս յանդիմանութեան։

Եւ ի թանձրութենէ քարանցն, որ իբրև զտեղատարափս զեղուին ի վերայ սրբոյն՝ ջախ-ջախե[ա]լ առհասարակ ոսկերքն և յաւդքն քակտեալ ի միմեանց, և պատառ պատառ մարմինքն յերկիր անկանէին։ Եւ սուրբն աւանդեաց զոգին ի փառս Աստուծոյ, ըստ գրեցելոյն. Ոգիք արդարոց ի ձեռին աստուծոյ են։

[481b] Եւ ապա յետ այսորիկ հրաման ետ բռնաւորն, և եդին առասան ի պարանոց երանելոյն, և[ետ] քարշել ընդ հրապարակս արտաքոյ քաղաքին փողոցացն քրիստոփնէից, իբրև յաղթութիւն մեծ զիրսն համարելով։

Իսկ զկնի այսորիկ եմուտ սատանայ ի սիրտ բռնաւորացն, զի հրով այրեսցեն զմարմինս երանելոյն, և ընկեցեալ ի հուրն ոչ այրեցաւ։ Եւ ի գիշերին յայնմիկ եկեալ ծնողք սրբոյն բարձին զնշխարս վկային և եդին ի հասարակաց գերեզմանս քրիստոփնէից գեղջն, անգիտանալով զարժանիս վկային, միանգամայն և զարհուրելով ի բռնաւորացն։

Իսկ զկնի անցելոց երկուց ամաց փոխեցաւ ի մատուռն ի նոյն տեղ[ւ]ոջ գերեզմանացն։

Եւ ի փոխել նորա ականատես եղաք, զի ոչ էր այրե[ա]լ կապանք ձեռացն, և ոչ մազ մի ի գլխոյն ծախեալ։ Որ և նշխարք վկային յերկաքանչիւր տեղիսն առնէր բժշկութիւնս բազումս ի փառս աստուծոյ. վասն զի զփառաւորիչս իւր փառաւորէ աստուած աստ և ի հանդերձելումն։

Բայց եկեսցուք և ի տեսիլ աքանչելի* լուսոյն, որ երևեցաւ ի վերայ նշխարաց սրբոյ վկային, երևեալ ոչ հաւատացելոց միայն, այլ և անհաւատիցն։ Ո՜չ միանգամ այլ և երկիցս։ Եւ է աւրինակ առաջնոյն այսպիսի։

Սովոր իսկ էին պարսիկ[ք] գեղջն յաւուրս պահոց իւրեանց բերել աղաւթակոչ, զի ի գիշերի ձայնիւ զարթուսցէ զնոսա յաղաւթս։ Նմանապէս և ի տուընջեան ժողովիցէ։

Եւ եկեալ մշակն անաւրէնութեան՝ գայլն արաբացի՝ ի գիւղն ուր էր հանգստարան սրբոյն Թոստ[ր]ովու, և յարուցեալ ի գիշերի միում կամեցեալ զուրացութեան բարբառն

* Ձ. զքանչելի.

հնչեցուցանել առ նոսա, ելանէ ի տեղի մի բարձրաւանդակ և տեսանէ նշան սքանչելի ի վերայ գերեզմանի սուրբ վկային, լոյս սաստիկ որ առաւել զանցանէր զլուսաւորութեամբ արեգականն։ Եւ յահէն ըմբռ[ն]եալ ոչ կարէր ամենևին խաւսել, այլ անկեալ դնէր կիսամեռ մինչև ցառաւաւտն։ Եւ ի վաղիւն եկեալ գտին զնա զի կայր անշունչ իբրև զմեռեալ։ Ապա հարցանէին զնա պարսկաստան[ե]այքն, եթէ ի գիշերիս յայսմիկ ընդէ՞ր ոչ յարեար և զմեզ յարուցեր, զի վասն այնորիկ կոչեցաք զքեզ, զի աղաւթս արասցես և զմեզ յորդորեսցես։

Իսկ նա հաղիւ ուրեմն ուշաբերեալ,** կաց պատմեաց զտեսիլ գիշերոյն և նոքա յոյժ զարմացան, և երթեալ պատմեցին դատաւորին։ Եւ դատաւորն սաստեալ ի վերայ նոցա, զի մի՛ յայտնեսցեն զսքանչելի տեսիլն մեծ, զոր տեսին։ Եւ առաքէր զմի ոմն ի ծառայից իւրոց զանխլաբար պատուէր տուեալ, զի մի՛ ոք գիտասցէ։ Եւ եկեալ ծառայն ըստ հրամանի դատաւորին հսկէր զգիշերն ամենայն. և տեսանէ ի մէջ գիշերի լոյս համապայծառ ի վերուստ փայլեալ ի վերայ հանգստարանի սրբոյն։ Եւ յահի եղեալ և ի դողման՝ ոչ զաւրէր նայել ընդ ճառագ[482a]այթս լուսոյն, որ ելևեցաւն։ Եւ ի վաղիւն ահիւ և դողութեամբ երթեալ ի քաղաքն պատմեաց զտեսիլն մեծասքանչ և զարմանալի։** Իսկ պիղծ և անաւրէն դատաւորն զլանալ կամեցաւ զսքանչելի մեծութիւնն, զոր լուաւ ի ծառայէն, նոյնպէս և զառաջինն՝ զոր ի բազմաց լուաւ։

Յետ այսորիկ ոմանք յանհաւատից ըստ պատահման հատին զծառն, յորում կապեցաւ սուրբ վկայն, զի այրեսցեն։ Եւ տեսեալ քահանայի միոյ՝ ետ փոխանակ փայտ յայրել և առ. և զկարծիս առեալ ոչ տային։ Եւ պատճառաւ հաւանեցուցանէր. և ուրախ եւ լինէր, զի և յառաջ իսկ կամէր և ոչ իշխէր. և այս ի տեառնէ պատահէր։ Եւ տարեալ եդ ի գաւիթս եկեղեցւոյն, և բազում բժշկութիւն առնէր կեղև նորին յառաջ և զկնի հատանելոյն։ Բազումք և յանհաւատիցն առնուին ի բժշկութիւն։

Զկնի ինչ աւուրց անցանելոյ՝ տեսեալ ի հեռաստանէ հաւատացեալք լոյս իջեալ ի վերայ գաւթին, և եկեալ պատմէին քահանային։ Եւ այլք ի հաւատացելոց տեսիլս պատմէին, որ մերձ էին յեկեղեցին, եթէ ասէր ի տեսլեան գիշերոյ՝ եթէ Զիս խաչ ձևացուցեալ աւրհնեցէք և անուն դիք սուրբ Ստեփանոս։ Եւ լուեալ զայս քահանայն անյապաղ կատարէր։ Եւ զկոփուածս փայտին զբաւանդակն առնուին ի բժշկութիւն, որովք ոչ սակաւ բժշկութիւն կատարէր Տէր ի փառս իւր և ի գովութիւն վկային՝ կուրաց և այլոց ախտից։

Իսկ զզրպարտիչ վկային, զկինն պիղծ, դատապարտեաց Տէր ստէն ըստ արժանի իւրոյն գործոյ։ Քանզի ծնաւ ծնունդ այլանդակ, խառն ինչ մարդոյ և գազանի, և ի նմին սատակի. որով և ծանուցաւ բազմաց հաւատացելոց և անհաւատից արդարադատութիւն աստուծոյ։ Եւ այլքն ևս չարաչար կրեցին անցս ազգատոհմ նորուն կնոջ. ոմանք ի դիւէ լլկեալք, և այլք բնաւին բարձեալ եղեն մահուամբ, և ոչ ծնաց և ոչ ոք յազգատոհմէ նորին։

Կատարեցաւ սուրբ վկայն Քրիստոսի յաշխարհին Առանայ, ի մայրաքաղաքին որ կոչի Գանձակ, ի թուականին ԹԺԶ. յամսեանն արաց, յերրորդ աւուր, ի գլուխ յիսներեկի պահոց Վարդավառին. ի թագաւորութեանն յունաց Կեւռ Մանուիլի, և յիշխանութեանն հայոց Թորոսի, որ էր պատուեալ կեսարոսական պատուով ի թագաւորէն յունաց. և ի վրաց՝ Գեորգե[այ] և յիշխանապետութեանն Հասանայ որդւոյ Վախթանգայ կողմանցն Խաչենոյ։* Ի հայրապետութեան տեառն Գրիգորիսի և Ներսիսի հարազատ եղբարց Հայոց Մեծաց։** Եւ տանն Աղուանից տեառն Ստեփանոսի, և տէր Յոհանիսի եպիսկոպոսի քաղաքին Գանձակայ։

Եւ յիշխան[ա]պետութեան Արևելիցն Ելտկուզին. և ի թագաւորութեանն Նղեմացւոց և Պարսից՝ Ասլանշահի։ Իսկ ի մեզ թագաւորելոյ Յիսուսի Քրիստոսի տեառն մերոյ, որ[482b]ում վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

** Ձ. ուշայքներեալ.

** Ձ. ,,զարմանանալի''

* Ձ. ,,խաչելոյ''.

** Ձ. ,,Տաց մեծաց'' կամ ,,Տաղց մեծաց''։ Ո=Ր։

Ծան. Մխիթար Գոշի Ներբողեանը տեղի սղութեան պատճառաւ մնաց յաջորդ համարին։ ԽՄԲ.